Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Մերլեր
276,279

II 3/44.

№ 13/XIII

Ստեփաննոս Պօղոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Աստրախան

2003

ՓՈՒՆՋ

I.

276

ՐԱՖՖԻ

(Յ. Մելիք—Յակոբեան)

Ստեփաննոս Պօղոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Աստրախան

ՓՈՒՆՋ

I. Հատոր

Բանաստեղծութիւններ

ԹԻՖԼԻՍ

Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆ

1874

4325

Дозволено цензурою. Тифлисъ, 13-го Октября 1873-го года.

48278

ՀՍՍՌ Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվ.

276-2003

(7704-57)

ՆՈՒԷՐ

Ձեզ, հայոց օրիորդներ,
Նուիրեմ այս փոքրիկ փունջ,
Թէեւ չէ նա հոտաւէտ,
Բայց մի արէք դուք տրտունջ։

Մեր աշխարհի թառամած,
Գունատ, ցամաք վարդերէն,
Ես հիւսեցի իմ փունջը,
Զուրկ թարմ ծաղկանց զարդերէն։

Քանզի անգութ վիճակը
Աւերեց մեր բուրաստան,
Էլ հոտաւէտ, գոյնզգոյն,
Ծաղկունք չունի Հայաստան . . .

Րաֆֆի

«Ձեզ եմ ասում՝ ձեզ, հայոց նորահաս երիտա-«սարդք, ձեր անունին մեռնեմ, ձեր արևին ղուր-«բան, տասը լեզու սովրեցէք, ձեր լեզուն, ձեր հա-«ւատը ղայիմ բռնեցէք: Մէկ դարտակ լեզուն ինչ «ա, որ մարդ չը կարենայ սովրել: Բաս չէք ուզել, «որ դուք էլ գրքեր գրէք, ազգի միջումն անուն թո-«ղաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր «անունը յաւիտեանս յաւիտենից մնայ անմահ։»

Վէրք Հայաստանի։

Ստեփաննոս Պօղոսեան
Աստրախան

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Երբ հանդիպում ես մի հայ օրիորդի, որ, Ժօրժ—Սանդի կամ Տուրգենևի ռօմանը խառնած, դառնում է օտարազգի ընթերցարանից, հարցնում ես նրան՝—Օրիորդ, ի՞նչու չէք կարդում հայերէն: Պատասխանը լինում է՝ կամ մի արհամարհական ժպիտ և կամ—„Ի՞նչ կարդամ:

Ի՞նչ կարդայ, կրկնում ենք մենք, Նարե՞կ, Եղիշէ՞, թէ Խորենացի՞: Դոցա լեզուն այնքան հասկանալի է օրիորդին, որքան նոցա նիւթը մօտիկ է նորա սրտին: Դիւմայից և Հիւգօից պօլսեցոց թարգմանութիւննե՞րը կարդայ օրիորդը, նա ծանօթ է արդէն դոցա բնագրին, կամ կարդացել է թարգմանութիւնը մի օտար լեզուով:

Ի նկատի ունենալով այդպիսի երեւոյթներ, համոզվում ենք, որ մենք հայերս ընթերցանութեան գրքեր չունենք. Եւ ի՞նչու ենք մեղադրում մեր մանուկ սերունդը, թէ նոքա հեռու են պահում իւրեանց հայոց լեզուից և նորա գրականութիւնից:

Մի ազգ երբէք չէ կարող կրթութեան կատարելագործութեանը հասնել, քանի նորա մէջ չէ զարգացած ընթերցանութեան սէրը: Իսկ ընթերցասիրութիւնը ամբոխի մէջ տարածելու գլխաւոր միջոցներից մինը բանաստեղծական և վիպական գրուածքներն են: Ի՞նչ գիրք կարող է լինել ժողովրդի սրտին և հոգուն այնքան մօտ, որքան մի վէպ, որը կախարդական հայելու նման պատկերացնում է իւր մէջ նորա կեանքը, երևան է հանում հասարակական տիպեր՝ իւրեանց գեղեցիկ և այլանդակ նկարագրներով: Վերջապէս ի՞նչ ձայն կարող է լինել այնքան ազդու, քան թէ մի երգ, որ հնչեցնում է ժողովրդին նորա ցաւերը, նորա սրտի տխուր կամ ուրախ զգացմունքները:

Հայերն, իբրև արեւելքցիք իւրեանց տաք երեւակայութեամբ, որպէս է նոցա շրջապատող բնութիւնը, սաստիկ հակումն ունեն դէպի վէ-

պեր և դէպի ֆանտաստիկան առհասարակ: Տեսնում ենք, թէ քանի ախորժանօք նոքա լսում են աշուղների „Հէքեաթները" և որքան սիրով կարդում են „Պղնձէ քաղաքի" յիմար առասպելները, կամ Խիկար իմաստունի խրատները: Աբովեանի „Վէրք Հայաստանին" թէեւ նա գրուած է մի գաւառի ժողովրդական բարբառով, որ մատչելի չէր ընդհանրութեանը, թէեւ իւր երկնութիւնների ձոխութեամբ մինչև անգամ ձանձրացնում է, այսու ամենայնիւ՝ ամեն հայ սիրում է այդ գիրքը և կարդում է նորան: Ուրեմն, բոլորովին անտեղի է մտածել, թէ հայերը ընթերցասէր չեն: Մեղաւորքը մեր գրագէտներն են, որ նորանց մտաւոր սնունդ չեն մատակարարում:

Այդ շարժառիթներն էին, որք խրախուսեցին „Փունջի" հեղինակի վստահութիւնն իւր աւելի քան տասն տարուայ աշխատութիւնները զանազան հատորներով ի լոյս ընծայել: Թէեւ այդ մեր կողմից մի յանդգնութիւն էր, փոյթ չէ՛, միշտ պատերազմողների առաջին շարքը ընկնում են: Եթէ մի օր հայոց հողի վերա կը ծնուէին Գէօթէներ, Շիլլերներ և Շէքսպիրներ, թող նոքա մեզ նման անձնազոհների աւերակների վերա բարձրացնեն իւրեանց գեղեցիկ և հսկայական շինուածքը:

X.

Հանճարներն և տաղանդներն աւելի զարգա-
ցած հասարակական կեանքի արտայայտութիւն-
ներ են: Թէև ես գրեցի յանգաւոր տողեր, բայց
սիրելի ընթերցող, դու իմ չոր ու ցամաք և ան-
տաշ երգերիս մէջ չես գտնելու ոչինչ բանա-
ստեղծական: Նոքա զուրկ են այն գեղարուեստա-
կան փափկութիւնից, որով մուզաների սիրելին
ստեղծագործում է իւր յօրինուածքը: Բայց ես
ներկայացնում եմ քեզ մի ա լ բ օ մ, ուր դու
կը տեսնես զանազան այլանդակուած պատկեր-
ներ՝ իւրեանց բարոյական և մտաւոր տգեղու-
թիւններով.—դոքա մեր հասարակական կեանքի
տիպերն են: Իսկ իմ երգերն՝—արձագանգ են
դառն հառաչանքի . . .

Գուցէ ոմանք կը դատապարտեն մեր բացա-
սական ուղղութիւնը, չը նկատելով որ և իցէ
ուրախալի երևոյթ մեր ներկայացրած պատկեր-
ների մէջ: Բայց թո՛ղ մեր անձնախաբէութիւնը
չը մոլորեցնէ մեզ, մենք ուրախալի ոչինչ չու-
նենք: Հազիւ նշմարւում լուսաւոր կէտերը Հայոց
մութ հորիզոնի վերայ, գուցէ հրապուրում են
շատերի աչքերը, բայց նոքա խաբուսիկ լոյսեր
են, որք անհետանում են ընդհանուր խաւարի
մէջ . . . .

XI.

փունջը լոյս կընծայուի տասն հատորով:
Բայց առաջինից՝ մնացորդ ինն հատորներն կը
տպուին յետևեալ պարունակութեամբ՝—

II. Հատոր վիպասանութիւններ՝—
- ա. Անմեղ վաճառք:
- բ. Ուխտեալ միանձնուհի:
- գ. Ցնային փեսայ:
- դ. Հարեմ (առաջին մաս:)
- ե. Սառայ (բանաստեղծութիւն:)

III. Հատոր վիպասանութիւններ՝—
- ա. Հարեմ (երկրորդ մաս և վերջ:)
- բ. Թալթոսներ:
- գ. Խաչագողի յիշատակարան:
- դ. Սպանդանոց:
- ե. Խորենացու ողբը (բանաստեղծութիւն:)

IV. Հատոր վիպասանութիւն՝—
- ա. Ջահրումար (առաջին և երկրորդ մասն միասին)

V. Հատոր ճանապարհորդական յիշատակա-
րան՝—
- ա. Րաֆֆիի ուղևորութիւնը Պարսկա-
ստանում: (*)

(*) Րաֆֆիի ուղևորութիւնը Պարսկաստանում
ընդամենը կազմւում է 50 նամակներից, որոց 24—ն

Բ. Ճանապարհորդութիւն Տաճկաստան (Վասպուրականի և Տարօնի նահանգներում:)

VI. Հատոր վիպասանութիւն՝—
Սալբի (առաջին մասն:)

VII. Հատոր վիպասանութիւն՝—
Սալբի (երկրորդ մասն:)

VIII. Հատոր վիպասանութիւն՝—
Սալբի (երրորդ մասն և վերջ:)

IX. Հատոր վէպիկներ՝—
Ա. Գեղեցիկ Վարթիկ:
Բ. Սով:
Գ. Նազանի:
Դ. Անբախտ Հռիփսիմէ:
Ե. Մի օրավար հող:

Յիշեալ վէպիկները տպուած են "Մշակ" լրագրի 1872—1873 տարուայ համարներում "Մելիքզադէ" ստորագրութեամբ: Այդ իսկ հատորի մէջ կը պարունակուին և Մելիքզադէի միւս յօդուածներն, որք տպուած են նոյն

միայն տպուած են «Մշակ» լրագրի 1872—1873 համարներում.

լրագրի մէջ: Այլև զանազան ամսագրներում տպուած մեր աշխատութիւնները, որպէս է "Ախթամարայ վանքը" Հիւսիսափայլի մէջ և այլն:

X. Հատոր՝—
Ա. Ներսէս Ե—րդի կենսագրութիւնը:
Բ. Խրիմեանի կենսագրութիւնը: (*)

"Փունջի" ամեն մի հատորը մի և նոյն գինը կունենայ ինչպէս առաջինը: Եթէ որ և իցէ պատճառով վերոյիշեալ աշխատութիւններից մինը չը տպուի, այն ժամանակ հատորների պարունակութիւնը փոփոխութիւն կստանայ:

Վերոյիշեալ նիւթերն, որք պէտք է կազմեն՝ բացի առաջինից՝ մնացեալ ինն հատորների պարունակութիւնը, բոլորը պատրաստ են, վերջացրած չէ միայն Ներսէս Ե—րդի կենսագրութիւնը: Որովհետև մենք պատրաստում ենք հանդուցեալի աւելի ընդարձակ կենսագրութիւնը, սկսեալ նորա երեխայութիւնից մինչև նորա մահը, այդ պատճառաւ այդ աշխատու-

(*) Խրիմեանի կենսագրութեան համառօտութիւնը՝ «Մի քանի գծեր Խրիմեանի կեանքից» վերնագրով մենք տպեցինք «Մշակի» 1873 ամի 49— համարում «Մելիքզադէ» ստորագրութեամբ:

թիւնը մեր ցանկացածին պէս լրացնելու համար՝ մենք կարօտ ենք աւելի մանրամասն և ճիշտ տեղեկութիւնների: Որոյ համար խնդրումենք հանգուցեալի ծանօթներից հաղորդել մեզ նիւթեր նորա կեանքի, գործունէութեան և յարաբերութեանց մասին օտարների հետ: Տեղեկութիւններն որքան և աննշան լինէին դարձեալ մեզ համար թանգագին են, մենք կարող կը լինէինք նոցանից օգուտ քաղել: Եթէ որ և իցէ կոնդակ, նամակ հանգուցեալից, չը կամէին նոցա իսկականը մեզ հաղորդել, բաւական են միայն նոցա արտագրած պատճէնները. մենք կը վճարենք փօստայի և գրագրի ծախսը: Ներսէսի կենսագրութեան հետ զուգնթաց կը նկարագրրուին՝—նոյն ժամանակի Էջմիածնայ, մեր հոգևոր կառավարութեան և հայերի դրութիւնը, այլ և Ռուսաց Պարսից հետ ունեցած պատերազմը և հայերի գաղթականութիւնը Պարսկաստանից և Տաճկաստանից դէպի Ռուսաստան: Մենք յուսով ենք, որ մեզ կօգնեն և այդ մեծ մարդի հաւերժական յիշատակը անմոռաց կը մնայ պատմագրութեան մէջ:

Հեղինակ.

Ստեփաննոս Պօղոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆՑ
Աստրախան

ՍՕՖԻ

ՍՕՖԻ

„Հայոց աղջիկ, հայոց աղջիկ, գնա առաջ, մի վախիլ,
„Եղեգնիկ դէմքդ, շինծու խօսքդ ովքին աեսս չեն խաբիլ:
„Բայց մի թողնիլ դու փորձ Սանդլին, իղձալիդ մուրանալ,
„Թէ ոչ ջահիլ, գոնէ ծերուկ կառնու քեզ Ռուս գեներալ:„
Գամառ Քաթիպայ:

Ա.

Գեղեցիկ է իմ Սօֆին,
Քաղցրիկ, ուրախ և սիրուն,
Նորան արդէն տասն և ութ
Ծաղկում է դեռ նոր գարուն:

Իշխանական արիւնից
Շառաւիղէ իմ Սօֆին,
Մեծատոհմիկ ծնողաց
Միակ զաւակ է անգին:

Նա դեռ նոր է ազատուել
Ինստիտուտի հագուստից,
Նոր մտել է լայն աշխարհ,
Որպէս թռչնիկ վանդակից:

Կրթութիւնն արտաքին
Խիստ ազնիւ է, փայլուն,
Վարվողութիւն՝—շնորհալի,
Իսկ խօսուածքը՝—սրտառուչ:

Լաւ ածում է դաշնամուր
Եւ սիրում է մուզիկայ,
Գիտէ պարի ողջ ձևեր,
Մինչև վրաց լէզգինկայ:

Հիանալի ձայն ունի,
Նա սիրում է օ պ ե ր ա յ,
Երբ երգում է ռ օ մ ա ն ս՝
Թրթռում է յօնքերը:

Ատում է իւր երկրի
Հագուստի ձևն անպիտան,
Բարեկիրթ է իւր ճաշակ...
Նա պաշտում է պերճ մ օ դ ա ն:

Նա գիտէ քանի լեզուի
Եւ կարդալ և գրել,
Բայց հայերէ՞ն.—է՛հ արժէ՞
Միթէ նորան սովորել...

ՍԵՐԲԵՐԱԿԵԱՆՑ

Նորա համար Հայ—ազգը,
Հայոց կրօն և լեզու՝
Են խիստ անարգ նախատինք,
Որից փախչէր միշտ հեռու:

Նա չէ գնում հայոց ժամ,
Զի շարական չէ սիրում,
Այլ և հայոց խունկի հոտ
Նորան վատ է միշտ բուրում...

Բ.

Հայրն էր հին ծառայող,
Զը կաշառող, ջերմեռանդ (?)
Հաւատարիմ իւր գործին,
Մեծաւորին հնազանդ:

Իսկ պատահած միջոցին
Նա երբէք չէր արգելում՝
(Ռամկօրէն ասումէն)
Գցել իւր ձեռքի ջիբում...

Եւ այդպէսով վաստակեց
փառաւոր տուն, մեծ գումար,
Իւր ընտանեացը թողեց
Ապրուստ սև օրուայ համար:

Նորա կինն իւր ժամուն
Էր գեղեցիկ բաւական,
Հիւրերի հետ զուարճասէր,
Ծանօթներին դիւրեկան:

Եւ մանաւանդ հաճելի
Ամուսնի մեծաւորին,
Շողոքորթում էր սիրտը
Ամուրի գեներալին . . .

Դորանով հարթեց ուղին
Մարդու յառաջդիմութեան,
Որով ստացաւ աստիճան,
Բարձր տեղ ծառայութեան:

Խիստ ընդունակ էր կինը
Կրթուած աշխարհի պահանջին,
Կառավարում էր տունը՝
Պատշաճաւոր, ը ս տ կ ա ր գ ի ն.—

Մաքուր հագնուած ծառաներ,
Աղախին, սպասաւոր,
Շքեղ և թանգ կարասիք,
Սեղանը՝—ձոխ, փառաւոր:

Տարին մի քանի անգամ
Նոքա տալիս են խնձոյք,
Դաշնամուրը հնչում է,
Եւ են գալիս սէր, հաճոյք:

Այդ բոլոր հանդէսների
Պսակը և Թագուհին՝
Էր միշտ նոցա աղջիկը —
Ուրախ, նազելի Սօֆին:

Գ.

Կէս գիշեր էր: Աշխարհին
Գիրկ էր առել քաղցրիկ քուն,
Եւ ընդհանուր տիրում էր
Խոր, սրբազան լռութիւն:

Իսկ լուսինը, — խիստ ուրախ
Երկնքի հարսը, — նազելով,
Ամպերի պարզ ովկիանում
Լող էր տալիս խայտալով:

Խորհրդական այդ ժամուն,
Իմ Սօֆին, մօրից թաքուն,
Ախտաբորբոք հսկում է,
Չէ՛ վայելում անուշ քուն:

Վաղուց մի քանի հատոր
Կան նորա բարձի տակին, —
Բայրընին, Տուրգենևը,
Հայնէ, Շիլլեր և Պուշկին:

Լուսամուտի մօտ նստած,
Իւր սենեակում միայնակ,
Նա կարդում է ռ օ մ ա ն
Լուսնի լուսով, անձրագ:

Եւ կուսական սրտումը
Նոր նոր կրքեր են խաղում,
Վախսպրդական տողերքն
Բիւր հրապուրանք է քաղում . . .

Անսպառ այդ աղբիւրքն՝
Սրտի ծարաւը բորբոքեալ՝
Զովացնում է, իւր գլխում
Ստեղծում է ի դ է ա լ:

Այդ ցնորքը նորա մէջ
Ստանում է կերպարան,
Մի գաղտնի հուր սրտի մէջ
Բորբոքում է միշտ նորան:

Քնած սէրը զիրթ արծիւ
Սասանում է արթնութիւն,
Իւր կարիքն անհրաժեշտ
Պահանջում է բնութիւն . . .

Գրկում է իւր իդէալ,
Նա կոչում է հիացած,—
„Քեզ եմ գոհում, ով սուրբ սէր,
„Դու ես այժմ իմ աստուած։"

Գ.

Մեծահանդէս էր խիստ բոլ.
Լուսով վառւում է դահլիճ,
Նորա հարուստ զարդարանք
Են ճոխ, շքեղ, գրաւիչ։

Եւ է գալիս բաղձութիւն,
Եւ հագուստներ խըշխըշուն—
Մետաքս, շալ, ոսկի, արծաթ՝
Ակնածւումեն ողջոյն։

Հիանալի զարդարուած,
Որպէս մանուկ թագուհի,
Յայտնւում է սիգաճեմ
Դուստրը հայոց աշխարհի.—

Ներս է մտնում իմ Սօֆին,
Ձեռքում բռնած հովահար,
Նորա կուրծք ու բազուկներ
Փայլումեն որպէս գոհար։

Շփոթւում է բաղձութիւն,
Շրշնջումեն մեղմ ձայներ,—
„Գեղեցկութեան դիցուհին
„Եկաւ ահա եղբայրներ։"

Վսեմապանծ նայելով
Ընթանում է իմ Սօֆին,
Նորա առջեւ թափւումեն
Սիրոյ վարդեր կաթոգին։

Ծեր և մանուկ պատանի
Լինեն նորան երկրպագ,
Եւ քաղցրախօս բառերով
Ողջունումեն իմ հրեշտակ։

Բայց նա հպարտ և անփոյթ
Շրջան առեց ընթացքին,
Տարփածուի սէթևեթ
Չ'արժեց նորա հայացքին։

Ի՜նչ մեծ բախտ է տղամարդին,
Նորա դէմքէն խնդամիտ,
Որսալ գոնեա՛ մի թեթև,
Սիրաբարբառ, թարմ ժպիտ։

Զո՛ւր վրդովմունք, պարոններ,
Զո՛ւր է ցաւը ձեզ տանջում,
Զի մեծասիրտ իմ Սօֆին
Այնիւ զոհ է պահանջում։

Ե.

Փոթորկվում է պարհանդէս,
Երբ հնչում է մուզիկան.
Սկսվումեն կաքաւներ՝ —
Վալս, պօլկա և մազուրկան . . .

Մօտենում է մի հարուստ
Հայ տղամարդ, ազնուաբար
Գլուխ տալով իմ Սօֆուն,
Խնդրեց իւր հետ պարել պար։

Հրաժարվում է իմ Սօֆին,
Հայկական դէմք հարստին
Չը դիւր եկաւ գեղասէր
Ճաշակով օրիորդին։

Մօտենում է մի ասպետ,
Ուսին դրած էպօլետ,
Կուրծքը պատած օրդէնով,
Պարել կամէր նորա հետ։

Հրաժարվում է իմ Սօֆին՝
Վայրենի դէմք զինուորին՝
Օրիորդին փափկասիրտ
Սարսափ և զզուանք բերին։

Մօտենում է, շիկահեր,
Կապտաչեայ երիտասարդ,
Հասակը՝—նուրբ, վայելուչ,
Դէմքը՝—քնքուշ, որպէս վարդ։

Կանգնում է իմ Սօֆին։
(փոխվեց պարի եղանակ)։
Նոքա, միմեանց փաթաթուած,
Պտըտվումեն զերթ թռչնակ։

Քսքսվումեն . . . շրխշրխկվում . . .
Կուսի սրտումը յանկարծ
Վառուեց վաղուց թաքուցած
Սիրոյ ելեքտրական կայծ . . .

Դադարեցաւ և այդ պար,
Յոգնած նստեց իմ Սօֆին:
Իւր պարընկեր գեղեցիկ
Մինակ կանգնած էր մօտին:

Քանի զոյգ դիւթական
Կնքեց ուխտ նոցա միջին.
„Մեք կը տեսնուենք յետոյ“ . . .
Եղաւ նոցա խօսք վերջին:

Զ.

Քանի մի օրից յետոյ,
Իմ Սօֆին իւրեանց տանում,
Շաբաթը քանի անգամ,
Մի նոր հիւր էր ընդունում:

Օտարազգի էր հիւրը՝
Ուրախ, գրաւիչ դէմքով,
Անունը՝— Պետր Իվանիչ,
Տոհմանունը՝— Պուստեակով:

Որպէս մեղր և շաքար
Բառեր թափվումեն բերնից,
Նա խօսում է անդադար,
Չես կշտանում խօսքերից:

Նա գիտէ հարիւրաւոր
Ծիծաղելի առակներ,
Նա գիտէ հազարաւոր
Ֆրանսիական առածներ:

Նա ածում է, նա երգում է,
Ներկայացնում է և պարում է,
Ծաղրական պատկերներ
Խազխզում, նկարում է:

Շարադրում է կ ո ւ պ լ ե տ ն ե ր,
Նոցա ամէն մի տողեր
Արտասանումէն կատակ,
Կոշտ սրախօսութիւն և սէր:

Երբեմն նա ծանր էր,
Որպէս մտածող, գիտնական,
Ջերնիշևսկի, Դոբրօլիւբով՝
Են խօսքերի առարկան:

Խօսում էր նա Դարվինից,
Թէև անհետևաբար,
Եւ հերքումէր բնաւին
Ազգայնութեան գաղափար:

Նորա մօտ արժէք չունէր
Բարոյական սրբութիւն,
Ն ի գ ի լ ի ս տ էր պարոնը,
Հերքում էր ամուսնութիւն։

Նորա բոլոր խօսքերին
Սօֆին շատ էր համակրում,
Որպէս առատ անձրևը
Ծարաւ, ցամաք երկրում։

Է.

Զուարճանէր բազմութեամբ
Միախմբվում է թատրոն,
Ուր քարոզվում էր բեմէն
Մելպոմենի վսեմ կրօն։

Օթեակ, աթոռ, բազկաթոռ,
Բռնած են հանդիսականք,
Պայծառ, ուրախ շնչում է
Քաղաքացու հանդիստ կեանք։

Հիանալի զուգուած է
Խումբը գեղեցիկ սեռի,
Մի օթեակում նստած է
Սօֆին բեմից ոչ հեռի։

Հնչվում է մուզիկան,
Երգում է խաղուհին,
Ներկայացնում են Մովսէս,
Դարձը ուխտեալ աշխարհին։

Բայց դէպի բեմ իմ Սօֆին
Չէ՛, երբէք չէ՛ ուշադիր,
Նա ունի իւր նպատակ,
Այլ է սրտին իւր խնդիր։

Երկփողեայ իւր դիտակ
Դրած է նա աչքերուն,
Նկատում է՝ տղերքից
Ո՛րն է տգեղ, ո՞րը սիրուն։

Յանկարծ գտաւ իմ Սօֆին
Նազելին իւր ծանօթ դէմք,
Դա էր նորա ցանկալին,
Եթէ փոքր ինչ պարզ ասենք։

Սիրտը թնդաց, բորբոքեց,
Եւ չըսպասեց մինչ վախճան,
Նա դուրս եկաւ օթեակից,
Գտաւ սիրոյ առարկան։

Թատրոնական սրահում
Ճեմում էին միասին,
Բայց թէ ինչ էին խօսում,
Լաւ է լռել այդ մասին . . .

Միայն Սօֆու ականջին
Նա շշնջեց քանի բառ՝—
„Ձեր պարտէզում այս գիշեր
„Ինձ կը գտնես անպատճառ:“

Ը.

Հիանալի զով գիշեր
Պարգեւել էր այն ամառ,
Պայծառ երկնքի ողջ աստղեր
Լոյս կը տային վառվառ:

Գեղազուարճ և ուրախ
Ներկայանար բնութիւն,
Իսկ պարտէզում թարմ ծաղկանց
Տիրէր ամպարհոտութիւն:

Բարձր,—բարձր լսւում էր
Սոխակի երգի հնչիւն,
Նիրհած տերեւը շարժում էր
Մեղմիկ հովի սօսափիւն:

Ծաղկազարդ ճեմելիքներով,
Որպէս ցնորուած հրեշտակ,
Թափառում էր իմ Սօֆին,
Խիստ անհամբեր, միայնակ:

Յանկարծ լսեց նա թխկոց,
Շուտ մօտ վազեց վրդոված,
Տեսաւ, մինը լուռ ու մունջ
Ցանկապատէն իջաւ ցած:

„Սօֆի՛.“ հնչեց մեղմիկ ձայն:
—„Ա՛խ, Գէորգ.“ եղաւ պատասխան:
Նոքա շուտով մէկ մէկու
Ուրախ ուրախ մօտեցան:

Ի՞նչ գրիչ այն առաջին
Կարէ նկարել րոպէն,
Երբ որ սիրող, սիրուհին՝
Գաղտնի միմեանց կը հանդիպեն:

Թէ սիրել ես, ընթերցող,
Կարես զգալ ինքնին . . .
Ինսարովի խօսքերը
Յանկարծ ասաց պատանին՝—

276-2003

„Դու, առաջի Աստուծոյ,
„Հրեշտակների առաջև,
„Իմ կլինես պատուաւոր,
„Չէ՛ս — քո այր այսուհետև“ . . .

Պսակող մի քահանայ
Այդ խոստման չեղաւ ներկայ,
Միայն աստեղք և լուսին
Երկնքէն դարձան վկայ։

Թ.

Անցան օրեր, ամիսներ,
Անցաւ ամբողջ մի տարի,
Սահում էր կեանքը Սօֆու
Ուրախ, անհոգ և բարի։

Նորա ծնողք անհանգիստ
Խորհումէին միասին,
Արժանաւոր փեսայի
Սօֆուն տանել ամուսին։

Բայց փեսաներ խմբովին
Դիմումէին ինքնին,
Ո՞վ չէր ուզի ունենալ
Սօֆու նման սիրուն կին։

Երբեմն դիմէր հարուստ,
Հայազգի վաճառական,
Պատուաւոր քաղաքացի,
Ո՛չ ազնիւ արմատական։

„Ե՛հ. մուժիկի՞ կին դառնալ
(Մեղք է անգամ մտածել,)
„Իշխանական իւր արիւն
„Ապականել ու պղծել“ . . .

Երբեմն դիմէր նորահաս
Վրացի սիրուն Թաւադ,
Ազնուական հին տոհմից,
Թէև թեթև, դիւրհաւատ։

„Դա էլ գլխում խելք չունի,
„Ոչ դրպանումը կոպէկ փող,
„Կախեթումը գրաւ դրած
„Ունի քանի կտոր հող։“

Երբեմն դիմէր հաշտարար
Սուդիաներից քաղաքին,
Նադըրվորնիյ սօվետնիկ,
Աննա խաչը շլինքին։

Եւ դորան չէր նա հաւան,
Զի տգեղ էր կերպարան.
Քիթը՝—կարճ, աչքերը՝—ծուռ,
Սաստիկ մեծ էր և բերան:

Մի խօսքով, ամէն մինին
Մի մի արատ էր գտնում,
Որովհետև իւր սիրտը
Ուրիշին էր պատկանում:

Ժ.

Դեռ ուսանող էր Պեօտրը
Ծնողքը մտան գերեզման.
Մտածում էր այնուհետև
Նա գնալ արտասահման:

Ֆօխտը, Բօկլը և Դարվին
Մի լաւ ուսումնասիրել,
Գերմանական գիտութեամբ
Իւր մտքերը զարգացնել:

Յանկարծ կարծես դև մտաւ
Նորա անփորձ սրտումը,
Մոլորուեցաւ մրրկալի
Մայրքաղաքեան կեանքումը:

Վատնելով առողջութիւն,
Պատիւ, արծաթ, համարում,
Նա դարտակ գրպաններով
Յայտնուեցաւ Կաւկազում:

Նորա գրաւիչ ձևերը,
Կերպարանքն և լեզուն,
Սալօններում մուտք տուին
Համարեա ողջ Թիֆլիզում:

Որտեղ տալիս են խնճոյք,
Ուր տօն է ընտանեկան,
Նա էր աղջկերանց հերոսը,
Նոցա ցնորքի առարկան:

Նա ամէն ծակ մտնում է՝—
Բալ, կօնցերտ, մասկարադ,
Ո՛րքան խելքից հանում է
Գլուխներ անմեղ, անարատ . . .

Մեծ էր նորա ներգործող
Բարոյական զօրութիւն,
Նորան պաշտումէն որպէս կուռք,
Որպէս նոր հեղինակութիւն:

Հատուկոտոր ֆրազներ,
Սերտած, մ օ դ ն ի խօսքերուն,
Համարումէն այէթներ
Բարձր, վսեմ մտքերուն։

Նա հերքում է, նա մերժում է
Օրէնք և ճշմարտութիւն,
Նա փշրում է և ջարդում է
Ուսում, արհեստ, գիտութիւն։

Ժ.Ա.

Պարզամիտ Սօֆու վրա
Մեծ էր նորա ազդեցութիւն.
Նա եղաւ լուռ, մտածող,
Փոխեց կեանքի կացութիւն։

Կարճացրուց մազերը,
Սկսեց չը սանրուել,
Արհամարհել ամէն բան,
Եւ հասարակ հագնուել։

Եւ առանց պառաւ տատին
Փողոցները չափչփել,
Իվանովի գրքատունը
Ստէպ ստէպ յաճախել։

Գօտեւորուած էր Սօֆին
Սև և մաշկեայ քամարով,
Նա գիտութեան նահատակ
Ձեւանում էր նորանով։

Համալսարանից Թերուս
Արտաքսածի կացարան՝
Գիշերային ժամերի
Էր նորա զուարճարան։

Ուր բաժակները զեղուն
Քամում էին երգելով,
Ուր ջուլթակը չէր լռում,
Կեանքն ուրախ էր, անխռով։

Ուր ազատ հերոսուհին
Դրոշմում էր խիստ սիրով՝
Իւր կուսական թշերը
Կօմունական համբոյրով։

Բայց հայրենի աշխարհի
Կեանքն, ապրուստ և շրջան,
Տաղտկալի էր խիստ նորան
Մինչև վերջին աստիճան։

Նորա սիրտը ձգում էր
Մի գաղտնի ցանկութիւն
Դէպի Ժենեվ և Ցիւրիխ,—
Ալպիների բնութիւն։

Բայց թէ ի՞նչ էր նպատակ,
Նա ինքն էլ չը գիտէր.
Միայն Ցիւրիխ գնալը
Այն օրերում մօդայ էր։

ԺԲ.

Անցան, անցան տարիներ,
Անցան տարիք կրկնակի,
Երսուն ամին կանգնած էր
Միջօրէում հասակի . . .

Եւ ժամանակն անգութ
Իւր հոսանքով անխնայ՝
Քաղում էր նորա դէմքից
Թարմ վարդերը անընդհատ։

Հնանում էր իմ Սօֆին . . .
Գեղեցկութիւնը, աւա՜ղ,
Օրըստօրէ կորչում էր
Սիրուն դէմքիցը չքնաղ։

Չքացել էր մեր Պեօտրը,—
Սօֆու անգութ հերոսը,
Կուրսների դիւցազը,
Գիտութեան մարտիրոսը . . ??

Տանիլ տուեց մեծ գումար,
Նա զզուեցաւ Թիֆլիզից,
Պարտատիրոջ երկիւղէն
Անհետացաւ Կաւկազից . . .

Փեսաներ այնուհետև
Սկսան ուշ յայտնուել,
Եւ նազելի իմ Սօֆուն
Պակաս, ստոր գին դնել։

Դիմողները միշտ էին՝
Գռեհիկ և ցած մարդիկ,
Եւ ոչ Թաւադ, հաշտարար,
Կամ Նադվօրնիյ սովետնիկ։

„Հայի խարջ չէ,“ ասում էր
Պատուաւոր քաղաքացին.
„Էլ պէտքը չէ,“ ասում էր
Կախեթեցի վրացին։

«Լըպզուած է,» ասում էր
Դատաւորը հաշտարար։
Խեղճ Սօֆուն ամէն մինը
Բիծ էր դնում անհամար . . .

Խոնարհուեցաւ և ընկաւ
Հպարտ սիրտը կուսական,
Սի՛րտը խաբուած սէրից
Կոտրած, հանգած, անկենդան . . .

Հաշտուեցաւ բախտի հետ
Այնուհետև խե՛ղճ Սօֆին,
Աղքատ, ծերուկ չինովնիկ
Ընտրեց իւրեան ամուսին։

Յունադաւան քահանան
Կատարեց իւր պսակը,
Բայց մոռանալ չէր կարող
Նա Պետրի յիշատակը . . .

1871 Թիֆլիս։

ՄՇԱԿ

ՄՇԱԿ

(Պարսկաստանի և Տաճկաստանի հայերի կեանքից)

«Թողեր եմ ու եկեր զաւակներըս, այգիս,
«Քանի որ մխ կմնեմ, կու քաղուի հոգիս,
«Կռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս,
«Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:»

Պանդուխտի երգ.

Ա.

Գալիս է Գարուն, նոր կեանք է բերում.
Վարդ և շուշանը բացվում են, բուրում,
Թարմ և ծաղկազարդ փայլում է տերև,
Մանուկ զօրութեամբ ծագում է արև:
Շնչում է անտառ: Երգում է ծիծառ:
Վաղորդեան ցօղը սփռում է գոհար,
Կանաչ հովիտը վառվում է պայծառ:
Զարթնեց բնութիւն կուսական խանդով:
Դէպ' գործ մեղուներ դիմեն եռանդով:
Վաղ—առաւօտեան ձայնը կռունկին
Կանչում է դէպ' դաշտ անբախտ մշակին:
Բայց արշալուսի վարդագոյն թշեր,

Զարթած բնութեան հրաշալի պատկեր,
Չե՛ն, չե՛ն հրապուրում սիրտը վշտահար,
Սիրտը, որ մեռած էր ցաւով հազար . . .
Գլուխը ծռած, մշակը տրտում
Վարում է գութան արգաւանդ դաշտում,
Եւ նորա երգը հնչում է արդէն,
Երգը հոգսերով ծանրացած սրտէն:
Ա՛խ. նա օտարի հողն է մշակում,
Որոյ պտուղը նա չէ ճաշակում,
Հո՜ղ, որ նախահարց սրբուած արինով,
Այժմ ջրվում է որդու քրտինքով,
Այժմ ցողվում է դառն արտասուքով . . .

Բ.

Գալիս է Ամառ,—կրակոտ եղանակ,
Անխոնջ վաստակի, պտղի ժամանակ:
Իւր աստուածեղէն ջերմութեան հոգին
Կենսատու շնչով ծաւալէ արփին:
Հասել է ծիրան, տանձը մեղրածոր,
Աղջկայ թշի պէս վառվում է խնձոր,
Սաթանման—դեղին կախուած է ողկոյզ,
Մանկտին գրաւում է շլոր և թուզ.
Սեխով, ձմերկով լիքն է բոստան,
Ոսկեայ հոսանքով ծփի անդաստան,

Եւ արտորայքի ծանրացած հասկեր՝
Խիստ հիանալի նկարեն պատկեր:
Յետ երից անգամ երգը խօսնակին
Զարթնում է խոկոյն հնձուորի հոգին:
Փայլում է մանգաղ. գործում է մշակ.
Բարձած սայլակի ճռինչն անուշակ
Հնչվում է հեռու, հեռու դաշտերէն,
Բերում դէպի կալ հունձքը արտերէն:
Կասում է իւր կալ, մաքրում է ցորեան,—
Պտուղը իւր ձեռքի, քրտնքի, արեան,
Եւ այդ բոլորը նա զոհ է բերում,
Կալուածատիրոջ լցնում ամբարում,
Անիծելով բախտ, գնում է իւր տուն,
Լացում է սև օր, քաղցած գերդաստուն:

Գ.

Գալիս է Աշուն: Թափվում է տերև,
Սոխակն իւր վարդին տայ վերջին բարև,
Եւ տարափոխիկ արագիլ, կռունկ՝
Գաղթեն դէպի տաք երկրներ խորունկ:
Ուժգին, ցրտաբեր փչում է հիւսիս,
Սև սև թուխպերով պատվում է Մասիս:
Մահուան դեղնութեամբ ծածկվումեն դաշտեր,
Զուարճասէր սրտից չեն ցրվում վշտեր:

Լիքն է հունձերով մրջիմին ամբար,
Թէև չը ցանեց, չը կասեց իւր կալ,
Եւ իւր մոմեղէն խցումը շար ի շար
Մեղուն կազմել է ձմեռուայ պաշար:
Իսկ իւր արտերով մեր խեղճ գիւղացին
Մնում է կարօտ պատառ մի հացին.
Տխուր, յուսահատ, գլուխը ծռած,
Նստած է տան մէջ, ձեռքերը փակած:
„Անցուցի՛ր Ամառ, անցուցի՛ր Գարուն,
Ասում է կինը. անցաւ և Աշուն,
Դրանը կանգնած է ցրտաբեր Ձմեռ,
Որդիքս կիսամերկ, որդիքս կիսամեռ՝
Ես ի՞նչով պահեմ, ասա ինձ, այրի՛կ“:
—„Աստուած ողորմած է, սպասի՛ր, կնի՛կ“...
Ասաց մշակը և լռեց խոկոյն,
Ծածկեց ցաւերը վշտալից հոգուն . . .

Դ.

Գալիս է Ձմեռ,—ալևոր ծերուկ,
Խոժոռած դէմքով, սպիտակ մօրուք,
Չը կայ մի ժպիտ նորա աչքերում,
Դառնաշունչ ձայնով սարսափ է բերում,
Սառած է արիւն ողջ երակներում,
Սիրոյ ջերմութիւն՝—չը կայ նորա սրտում:

Մահաբեր ձեռքով ձիւնեղէն պատանք
Տարածում է նա: Սար, դաշտ և անտառ,
Ողջ ծածկւում են սպիտակ պատանով . . .
Լռում է թռչնիկ. մեռնում է ծաղիկ.
Սառցապատ գետակ մնչում է լռիկ:
Կտուրի վերա նստեց ագռաւ,
Ցրտի գալստեան համբաւը բերաւ,
Կռկռաց, կռկռաց և չարագուշակ
Ձայնով գուշակեց գիւղացու վիճակ:
Բայց մեր գիւղացին էլ դուրս չէ երթում,
Փակուած է մթին նա իւր խրճիթում:
Նորա անօթի որդիքը կիսամերկ
Սառը թոնրի մօտ նստած են տրտում,
Խաղալ չեն գնում դրսում՝ ցրտում,
Զի չը կայ հագուստ խեղճերի հագին:
Գործում է թէև դազգեահ ջուլհակին,
Գործում է կտաւ և մանում է կլին,
Բայց նոցա գործուածք պիտ՛ գնան վաճառ.
Վճարել խանի տուրքը անվճար:

Ե.

Իսկ մեր մշակի պարտքի մուրհակին
Լրացան տարիք կրկին և կրկին.
Այն անիծեալ պարտք . . . պարտքը պարսկին,

Որով նա գնեց եզները ջուխտակ,
Եղաւ նա գերի, ընկաւ հոգսի տակ:
Նա չունի արծաթ, չունի եկամուտ,
Բայց մահմետական վաշխառուն անգութ
Քարշում է տանից նորա երեխան՝
Ծանրացած պարտքի տոկոսի փոխան:
Մի բարբարոսին խեղճն ի՞նչ է ծանօթ,
Որ չունի օրէնք, իրաւունք, ամօթ . . .
Ի՜նչ անէ խեղճն, ի՜նչ հող տայ գլխին,
Ազատէ կեանքն անբախտ երեխին.
Իւր պարտատէրին ակամայ սրտի
Զոհում է նա շատ արտասուք, պատիւ . . .
Մինչ կրկին տարի ժամանակ առաւ,
Տուն, տեղ, ամէն ինչ, նա դրեց գրաւ:
Նորից ամրացաւ գերութեան շղթան:
Թողեց վարուցանք, արօր և գութան,
Եւ պանդխտութեան կրեց գաւազան,
Դէպի հեռաւոր, դէպ՝ օտար աշխարհ,
Տխուր, սրտաբեկ՝ ուղղեց ճանապարհ:
„Կերթամ,—ասաց նա,—մի՛ լացիր, կնիկ,
Կամ օտար երկրում կը մեռնեմ, կը կորչեմ,
Կամ պարսկի պարտքէն որդիքս կազատեմ . . .“

Զ.

„Ա՛խ, Աստուած . . .“ կոչեց, գնաց գիւղացին,
Ջըր նայեց կնոջ արտասուք—լացին,
Թողեց ընտանիք նօթի, կիսաշունչ,
Թողեց անխնամ, մերկ և անտերունչ:
Երկար տարիներ նա թափառական
Ընդ ծով և ցամաք պտտէր անսահման,
Երկրէ երկիր շրջէր գաղթ ի գաղթ
Եւ յուսակտուր որոնում էր բախտ:
Եւ վերջ ի վերջոյ մի մեծ պանդոկում
Եղաւ նա հ ա մ ա լ, բեռն էր շալակում,
Բեռն էր շալակում, որպէս մի գրաստ,
Գործէր անհանոց նա գործ չարապաստ . . .
Լափչիքը հագած, փ ա լ ա ն ը մէջքին,
Մինչև կէս գիշեր քաղվում էր հողին,
Եւ նոյն փալանին գլուխը դրած,
Սառը գետնի վերայ քնում էր յոգնած:
Բայց և այդ բախտը չը տևեց երկար.
Մի օր մի մեծ հակ տանում էր բազար,
Ծանր էր բեռը, ծանր և ահագին,
Ոտքերը դողաց, աչքերը մթնեց,
Ցանկարծ գլորուեց իւր բեռան տակին . . .
Անշունչ, կիսամեռ վեր առան նորան
Եւ հիւանդանոց ընկերքը տարան:

Է.

Ծիծառը դարձաւ դէպ՛ իրայ բունը,
Կարգեց, նորոգեց՝ աւերուած տունը,
Բայց մեր մշակից դեռ չը կայ համբաւ:
Ընտանեաց վիշտը դառն էր, անբաւ:
Հին պարտատէրը շատ շատ էր տանջում,
Նորա կնկանից փող էր պահանջում:
Տանջուե՛ց խեղճ կինը, տանջուե՛ց անպայման,
Մանուկ հասակում մաշուած, թառամած,
Անբախտ գլուխը տարաւ գերեզման . . .
Փոխան նոցա հին պարտքի մուրհակին
Տիրեց պարտատէրը կայք և տնակին:
Կորած պանդխտի դստերք մատղաշ
Պարսկի հարեմում եղան ղ ա ր ա ւ ա շ:
Հայերից մի տան մարեցաւ օ ջ ա խ:
Բայց քանի՞ հարիւր տներ այդպէս յաճախ
Անհետանումեն ամենայն տարի . . .

1857 Մուշ:

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒ

Հայոց աշխարհի

Տ ի կ ի ն ն ե ր ը

ԵՒ

Ն Ղ Ի Ճ Է

ԱՒԱՐԱՅՐԻ ԴԱՇՏՈՒՄԸ

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒ
Հայոց աշխարհի
Տ ի կ ի ն ն ե ր ը
ԵՒ
Ե Ղ Ի Շ Է
ԱՒԱՐԱՅՐԻ ԴԱՇՏՈՒՄԸ

„Տ ի կ ն ա յ ք՝ փ ա փ կ ա ս ու ն ք Հայոց աշխարհին,
„որք գրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր բազմա-
„կանս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի եր-
„թային ի տուն աղօթից անձանձրոյթ խնդրել ուխտիւք,
„զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։“

Եղիշէ.

Ա.

„—Տիկնայք Հայոց փափկասուն,
Մատաղ լինեմ ձեր հոգուն,
Ի՞նչու ձեր սև աչերքն
Դառն արտասուք էք հոսում:

Ա՛խ. մի՛ լացէք, նազելիք,
Մի՛ այրէք ձեր վարդ թշեր,
Զի ձեր աչեր չեն սորված
Թափել աղի կաթիլներ։

Բայց ինձ ասէք, թէ ո՞ւր են
Ձեր փառքը, զարդը նախկին,
Ի՞նչու այդպէս տխուր էք,
Որպէս սգուոր այրի կին։

Տիկնայք Հայոց փափկասուն,
Ձեր ձեռքը, դէմքը սիրուն՝
Այլ ևս անուշահոտ
Օճառը չէ մաքրում։

Ո՛չ ձեր գանգուր խոպոպիք
Օծանվումեն տօն օրին,
Իւրեանց ախորժ բուրմունքով
Ոգի շնորհեն հանդիսին։

Եւ վարդապատ ձեր գլուխ,
Կուրծք, պարանոց, բազուկներ,
Զարդարում չեն մարգարտով՝
Հիւսած ոսկի գոհարներ։

Եւ հագուստով խշխշուն,
Ուշիկաքայլ նազելով,
Չէք հրապուրում աչերը
Սիրելեաց ձեր կարոտով։“—

Իսկ հայ տիկնայք խմբովին՝
Եղիշէի հարցերին՝
Այդպէս տուին պատասխան
Եւ ճիչ բարձին լալագին։

Բ.

—„Ծերունի դու մեր հայրիկ,
Դժուար է մեզ տալ համար,
Թէ քանի՛ վիշտ և չարիք՝
Կրեցինք ազգի համար,

„Երբ Իւր կրօնք մոգական՝
Անհաշտ Պարսիկը—Սասան՝
Կամենումէր ներս բերել
Մեր հայրենիք սրբազան։

„Երբ մեր արի ամուսինք,
Սուրբ հաւատքի պաշտպան,
Հաճեցան սուրբ արիւնով՝
Մարել ջենտի ատրուշան։

„Նոքա Պարսից աշխարհի
Տանջվումէն բանտումը
Եւ կամ անկան քաջի պէս
Աւարայրի դաշտումը։

„Ուր քաղցր է մեր աչերուն
Ցօղել կաթիլք մարգարտին,
Զի սիրելեաց մեր արիւն
Ծծեց անգութ այդ գետին։

„Կար ժամանակ, որ մեք էլ
Այդ դաշտումը երգելով՝ (*)
Ծաղիկներ ենք հաւաքել
Սիրելեաց ձօն փնջելով։

„Այժմ այստեղ ցիրուցան
Նոցա ոսկերք սրբազան
Հաւաքումենք սափորում
Պաշտել նորանց յաւիտեան։

„Կար ժամանակ, որ մեք էլ
Շքեղաշուք, պճնազարդ,
Սիրելեաց հետ անարգել՝
Վայելէինք կեանք զուարթ։

„Բայց մենք մեր աչքով տեսանք,
Երբ աւազակ թշնամին
Մեր գանձերը, զարդարանք,
Տարաւ Պարսից արքունին։

(*) Աւարայրի դաշտումը։

„Մենք մեր ականջով լսանք
Ճիչ սիրելեաց չարաչար,
Երբ շղթայած դէպ՛ աքսոր
Տանէին պարսից աշխար:

„Իսկ մենք գերի, անտերունչ՝
Մնացինք արտասուք հոսելով,
Բռնակալի ահ դառնաշունչ
Մեր կեանքը մաշելով:

„Ո՞ր համար զարդարուինք,
Ո՞ր սիրտը ուրախցնենք,
Մի՞թէ մեր գերիչների
Շնական աչեր հրապուրենք . . .

„Մեր ամօթխած երեսէն
Երբէք չէր անկել շղարշ,
Եւ գլխի քօղ ծալեծալ
Գետնից գնում էր միշտ քարշ:

„Արևի ոսկի շողքը
Կարօտ էր մեր երեսին,
Գուցէ մի տաք համբոյր տար
Ծածկուած, համեստ թշերին:

„Այժմ այնպէս անխնայ
Նորա շրթունք բոցավառ
Այրեցին թարմ վարդերը
Մեր այտերի ալ, պայծառ:

„Մեր առագաստ, սրսկապան՝
Մնացին անտէր, և վերան
Փոշին դրեց իւր պատան,
Սարդը հիւսեց իւր ոստայն:

„Մեր ապարանք կորուսին
Կահ—կարասիք փառաւոր,
Մեր տաճարքը զրկուեցան
Իւրեանց զարդէն բիւրաւոր:

„Մե՛ր շաղրուան փողփողուն
Չէ ցայտում ցօղը մարգարտին,
Ոսկից ջուրը հովասուն
Հովիկ չնչէր մեր սրտին:

„Ծերունի հայր սրբազան,
Ո՞ւր բուրաստանք մեր սիրուն,
Ուր վարդ, նարգիզ և շուշան
Մեր գլուխն էր զարդարում:

„Ո՞ւր պարտէզք մեր հովասուն
Ստուերախիտ որթերով,
Որոց ախորժ հովանին
Տալիս էր մեզ հանգիստ զով:

„Ուր սիրելեաց մեր համբոյր
Ծաղիկները բարբոյր
Նախանձուելով գիտէին
Եւ փառք տային Աստծուն բիւր:

„Ուր թփերի ստուերքն,
Գիշերային լոր պահուն,
Մեր երգերին դաշնակից
Սիրուն սոխակն էր լինում:

„Կորան ամէնը չարաչար . . .
Դադարեցան մեր երգ, պար,
Մեր բամբիռը չէ հնչում,
Լռեց անուշ մեր քնար . . .

„Այժմ լաց, սուգ, հառաչանք
Միշտ ախուվախ դառնաշունչ՝
Եւ սաղմոսի մեղեդիք՝
Են հոգևոր մեր մրմունջ:

„Ի՞նչը մնաց մեր փառքից,
Ի՞նչով այժմ պարծենանք,
Ո՞վ մեր վշտին կարեկից,
Ո՞ւմ ապաւէն ունենանք . . .

„Ո՞ւր մեր նաժիշտք ձեռնասուն,
Ո՞ւր մեր ծառայք, աղախին,
Մեր զաւակունք սիրասուն
Զուրկ գգուանաց դաեկին:

„Ո՞ւր մանուկ մանկլաւիկներ,
Ո՞ւր մեր վարպետ խոհարար,
Անուշահամ խորտիկներ,
Որ պատրաստէր մեզ համար:

„Ո՞ւր մեր հացթուխ տիրական,
Խմորեղէնք համեմած՝
Մեր սեղանի ճոխութեան
Պատրաստում էր՝ մաքուր հաց:

„Ո՞ւր մեր դրան նուիրակ,
Ո՞ւր զինեբաշխ մատռուակ,
Որ փրփրուն և անուշ
Մատուցանէր մեզ բաժակ:

„Կորա՜ն ամէնը անդարձ . . .
Թողին տխո՜ւր յիշատակ,
Եղանք գերի, ստրուկ
Մենք օտարի լծի տակ:

„Եւ Աստուծոյ ողջ գիշեր
Քնից զուրկ են մեր աչեր,
Որպէս սգուոր այրի կին
Մութ է մեզ լոյս ցերեկին:

Մենք մոռացանք մեր նախկին
Քնքուշ կենաց ճոխութիւն,
Սովորեցանք վշտերի
Տանել դառն ծանրութիւն:

„Հայրենեաց փառքի յոյսը
Է մեր միակ մխիթար,
Մենք ատումենք աշխարհի
Թոյլ հեշտութիւնքը վատթար:

„Մենք զոհեցինք մեր անձը
Սուրբ կրօնքի փրկութեան,
Եւ շահեցինք մեծ գանձը
Երկնքի արքայութեան:

„Մենք մերկացանք մեր նախկին
Դիպակ, կերպաս և սամոյր,
Եւ զգեցանք մեր հագին
Մազէ քուրձը սևաթոյր:

„Մենք թողեցինք մեր մանեակ—
Մարգրիտ, գոհար և ոսկի,
Եւ կրեցինք մեր վզին
Խաչն անմահ զինուորի:

„Մենք թողեցինք մեր փափուկ,
Ճոխ և հանգիստ քնարան,
Ուր հրեշտակ սփռում էր
Անուշ քունը մեր վրան:

„Եւ ընտրեցինք մահճակալ
Այն կոշտ և սառը գետին,
Ուր խոտեղէն փսիաթը
Է զինուորի անկողին:

„Մենք տիկնայք ազատազգի
Քնքուշ կեանքին սորված,
Մենք առանց պատղարակի
Չէինք գնում տնից բաց:

„Այժմ բոբիկ, մերկ ոտքով՝
Գնումենք աղօթքի տուն,
Մեր հայրենեաց փրկութեան
Խնդրել Տէրից օգնութիւն։

„Մի ժամանակ մեր մէջքը
Սեղմէր փառաւոր գօտին,
Այժմ կաշեայ քամարից
Սուրը հանումէ գետին։

„Մեր գլուխն էլ չունի
Իւր պսակը ծաղկազարդ,
Այժմ ամուր երկաթի
Ծածկէ նորան սաղաւարտ։

„Եւ մեր կուրծքը մշտապահ՝
Մի սրբարան գեղեցիկ՝
Պատումէ թանձր զրահ,
Ու նուրբ շապիկ թափանցիկ։

„Այլ և մեր դայիրան
Չէ պտտվում մեր ձեռքում,
Այժմ ծանր, լայն վահան
Մեր անձն է պաշտպանում։

„Այլ և մեր մատները
Չեն կրում թանգ մատանի,
Ու ապարջան զարդարէ
Մեր բազուկը հոլանի։

„Նոցա տեղակ մեր ձեռքում
Սուր և նիզակ են շողում,
Գուցէ մի օր պարսկին
Տանք մեր վրէժ դառնագին։

„Գուցէ մի օր ազատենք
Կրօն, Լեզու, Ազգութիւն
Զրադաշտի կրակէն,
Եւ մեր շքեղ յաղթութիւն՝—

„Սիրելեաց հետ միասին,
Այո, մի օր երկնքում,
Մեր քաջ Վարդանի հետը՝
Տօնենք մեր Հայկ հօր գրկում։“

Յանժամ ծերուկ Եղիշէն,
Նոցա վշտին մխիթար,
Այդ խօսքերով տիկնայքը
Քաջալերեց մեղմաբար.

„—Տիկնայք հայոց փափկասուն,
Գողտրիկ ոգիք իմ սիրուն,
Այո՛, ձեզնից քերովբէք
Ստացան անմահութիւն։

Դո՛ւք, զինուորեալ սրբուհիք,
Ահա՛, անթառամ պսակ՝
Բերում է ձեզ երկնքից՝
Հայոց պահպան հրեշտակ։

Դուք կանգնեցիք մի արձան
Անմահութեան Աստըծուն,
Որ դարերի մինչ վախճան
Պէտք է պաշտէ Հայաստան։

Վկայուհիք դուք հայոց,
Միշտ օրհնեալ է ձեր անուն,
Քանի կ'ապրէ հայ ազգը,
Եւ քանի կայ Հայաստան։

1865—Խօյ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՆԻՆՕ

ՆԻՆՕ

„Դուք տուէք մեզ լաւ մայրեր,
«Մենք կը տանք ձեզ լաւ որդիք.
«Օտարացած կնկանից
«Կը ծնուին օտար մանկտիք:“
* * *

Ա.

Տիկնայք այժմեան փափկասուն,
Այդպէս էին ձեր մայրեր,
Եւ նոցա անմահ անուն
Ապրում է այդքան դարեր:

Մի՞թէ նոցա օրինակ
Չէ գրաւում ձեր հոգիք,
Դուք էլ նոյնպէս սիրէիք,
Կրօն, լեզու, հայրենիք:

Դուք էլ նոյնպէս զոհէիք
Մեր աշխարհին, մեր ազգին՝
Ձեր կեանքի ճոխութիւնք,
Ձեր զարդերը Թանգագին:

Չի ձեր ապագայ սերունդ
Մի օր ասէր քաջաբար՝—
„Մենք մայրերի ենք ծնաւնդ,
„Որք սիրեցին հայ—աշխար:

Զո՞ւր է քո խրատ, խե՛ղճ պօետ,
Մեր յարգի արմենուհին
Չէ համաձայն քեզի հետ,
Զո՞ւր քրքրես վէպեր հին:

Ի՞նչ քարոզես.—լեզո՞ւ, կրօն . . .
Լաւ կայ, քամի ես փչում,
Դոցանից սիրուն Նինօն
Վաղ օրօք էր միշտ փախչում:

Նա ո՛չ միայն իւր զարդեր
Զոհ չէ բերում հայ—ազգին,
Որ չունէ նորա աչքում
Մի գրօշի արժէք, գին:

Այլ օտարի է նա զոհ,
Նուիրուած անձամբ ընաւ,
Եւ Աստծուց է դժգոհ,
Ի՞նչու ինքը հայ ծնաւ . . .

Զի հայ անունը նորան
Միշտ նախատինք է բերում,
Եւ այդ ստոր ծագումին
Նա դժուար է համբերում:

Բ.

Բախտաւոր է մեր Նինօն՝ —
Ջէհիլ, շնորհքով ու սիրուն,
Որքան ուզես, չափ չունի
Թիւն ամուսնի փողերուն:

Տունը՝ — կատարեալ ապարանք,
Գեղեցիկ, երեք յարկով,
Նորա շքեղ զարդարանք՝
Հրաշք է՝ իւր սարք ու կարգով:

Ծառաներն՝ — խմբէլ,
Սիրուն, արծաթ քամարով.
Տիկինն ինքն էր զարդարել
Մէկին ոսկի շղթայով:

Աղախիններ՝ — Օսէթին,
Ճոխ, փառաւոր են հագնուած,
Բջերի հետ քրչփրչում
Դրան յետքումը թագնուած:

Նա զբօսանք է գնում
Միշտ սեպհական իւր կառքով,
Թռչումեն սէգ նժոյգներ,
Հիացած է իւր փառքով:

Նստած է հաստ կառավար
Իւր մօրուքով փառաւոր,
Նորա կողքին՝ մի սիրուն
Խմբէլ սպասաւոր:

Ալ մահուդից է կարած
Չերքեսկան նորա հագին,
Եզերքն են զարդարած
Կլապտօնով Թանգագին:

Շողշողում է լուսի դէմ
Արծաթապատ խէնջարը,
Նազուկ մէջքը սեղմել է
Ոսկեջրած քամարը:

Հովի հետը խաղումեն
Գանգուրները փափախին,
Նորան տեսնող աղջկերանց
Սրտիկները կը բաբախին...

Գ.

Իսկ ամուսինն ամբողջ օր
Քարշ է գալիս բազարում,
Շահի—բխտի որսալէն
Նա երբէք չէ՛ բէզարում:

Ծանօթ և թէ անծանօթ,
Ամենի մօտ թեքվում է,
Բոլորին գլուխ է տալիս,
Քաղցր լեզուով խօսում է:

Քարոզում է ճշմարտութիւն,
Անկեղծութիւն է խրատում,
Խաբելն և կողոպտել
Նա ատում է և ատում:

Բարեպաշտ է պարոնը,
Վախում է նա Սրբերից
Եւ առանց խաչ հանելու
Չէ՛ անցնում ժամի դռնից:

Երբ նորա սուր մանգաղին
Ցաքող հունձք էր պատահած,
Մոռանում է Սուրբերը,
Ճշմարտութիւն և Աստուած:

Նա քերթում է իւր զոհը,
Թէև աղքատ, աննշան,
Իսկ ամբոխը պատվում է
Նորա զոյգ շ ք ա ն շ ա ն:

Եւ այդպէսով հաստացաւ
Նորա փորը, քսակը,
Քառսուն տարումը ստացաւ
Նինօի թարմ պսակը:

Իսկ Նինօն նորա համար
Էր մի փայլուն կարասի,
Որ լոկ պարծանքի համար
Մարդ իւր տնում կը դարսի:

Նա անձնական իւր սէրը
Այլ զուարճութեան էր տուած.
(Այդ գաղտնիք է, թո՛ղ մնայ,
Որ գիտէ միայն Աստուած:)

Բայց կատարեալ մի Սօղոմ
Էր նորա ողջ մաղազան,
. . . .
. . . .

Երեկոյեան խանութից
Ուղղակի տուն չէր գալիս,
Նա գնում էր կլուբում
Հօգսերը թափ էր տալիս:

Իմանում էր նորանոր
Նա համբաւներ զանազան,—
Ո՛ւմ ծախւում էր աճրթով
Էժան գնով մաղազան.

Ի՞նչ են տալիս կապալով,
Եւ կամ ո՞վ է մուշտարին,
Ո՞վ աշխատեց, ո՞վ վատնեց
Փօղլրաթի մէջ այն տարին:

Եւ մի կապէկով հերթը,
Մինչ կէս գիշեր այնտեղում,
Հօգսը ցրուելու համար,
Թուղթ, կամ նարդի էր խաղում:

Դ.

Իր տանումը նոյն գիշեր
Նինօն տալիս էր վ ե չ ե ր.
Պառաւք խաղումէն լօտօ,
Պար են գալիս ջէհիլներ:

Հագած թաւիշ և բեհեզ,
Եւ ժապաւէն գոյնզգոյն,
Որպէս նաշխուն թիթեռնիկ,
Թռվռում է մեր Նինօն:

Քաղցրիկ—մաղցրիկ խօսում է,
Նա ժպտում է, ծիծաղում,
Մանկահասակ հիւրերից
Սիրոյ վարդեր է քաղում. . .

Մերթ դաշնամուրի վերայ
Նորա մատներ վազումեն,
Ծափահարների գովասանքն
Անուշ ձայնին սաղումեն:

Մերթ վալսի խռովութեան մէջ
Պարում է որպէս մրրիկ,
Աննման է հասակը,
Շարժուածքը՝—խիստ գեղեցիկ:

Երբ նստել է նա յոգնած,
Որպէս մի կուռք, կամ արձան,
Երկրպագու տղերքից
Բոլորած է իր շրջան:

Ծառաները, ձեռքներին
Արծաթի մատուցարան,
Ներս են բերում, դուրս տանում՝
Քաղցրաւենիք զանազան։

Դահլիճի մէջ տիրում է
Անուշ լոյս, կերուխում,
Եռ են գալիս կրքերը,
Սէր և հրճուանք է բխում։

Հիւրերի մէջ կար մինն,
Որ բոլորից առաւել
Մեր Նինօի խելքն ու միտք,
Նորա սիրտն էր գրաւել։

Դա էր վայելչահասակ
Մի նորահաս չինովնիկ,
Շարժուածքով համարձակ,
Լեզուն՝ — քաղցր, գեղեցիկ։

Ե.

Վաղ—առաւօտ ամուսինն
Զարթնում է ուղիղ եօթին,
Թէյ է խմում կծուի,
Գնում դէպ՝ գործը խանութին։

Բայց Նինօն իւր սենեակում
Քաղցր քնով է պառկած,
Որովհետև գիշերը
Զափից դուրս էր նա յոգնած։

Նա զարթնում է միշտ տասին,
(Տիկինը ճիշտ էր այդ մասին)
Աղախին և ծառաներ
Պատրաստ են իւր սպասին։

Իւր երեխոյց կրթութեան
Նա դարձեալ հոգս է տանում,
Եւ ճիշտ մանկավարժութեան (??)
Մեթօդին է հետևում։

Երբէք չը խօսել հայերէն
Պատուիրեց կարպուշկային.
(Նա արգելած է որդուն
Կարապետ անուն տալին։)

Հօրը կոչել՝ — պ ա պ ա շ ա,
Մօրը կոչել՝ — մ ա մ ա շ ա,
Իսկ փոքրիկ աղջկան՝
Ո՛չ Մարիամ՝ — այլ Մաշա։

Առաւօտեան „Հայր մեր"
Միշտ օտար լեզուով կարդալ,
Տօն օրերին մօրը հետ
Հայ եկեղեցին չ'երթալ:

Եւ դետսկի սադումը
փայտէ ձիով արշաւել,
Օտարուհի մադամէն
Տուդի — սուդի սովորել:

Տնտեսական գործերին
Նա դարձեալ հոգս է տանում,
Նոր — մօդնի տարազների
Ժուռնալներ է ստանում:

Ֆրանսուհի դերձակը
Խիստ շուտ շուտ է յայտնվում,
Տիկնոջ կրթուած ճաշակը
Նա գովում է և յարգում:

Թէ և նա իր կեանքում
Խոհանոց ոտք չէ կոխում,
Բայց ուտելեաց տեսակը
Բազմացնում է և փոխում:

Նա ապրում է խիստ շքով
Եւ շատ գոհ է իր բախտից,
Մի ցաւ նորան տանջում է,
Ցաւն ամուսնի դարդերից . . .

„Այն բազարի կատուին"
Խրված, կորած փողոցում,
Որոյ ամբողջ մարմնից
Միթկալի հոտ էր փչում:

Ուղիղն ասած, մե՛ծ ցաւ է
Պանսիօնումը ուսեալ,
Նօվօմօդնի բարիշնին
Կուպեց մի մարդ ունենալ . . .

Զ.

Ժամը զարկեց տասն և մէկ.
Մեր տիկինը քնքշիկ,
Խմեց թէյը պատուական,
Վայելեց նախաճաշիկ:

Այնուհետև քանի ժամ,
Սիրուն Նինօն պճնուէր,
Հայելուց չէ հեռանում,
Սանրում է իր մազեր:

Օծանւում է իւղերով,
Քսվում է դեղերով,
Զարդարում է իր անձը
Արուեստական գեղերով:

Դէմքը կոկած ըշպարով,
Զգած նրբիկ երեսկալ,
Սկսում է բուլվարով,
Նազ նազելով թրև գալ:

Փքուած դմակը ցից տրած,
Յետքից քարշ տալով քղանց,
Աւելում է սալատակ,
Փոշին թանձր է չափազանց:

Ագահ աչքով անդադար
Խիստ նայում է աջ ու ձախ,
Գուցէ ն ո ր ա ն ռաստ գար
Եւ թեւքիցը ընկներ կախ:

Նա գտաւ իր ի դ ե ա լ —
Մի նորահաս պատանի,
(Մարդկայնութիւնը թողեալ)
Ամէն գործում պիտանի . . .

Բայց ո՞վ ունի իրաւունք
Ճաշակը բռնաբարել,
Սիրահարուած մի գլխին
Զուր խրատներ համբարել:

Նորա հետ քանի պտոյտ
Շուռ է տալիս բուլվարով:
Անցաւ կէսօր: Բայց ինչ փոյթ.
Նա զբաղուած է իր ընկերով:

Սիրուն, քաղցրիկ խօսքերով
Տաքացած է մեր տիկին,
Ուխտ ուխտեցին երկուքով,
Երդմամբ կրկին և կրկին:

Գաղտնի դաշինքը կռեցին:
Գո՞հ և ուրախ է Նինօն:
„Ֆայտօ՛ն, սիւդա, ֆայտօ՛ն“
Նոքա յանկարծ գոռացին:

Կառք է նստում փառաւոր
Մեր տիկինն ուխտաւոր,
Նորա հերոսն իր կողքին
Տեղ է բռնիլ բախտաւոր:

Հեռու, դէպի Մուշտայիդ
Ջափեն երկար ճանապար,
Բայց ի՞նչու իջան կառքից,—
Այդ սատանան է խաբար։

Է.

Տուն է դառնում նա յոգնած,
Ճաշից անց է երեք ժամ.
Վաղուց անուշ համեմած
Սպասում է ճոխ սեղան։

Ախորժակը խիստ գուլ է
Մեր տիկնոջը քնքշիկ,
Եւ մարմինը խիստ թուլ է,
Չէ վայելում իւր ճաշիկ։

Նորա սիրտն ու ախորժակ
Իւր ի դ ե ա լ ն է տարել,
Ջուր բարկանում պօվարին
Ճաշը վատ է պատրաստել.

Երկար այնպէս խռոված,
Նա տանջվում է, մեռանում,
Աֆիցերի պատկերը
Աչքից չէ հեռանում։

Աշխատում է գէթ քնով
Հոգսը թափել իրանից,
Բայց Մորփէոս խէթ աչքով
Խոյս է տալիս նորանից։

Մինչ տիկինը, զմայլուած
Վրդովմանց մէջ հոգեկան,
Մոռացել էր իւր անձը,
Տուն, ընտանիք, շրջական,

Խորովածը ներքին յարկում
Ախորժ հոտով բուրում էր,
Բաժակները չրխկըխկում,
Օսեթուհին պարում էր։

Երգ են երգում ծափ տալով,
Ծառաններն իմերէլ,
Պար են գալիս, հուփ տալով
Աղախինեաց մէջքն անարգել։

Փոքրիկ կարպուշկան, Մաշան՝
Թողին խաղը պարտիզում,
Ծառաների թամաշան
Նոքա տեսնել են ուզում։

Ծափ է տալիս կարպուշկան,
Մաշան խիստ ծիծաղում է,
Օսեթուհին լեզգինկան
Հիանալի՜ խաղում է։

Այդ բաքոսեան հանդիսէն
Նինոյի զաւակները —
Սովորումեն խիստ շատ բան
—Այն անմեղ գառնուկները...

Ը.

Այն միջոցին Աղալօն
Թէյ էր դարսում մի ղութում,
(Դա Նինոյի այրին էր)
Գործում էր իւր խանութում։

Տխրամած էր այն ժամուն
Նորա դէմքը վայրենի,
Բարկութիւնից կատաղած
Էր, որպէս մի բորենի։

Մոռացել էր, կարծես թէ,
Այնտեղ դրած իւր սեղան,
Որ ամեն օր տանիցը
Բերում էր պստիկ տղան։

Ըշտապ, ըշտապ, անհանգիստ,
Նա ապրանք էր համբարում,
Հրամայում էր թաքցնել
Իւրեանց ներքի ամբարում։

Բայց ի՞նչ գաղտնիք կար այնտեղ,—
Չէ նպատակին մեր խնդիր,
Միայն օտարի անունով
Էր ամբարին վերնագիր։

Նոյն րոպէին ներս մտաւ
Նորա հին բարեկամը,
Նորա միակ մտերիմ՝—
Սնանկացած Ցականը։

„Քէփդ վո՞ւնց է, Աղալօ,"
Ծեր Ցականը հարցրեց.
—„Բանիրըս վատ է գնում..."
Աղալօն պատասխանեց։

„Ի՞նչ ես խօսում, դժուա՜լ ես,"
Ցաւաշ տարաւ Ցականը.
—„Էգուց, էլ օր, ո՞վ գիտէ,
Կը փեչատեն իմ դուքանը..."

Թ.

Մինչ զանգակը մեղմ ձայնով
Սրբարանի գագաթէն
Աւետումէր երեկոն,
Նինօն պառկած էր արդէն։

Սթափւում է նա իսկոյն.
Նորա գունատ, թարմ թշեր
Ստանումեն վարդի գոյն:
„Ի՞նչպէս վարել այս գիշեր:“

Մի տեղ տալիս են վէչեր,
Միւս տեղ՝ բալ է տնական,
Սանսուսիում կօնցերտ կայ,
Միւս տեղ տօն է մանկական:

Ո՞րտեղ գնայ մեր Նինօն,
Չը գիտէ ի՛նչ վճռել,
Եւ նոյն ժամուն իւր տանում
Մի պարոնի է խօսք տուել:

Դժբախտաբար այն գիշեր
(Մեծ է արդէն այդ կորուստ)
Թատրօնում կայ բենեֆիս,
Ներկայացնումեն „Ֆաուստ:“

Նա, անհանգիստ տանջուելով,
Խիստ դժուար էր համբերում,
Յանկարծ Խմերէլ ծառան
Մի տոմսակ է ներս բերում:

Բաց է անում տոմսակը,
Գիրը նորան ծանօթ է,
„Կրուժօկում, իմ հրեշտակ,
„Սպասումեմ այս րոպէ:“

Լակոնական այն երկտող
Նորա սրտում ձգեց դող,
Որպէս վառէ քաջ զինուոր
Պատերազմի հնչող փող։

Զարդարւում է նա շքեղ,
Որպէս մի նոր Սիրենա,
Նորա դէմքի շինծու գեղ,
Ով որ տեսնէ՝ — սիրէ նա:

Կառք է նստում նա շուտով
Դիմել դէպ՝ իւր նպատակ,
Սլանումեն նժոյգներ,
Որոտում է սալայատակ:

Գնա՛, կորչի՛, գլուխ քարին,
Նա և իւր խենթ խելյալ,
Հայի կեանքում նոր ախտ է
Լկտի տիկին, վէճեր, բալ...

Բայց դոցանից են հեռու,
Որպէս երկինքն երկրից,
Ցինկեայք հինգերորդ դարու
Եւ Եղիշէն ոգելից...

Ժ.

Անցաւ քանի մի ամիս.
Հրապարակական աճուրդով
Ծախվում էր Աղալօի
Կայքն, աշխատած քրտինքով...

Մեռած, վշտահար դէմքով՝
Կանգնած էր քաղաքացին,
Որոյ երեխայք շուտով
Կարօտ են պատառ հացին:

Իսկ ամբոխի դատմունքն
Էր դոյնզդոյն, զանազան,
Ամեն մինը նոցանից
Խօսում էր այդպիսի բան.—

„Իւր մեղքերի պատճառաւ
Նորան պատժեց Աստուած,
Նորա գլօշը հազար
Մարդի արնով է ներկուած:“

Միւսը՝ — „Հարամ փողի վերջն
Աշա՛, այդպէս է լինում,
Քանդի քամու բերածն՝
Էլի քամին է տանում:“

„— Խեղճի տունն — այլն ասաց. —
Քանդեց իրա կնիկը.
Ի՞նչ մեր բանն է, ախպէր ջա՛ն,
Ն օ վ օ մ օ դ ն ի յ աղջիկը...“ —

1872 — Թիֆլիս.

ԱՐԱՅՆ

ԳԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄԸ

ԱՐԱՅՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄԸ

(Առասպել)

„Եւ գյուութիւն (Շամիրամայ) ի ծով,
„և քան ի նմանէ՝ ուլունք Շամիրամայ
„ի ծով: Այլ թէ ախորժես առասպելս,
„և Շամիրամ քար՝ առաջին քան զնիորէ:»

Խորենացի

Ա.

Մութ գիշեր էր: Ոչ մի աստղեկ
Չէր երևում երկնքէն
Եւ լուսինը՝ սգաւորի պէս՝
Գունատուած էր իւր դէմքէն:
Իսկ կայծակը հրեղէն սրով
Կտրատումէր ամպերը,
Եւ որոտը՝ գոռգոռալով՝
Դղրդումէր լեռները:
Մրրիկը կատաղաբար
Մռնչումէր սոսկալի,

Ահ ու զարզանդ փէր էր բերում
Տարտարոսից լուլի:
Հազարամեայ ծերցած կաղնին
Խլումէր նա արմատէն,
Գազաններն իւրեանց որջում
Սարսափել էին արդէն:
Հեռու դաշտում, ծովակի մօտ (*)
Տեղ տեղ վառվումէր կրակ,
Զինուորական վրաններում
Աղօտ փայլումէր ճրագ:
Բաբելական յաղթող զօրքի
Զետեղուած էր անդ բանակ,
Գիշերապահ զինուորներով
Պատած էր իւր շրջանակ:
Այն պաշտումը շատ դիզադէզ
Ընկած էին դիակներ—
Քաղդէացի, հայ զինուորներ,
Ասորի և Պարսիկներ:
Եւ այն տեղում անթիւ զէնքեր՝—
Տէգ և վահան, աղեղ, նետ,
Այն քաջերի դիակի մօտ,
Ընկած էին նոցա հետ:

(*) Վանայ ծովակը:

Այն դաշտը ներկայացնում էր
Զարհուրելի տեսարան՝—
Մինը ձեռքով բռնած ունէր
Կրած վէրքին լայն բերան,
Ողորմելի նա իւր ձայնով
Մորմոքում էր՝ ախուվախ,
Եւ իւր վերջին հանգստութեան
Նա կոչում էր անգութ մահ:
Մինն, արդէն հանգստացած
Խորին քնով օրհասին,
Իւր ընկերին գիրկն ածած,
Ննջել էին միասին...

Բ.

Իսկ կռուի ահեղ դաշտում
Թափառում էր Շամիրամ,
Հետն առած իւր նաժիշտներ—
Մանուկ կուսանց ողջ երամ:
Նա տխուր էր... սգաւորի պէս,
Լաց էր լինում լուռ, մնջիկ,
Եւ առջևից աղօտ լապտեր
Քարշ էր տալիս մի աղջիկ:
Դիակների մէջը մտած,
Նա յուսահատ շրջում էր,
Եւ արիւնը նորա ոտքերն

Կարմիր գունով թրջում էր:
Պտռում էր նա՝ մորմոքելով՝
Մինին ահեղ այն դաշտում,
Որին սիրում էր Թագուհին,
Որպէս աստուած էր պաշտում:
Յանկարծ վազեց մոլեգնաբար
Եւ նա գրկեց մի դիակ,
Հրաշագեղ էր այն քաջը,
Մանկահասակ պատանեակ:
Ներկուած էր նա արեան մէջ,
Որպէս կարմիր մի ծաղիկ,
Եւ մրայօն նորա աչեր
Դեռ ժպտէին քաղցրիկ:
Նա ձախ ձեռքով կրեր վահան,
Աջում՝—տէգ ահագին,
Եւ պողպատից թանձր զրահ
Զգեցել էր իւր հագին:
Գլխին ունէր փետրազարդ
Արքայական սաղավարտ,
Հսկայատիպ էր այն քաջը—
Հզօր, ահեղ տղամարդ:
Զէր հասարակ նա մի զինուոր,
Կամ մի արի զօրապետ,
Այլ նախարար պատերազմող,

Ոչ Թիկնապահ, ոչ ապետ:
Արծուանիշ շքանշան
Կրէր նորա պարանոց,
Գոհարեղէն նորա քամար
Մթումը փայլէր որպէս բոց:
Նորա դէմքն և կերպարանք,
Այնքան վսեմ, վեհաբար
Արքայազարմ մի իշխանի
Բերէր հզօր ինչ տիպար.
Նա վաւաշոտ Շամիրամի
Էր ցանկութեան ցնորքը,
Որոյ համար նա կոտորեց:
Այնքան զինուորն ու զօրքը:
Բայց անբախտի վառուած իղձը
Մնաց նորա սրտումը,
Զի այն քաջը մահուան քնով
Ընկաւ կռուի դաշտումը:

Գ.

Իսկ Թագուհին այն տարփաւոր
Դիակից չէր հեռանում,
Առած նորան իւր գրկի մէջ
Մրմնջում էր, մեռանում...
Համբուրում էր նորա թշեր,
Համբուրում էր աչք և ունք,

Արնով ներկուած գանգուրներին
Հպեցնում էր իւր շրթունք:
Եւ երբեմն մրմնջելով
Ճնշում էր պինդ իւր կուրծքին,
Լուանում էր նա արտասուքով
Արիւնը նորա վէրքին:
Երկար այնպէս մոլեգնաբար
Գրկած ունէր նորա դին,
Եւ վարդագեղ նորա արեամբ
Մարել կամէր հուր սրտին:
Մինչ վերջապէս տուեց հրաման
Նաժիշտների նա խմբին,
Տանել շուտով դէպ՝ իւր վրան
Ցանկալի գիւտն այն անգին:
Եւ աղջիկները մատղերամ՝—
Հաւերժհարսունք գիշերային.
Իւրեանց փափուկ կուրծքի վերան
Առին դիակը բոսորային:
Շուտ հասուցին Շամիրամայ
Ոսկեթելով գործած վրան,
Խունկ, կնդրուկ և ծաղիկներ՝
Շատ ցանեցին նորա վերան:
Իսկ Թագուհին արեց հրաման
Ողջ նաժիշտներին հեռանալ,

Ոչ ոքին իւր մօտ չը թողուլ,
Իւր պատուէրը չը մոռանալ։

Դ.

Նա կախարդ էր, ունէր յուռութք
Եւ յուլունքներ դիւթական,
Քաղդէացի քաւդեայներից
Ուսաւ արհեստը մոգական։
Նա վհուկ էր՝ — սերտ բարեկամ
Աներեւոյթ դիւաց զարմին՝
Եւ ախտարքին իւր զօրութեամբ
Շուտ կախարդեց քաջի մարմին։
Եւ շնորհիւ նորա հմայքին
Ահա՛ իջան Յարալէզ դիք,
Ոսկիամօրն Անահիտի
Էին դստերք և որդիք։
Եւ Յարալէզք սկսեցին
Լիզել վէրքը դիակին,
Բժշկուեցան խոցոյն նոքա,
Շունչ առաւ քաջի հոգին։
Եւ շատ չանցաւ, շուտ ջերմացաւ
Այն սառուցեալ, մեռած դիակ,
Կարծես նորա երակներում
Կենդանութեան վառուեց կրակ։
Եւ ի՛նչ հրաշք, հզօր Աստուած,

Նա բաց արեց աչքերը,
Որպէս անուշ քնէն զարթնած,
Կանգնեցաւ ոտքի վերայ։
Ուրախացաւ խիստ Շամիրամ,
Ցնծութեանը չը կար չափ,
Ո՞վ կարող էր յայնժամ զսպել
Նորա սիրոյ թունդ և թափ...
„Փառք, ձեզ աստուածք, հանգստացաւ
Այժմ իմ սիրտն, իմ հոգին,
„Զի ես արդէն կարեմ կոչուիլ
Այս րոպէից Արայի կին։
„Ահա՛, ահա՛, իմ նազելի,
Այժմ ինձի դու կը սիրե՞ս,
„Մինչ ե՞րբ, անգութ, դու քո սիրով
Իմ սրտիկը պիտի այրես։
„Ես քո կինն եմ այսուհետև,
Դու կատարէ՛ իմ ջերմ փափագ,
„Քեզ կը բաշխեմ ես իմ երկիր,
Արքայական իմ գահն ու թագ։
„Քեզ կը բաշխեմ Բաբելօնի
Օդակառոյց իմ դրախտը,
„Դու կատարէ՛ իմ խնդիրքը,
Ինձ շնորհէ անվերջ բախտը։"

Ե.

Այդ խօսքերով նա մօտեցաւ
Արդէն ափշած մեր Հայկազին՝
Եւ տարփաւոր իւր թեւքերը
Կամէր փաթթել նորա վզին:
Իսկ քաջազուն վեհ հերոսը
Այդ խօսքերից խիստ զարմացաւ,
Եւ կատաղի բարկութիւնն
Աչքերումը բորբոքեցաւ:
Եւ նա գոռաց սեւ ամպի պէս.
—„Կորչէ՛ հեռու, լկտի դու կին,
Ի՞նչ չար բախտով ես քո այստեղ
Գարշելի դէմքը տեսայ կրկին:
Իմ մանկական պսակն անարատ
Ես քո սիրով ո՞րպէս պղծեմ,
Նինուէացի ես տրփուհիդ
Անարգութեամբ իմ գիրկ ածեմ:
Գնա՛, կորէ՛, չե՛ս ինձ պիտոյ,
Եւ ինձանից դու հեռացի՛ր,
Այդ ցնորամիտ բաղձանքներովդ
Դու ինձ համար մի՛ մտածիր:
Հայաստանի դուստրներից
Ես ունեմ թագուհի արդէն,
Որ սիրասուն ածեց զաւակ

Ինձ կուսական իւր արգանդէն:“ —
Սպառնալից այդ խօսքերը
Շամիրամին չ'ազդեցին,
Սիրաբորբոք նորա սրտէն
Վառուած խիղձը չը զատեցին:
Բաբելական աստուածուհիք
Իւր օգնութեան նա կանչեց,
Խունկ և զոհեր շա՛տ խոստացաւ,
Շա՛տ խնդրեց և աղաչեց.
Որ դիւցական արբեցութեամբ
Գինովցնեն այն քաջ հերոս,
Թափեն նորա երակներում
Սիրոյ հեղուկ՝—նեկտար, ամբրոս:
Գուցէ դիւթուած աներեւոյթ
Հրապոյրներով նորա հոգին,
Յակամայից նա կատարէ
Վառուած խիղձն իւր փափագին:
Բաբելական աստուածուհիք
Իւրեանց ձիգը դրին ի գործ,
Սիրոյ ախտով կախարդելու
Նորա սիրտն՝ արին մեծ փորձ:

Զ.

Հայրն աստուծոց, մեծն Արամազդ,
Արարատայ գագաթէն

Այդ հանդէսը կռուի դաշտում
Վաղուց դիտումէր արդէն։
Նորա շուրջը հայոց երկրի
Բոլորել էին ողջ դիք՝—
Հայկ, Անահիտ և Աստղիկ,
Ցապետոսթէ, իւր որդիք։
Խիստ բարկութեամբ զննումէր
Նա այն դաշտը արիւնոտ,
Ուսկից անթիւ կոտորածի
Դեռ փչումէր մահուան հոտ։
Ցանկարծ նորա աչքին դիպաւ
Շամիրամայ մեծ վրան,
Բաքոսական այն հանդէսը
Զարմացք բերեց խիստ նորան։
Նա տեսնումէ ախտաբորբոք
Նինուէացի Թագուհին,
Որ աշխատումէր կախարդել
Ողջամիտ հայ դիւցազին։
„Արմենակ,“ կոչեց Արամազդը,
Վառուեց աչքերը կապուտակ,
„Թռի՛ր, գնա՛ և շուտ հասի՛ր,
Քաղդէացւոց դու բանակ,
Եւ ազատի՛ր Շամիրամից
Իմ գեղեցիկ, քաջ Արան,

Եւ մի՛ թո՛ղ տուր, որ Թագուհին
Իւր սիրով խաբէ նորան։“

Է.

Արմենակը կատաղաբար
Առեց լախտը ահագին,
Մի րոպէումը նա հասաւ
Բաբելացւոց բանակին։
Շուտ նա մտաւ Շամիրամայ
Գեղեցկազարդ մեծ վրան,
Ուր կախարդիչ սիրոյ ցնորքով
Դեռ նոր արբուած էր Արան։
Եւ Շամիրամ պատրաստւումէր
Սրտի կամքը կատարել,
Արմենակի երեւոյթը
Նորան ստիպեց դադարել։
Ձեռքը ձգեց նա Արային,
Բռնեց նորա գլխակէն,
Յափշտակած շուտ դուրս հանեց
Քաղդէացւոց բանակէն,
Եւ հողմերու թեւքի վերա
Տարաւ նորան Արարատ,
Շամիրամայ չարէն մնաց
Նա միշտ մաքուր, անարատ։
Այնտեղ հայոց աստուածներին

Գիրկ է առնում քաջ Արան,
Քաղցրահնչիւն նուագներով
Ողջունում էին նորան:
Զի նա պահեց միշտ սրբութեամբ
Մաքուր ողջախոհութիւն,
Եւ չ'աղարտեց իւր պատիւը՝—
Դիւցական անմահութիւն:
Այնտեղ իւրեան ընկերացաւ
Եւ Նուարդն իւր սիրուն՝—
Թագն ու պսակը Հայաստանի
Շքեղագեղ կոյսերուն:
Մինչ եօթն օր, եօթն գիշեր
Տօն կատարեն հայոց դիք,
Անուշ քնար հնչվում էր,
Երգում էին դիցուհիք:

Ը.

Բարկութիւնը Շամիրամայ՝—
Սարսափելի, անպայման,
Յանկարծակի թանգ կորստից՝—
Ո՛չ չափ ունէր, ոչ սահման:
Նա դուրս թռաւ իւր վրանէն,
Որպէս առիւծ կատաղած,
Մռնչումէր վազվզելով,
Որպէս խելքից ցնորուած:

Վազեց, վազեց այն դաշտումը,
Սար և ձոր էր թափառում,
„Արա՜յ“—Արա՜յ“ կոչելուցը
Նա բնաւ չէր դադարում:
Ցնորուա՛ծ էր այն խղճալին . . .
Նա վազում էր դէպի ծով,
Եւ խորութեան նորա միջին
Մտնել կ'ուզէր անվրդով:
Եւ նա ձգեց ծովի միջում
Իւր յուռութքն ոսկեդոյն,
Ալեկոծուեց անհուն ծովը
Եւ լեղի դարձաւ իսկոյն:
Եւ մարեցան նոյն րոպէին
Նորա կրքերը կատաղի,
Եւ Շամիրամ ձևակերպուեց
Անշարժ արձան մի աղի:
Երբ մարմնից բաժանուեցաւ
Տարփաւոր նորա հոգին,
Նոյն րոպէում նա ստացաւ
Կերպարանքն աղունակին:
Մինչև այսօր կոկորդային
Բարբառով ասօրական՝
Դեռ կանչում է աղունակը՝—
„Վա՜յ, Արայ, իմ սիրական . . .“

Մինչև այսօր աղունակը
 Բորբոքվում է, մրմնջում;
Զի վավաշոտ Շամիրամայ
 Հոգին կրէ իւր միջում:
1857—վան

ԿՏԱԿ

ԿՏԱԿ

Ա.

Թըվին հազար ութ հարուր
Օխտանասուն ու մեկին,
Հայոց քրօնիկօնի (?)
Գվինօբիս Թըվի հընգին:

Ես թօխմախինց Զաքարըս—
Դեղձեյուլ ու մամեյուլ՝
Օջախի վուրթի, քաղկցի,
Օխտը պուրտից պատուավուր,

Ուշքս ու միտքս գլխումս,
Լավ ուղուփով, խելացի,
Իմ մեղավուր ձեռքովս՝—
Էս անդերձը գըրեցի:

Իմ խոստովանահեր տեր—տերը՝
Տեր ձիպինն ու Բաստամը,
Սօսիկօն ու Թաթուլը,
Զուրմնեվէտ ին մօծամայ:

Ճակտիս գիրը Թամամ է,
Ես էլ շատ չիմ ապըրի,
Երեք քսան տասներեք
Անց իմ կացրի ես տարի:

Ես շատ ումըրը քաշեցի,
Շէն մնայ Աստծու տունը,
Քեփ ու սափայ արեցի
Դարդ չը մնաց իմ սրտումը:

Փուղ ու փարայ ղազեցի,
Ցուն ու տիղի տեր դառայ,
Փողոցումը դուքաննիր
Ու մե քարվանսըլայ առայ:

Աշխըրքիս ամէն փառքիրը
Վայելեցի, լիացայ,
Մադրամ փուղիցը մենակ
Ջըլիս ես չը կշտացայ...

Կախեթու գինին էնքան,
Վունց որ իմ դեղի կաթը,
Ես շատ անուշ արեցի,
Առայ նրա լազաթը:

Դօշ, ղուրղինէ, խնդլեայէն
Միշտ դրած էր իմ սուփրում,
Առանց Թերխաշ ցօցխալի
Ճաշ չիմ կերի իմ օրում։

Օրթաճալի բաղերում
Քէփ իմ արի համաշայ,
Իմ ղուռնայի ձէնէմէն
Օ՞վ չէր գալի Թամաշայ։

Բայց ծերութեան հասակում
Դարդս էլաւ անդարման,
Էլի աղքատ, առանց փուղ,
Ես գնումիմ գերեզման . . .

Բ.

Իմ քաղկըցի ախպրտիք,
Մեռնիմ ձիր աղնիւ հոգուն,
Ձի՛զ ես օրթումեմ տալի՝
Ձրկինինց էկէղեցուն.

Ձի՛զ ես օրթումեմ տալի՝
Սուրբ Մօղնի, սուրբ Թէլէթին,
Սուրբ Ձիգրաշնին զօրավոր,
Մէկէլ սուրբ Շահնաբաթին.—

Վուր դուք էս օրէս էդնէն
Էս իմ անդէրձը կարթաք,
Ու իմ դըջլտած հօքուն
Օղօրմին էլ հիտը տաք:

Իմ կինքիս պատմութինը
Ձիզ թո՛ղ ըլի օրինակ,
Ինձմէն դուք խիլք սովրեցէք,
Վուր չը մնաք խիղճ, դարտակ:

Էրբ արևի դուք ծէքին
Աստըծուն աղօթքնիր կօնիք,
Ան ձիր դուշմնի գլխին՝
Ուշունց, անիծք կու թափիք,

Պարտական իք, թէ չասիք
Էս անիծքնիրն՝—էսթավուր՝—
„Սուրփ Բէթխային, Թածմինդայ,
„Ծիրանավուր զօրավուր,

„Ըշկօլէքը, վարժատնիր,
„Արէք քարքանդ, բրիշակ,
„Վուր միր տղէրքը խիլքէմէն
„Զըրլին, ու չը դառնան էշակ։“

Ա՜խ. ի՞նչ ասիմ, ախպըրտիք,
Ըշկօլէք մօզօնողին,
Վուրթիքս ուսման տուի,
(Ափսո՜ս մըսած իմ փուղին . . .)

Բայց դուս էկան շարլատան,
Իմ տունն արին վէրան,
Շալի — բիստիս մըսեցին,
Ջան ու ջիգարս կէրան . . .

Գ.

Իմ քաղկըցի ախպըրտիք,
Բարեկամնիր, իմ ընկէրք,
Հեռու պահէք ըշկօլէմէն
Ձիր տղէրքն ու աղջըկերք։

Էդ ուսում ասած բանը՝
Դրուստ անիծք է, գիմա,
Օվ վուրթուն ուսում կու տայ,
Նա տուտուց է ու սարսաղ։

Ձիր տղէրքը թո՛ղ սովըրին
Վրացէվար գրել, կարթալ,
Էլ չէ՛ նրանց հարկավուր
Ուրիշ բանով ուսում տալ։

Աղջկերանցը խօ պէտքը չէ՛,
Վուր էստուն էլ սովըրին,
Ու սիրեկնին գիր գըրին,
Ջըհէլ տղէրք հուրս անին։

Ձիր քուլփաթի հիտ խօսիք
Ամէն վուխտ վըրացէվար,
Հայուց լիզուն պէտքը չէ՛
Անձուռնի է ու խաւար։

Թէ հայէվար դուք խօսիք,
Ան սովըրէցընիք ձիր տղէրքին,
Աստուած վըկայ, էն կինքում
Էլ չէ՛ պռծնի ձիր հօքին։

Ձիդ կըպրի կարսումը
Կ'էրէ վառած թէժ կըրակ,
Ձուն ձիր վուրթիքը կուլին
Կռօ ու զօկ, շանձըրադ։

Հայէվար դուք մէկ մէկուն
Ձըլի վուր բարևնիր տաք,
Ան ձիր մեռըլի հօքուն
Էդ լիզվով աղօթք կարթաք։

Ջուն հայեվար աղօթքը
Աստուծ խակի չի լըսի,
Աստուծ ինքը վրացեվար
Միշտ կօսէ ու կու խօսի:

Ձիր հնամիքը, տղամարդիք,
Թէ մեռըլին կօնին սուք,
Վրացեվար մուխը ասին,
Վուր ընղունիլի արտըսուք:

Թէ վուր Թէլէթ, Խութէրայ
Ձիր քուլփաթով ուխտ կէրթաք,
Վրացեվար սըրփերուն
Ձիր աղօթքնիրը կարթաք:

Վուր ձիր լիզուն հասկանան,
Ու կատարին ձիր մուրազ,
Հայուց լիզուի աղօթքով
Սըրփերուն կօնիք տնազ:

Դ.

Ձիր տներումը հայերից
Դուք չը պահիք քօծ ու բիջ,
Թէ վուր պահիք ձիր գլխին
Կուլի Աստծու մինծ պատիժ:

Ջունքի ձիր պատիկնիրը
Կուլի մուր Նրանցմէն սովրին
Հայուց լիզուի խօսիլը,
Կռօ դառնան ու գըժվին:

Միշտ Վրացի, Իմէրէլ,
Թուշ ու Խէվսուր, Օսէրուն,
Պահեցէք ձիր տներում,
Վուր լաւ կաթին ձիր վուրթուն:

Ձիր դուքներու դավթարը
Ձըլի վուր գրիք հայեվար,
Վրացեվար գըրեցէք,
Լաւ չնուքով, մարթավար:

Թէ հայեվար դուք գրիք,
Կուլի տուտուց մէ հեքիաթ՝
Ու Աստուծ ձիր առուտըրին
Ձի տայ խէր ու բարաքաթ:

Ձիղ դէլթաղվայ, մէ բան էլ
Միտս էրի սուրբ Թէլէթ,—
Թէ ուզումիք փուղ դաղիլ՝
Պիտի ծախիք ղալը բիլէթ:

Շանփուրի տղէն, Բուրնութին
Հազարներով դադեցին,
Զագրանիցէմէն բերին
Շինովի ասիգնացին։

Ձուն հալալ աշխատանքով
Օ՞վ է դաղի միլլիօնիր,
Հառամ փուղն էր, վուր շինից
Փաբրիկէք ու մինծ տընիր։

Ուխտ դրեցէք ձիր կինքում
Տասն անգամ կուտր նընինիլ,
Ու հարուր հազարներով
Ամէն գամին կըլանիլ։

Էն ժուխտը դուք կու թողնիք
Ձիր տղերանցը, անգումման՝
Միլլիօններով մանէթնիր
Ու հարուր հազար թումման։

Էստունցմէն մի՛ ամաչիք,
Էս է հիմի ադաթը․
Հառամ փուղը հալալ է
Ղունց վուր ձիր դէղի կաթը։

Նէտավը՛, ինձի Աստուած
Ծիրութինս դարձընէր,
Ան իմ դէղէն՝—կէկէլօն
Ինձ նուրից վուրթի ծնէր,

Մէկէլ կուտր նընինէի,
Մէկէլ փօղրաթ բռնէի,
Ու նրա էղնէն ուրախ,
Հանգիստ սրտով մեռնէի...

Ե.

Բայց հիմի ջէր աշխրըքից
Չէ կշտացի իմ աչքը,
Երբ վուր ես փիքր իմ անում՝
Էն կինքումը բան չը կայ...

Աստումին, բաղ ու բաղչայ
Ունի Աստըծու դրախտը,
Թէ ինձ էնտեղ կու տանին,
Ի՞նչ լաւ կուլի էն վախտը։

Ա՛խ․ մին Օրթաճալի պէս
Վ՞ունց կուլի էն բաղն ու բաղչէն,
Օ՞վ է տըւի էնտեղ քէփ,
Զուռնայ, դափն ու քամանչէն։

Ասումին, արդարներուն
Գինի կու տան անպատճառ,
Բայց էն գինին վո՞ւնց կուլի
Կախեթու քաղցր մաճառ:

Ասումին, էն կենքումը
Մարդիք վունչինչ չեն ուտում,
Աստըծու փառքով կշտացած,
Մարդն ուրախ է իր սրտում:

Դէ՛, արի՛ դու դիմացիր,
Ի՞նչ պիտ՚ ըլի քու հալը,
Երբ սուփրումդ չունենաս
Գինի, զուրգէլ, խիղլալայ:

Ասումին, էն կենքումը
Մարդիք տըներ չեն շինում,
Վուչ մշակներ բանումին
Միրզօեվի մաշինում:

Վուչ Աստուծն իր փուղով
Շինում է կաղարմայ,
Վուչ հրիշտակներին պրավիանտ,
Կունենայ մարդ հուզըումայ,

Թէ վուր ղուրթ ըլի էստունք,
Վա՛յմէ, էլ չի ըլի փօղրաթ,
Ի՞նչով պիտի փուղ դաղխ,
Տուն, տեղ պահէս ու քուլփաթ:

Ջի՛ղ գեթաղվայ, քաղկըցիք,
Էդ խօսքերը միտը բերէք,
Քանի սաղ էք քէփ արէք,
Փուղ դաղէք, անուն հանէք:

Արքայութենում, ախպըրտիք,
Էնտեղ վունչինչ ձիգ չեն տալ,
Վուչ ստանխալաւ, վուչ աննայ,
Վուչ օսկէմէն մինձ մէնղալ:

Արքայութենում, ախպըրտիք,
Փօղրաթ չը կայ, փուղ չը կայ,
Ի՞նչով պիտի լիանայ
Փուղից կարօտ մեր աչքը:

Հրեշտըկները էնտեղ
Աղքատ, տկլոր են դիփուն,
Ումի՞ց պիտի փուղ դըջինք,
Վա՛յ մեր օրին, մեր հօքուն...

1871—Թիֆլիս.

ՀԱՅ ՕՐԻՈՐԴ

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Սիրուն, սեւ սեւ աչքերով,
Որ պատած են կամարաձեւ
Բարակ նխշած յօնքերով:

Վարդն ու մեխակ իմ թշերէն
Ստանումեն պայծառ գոյն,
Եւ քան զամէն ծաղիկներն
Ես բուրումեմ գերագոյն:

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Եւ հայ տղայ կը սիրեմ,
Նորան միայն իմ սէր, իմ սիրտ,
Հաճութեամբ զոհ կը բերեմ:

Խաւար օրին ես լոյս կը տամ՝
Թէ չը ծագէ արեգակ,
Եւ գիշերն ես մրցումեմ
Լուսնի հետը համարձակ:

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Հայկայ զաւակ հարազատ,
Հայոց երկրի հողի վերայ
Ես կը սիրեմ կեանք ազատ։

Շրթիս վերայ եղեմական
Հոտով ծաղկել է մի վարդ,
Հեռու՛, հեռու՛, օտարական,
Թո՛ղ քաղէ հայ տղամարդ։

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Չեմ տալ իմ սէրն օտարին,
Օտարի հետ ես չեմ վարի
Կեանքիս ունայն իմ տարին։

Ես սիրում եմ ընտանեկան
Կարն ու գործը տնային,
Ես 'իրում եմ ուսում, արհեստ,
Կրօն, լեզու ազգային։

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Ինձ համար է հայ տղան,
Մի՛ նախանձի՛ր, օտարուհի,
Մի՛ հրապուրէ դու նորան։

Քո թշերի շինծու գեղը
Վաղանցուկ է և դժգոյն,
Ծոցիդ միջումն օձ է բնակվում,
Շրթունքիդ մէջ դրած է թոյն։

Հայ օրիորդ եմ ես, պարոն,
Քնքուշ, համեստ, աննման,
Սիրէ՛, սիրէ՛, ինձ, հայ տղայ,
Դու չես լինի փոշիման։

1869—Թիֆլիս.

ԿԻՐԹ ՃԱՇԱԿ

Ես չեմ սիրի սովդաքար
Ու չեմ գնայ բաղալին,
Որ Աստուծոյ ողջ օրը
Ջուր է տալիս իր գազին:

Եւ գիշերն անհանգիստ
Նրա չօթքի չրկչրկոց,
Մարդի զահլայ է տանում
Դաֆթարների ողջ կապոց:

Գնա՛, կորչէ՛ սովդաքար
Իր փողի սնդուկներով,
Նրա արծաթը չէ բերում
Այրուած սրտիս հանգիստ, դով:

Ես չեմ սիրի փէշաքար
Ու չեմ գնայ ոսկերչին,
Նրա գոհարը չէ արժում
Սիրուն աղջկայ մի պաչին:

Խիստ ագահ է ոսկերիչ,
Թէ և ոսկու հետ խաղում,
Եւ ժանգակեր մետալից
Իր օգուտն է նա քաղում:

Գնա՛, կորչէ՛ ոսկերիչ,
Նա է նոյնպէս մեքենայ,
Որպէս իր մուրճն ու փուքը,
Որով իր գործը գործէ նա:

Ես չեմ սիրի քահանայ,
Ու չեմ գնայ տէրտէրին,
Նա որսում է շիլափլաւ
Սնունդ տալու իր փորին:

Եւ գիշերն անդադար
Նրա սաղմոս, շարական՝
Չեն իմ ականջներին
Անուշ ձայներ դիւրեկան:

Թո՛ղ կորչէ՛ տէր Մարկոսը,
Նա մի քուրմ է կեղծաւոր,
Եւ իր մաշտոց, տօնացոյց
Շինեց ուռկան զօրաւոր:

Ես չեմ սիրի չքնաղնիկ,
Թէ և ծերուկ զէնէրալ,
Թող թէ, ունէր նա գիւղեր,
Հարիւր հազար իմպերեալ:

Ես զզվումեմ նայելով
Նրա ահագին քըթին,
Ուր սպիտակ բեխերը
Դեղին է ներկել բուրնօթին:

Գնա՛, կորչէ՛ չքնաղնիկ,
Ինձ զարհուրանք է բերում,
Եւ արիւնոտ ձեռքերէն
Մահուան հոտ է միշտ բուրում:

Ես կը սիրեմ ստուդենտ—
Մի նորահաս ուսանող,
Սիրոյ պաշտող մաներիմ,
Գեղեցկութեան է յարգող:

Թէ և նա մաշ է գալիս
Հին հագուստով, կօշիկը ծակ,
Պանդոկումը պարտք ունի
Եւ գրպանն է միշտ դատարկ,

Բայց սրտումը կիրք ունի,
Բորբոքվումէ նոր կեանքով,
Երակներումը վազումէ
Արիւնը ջերմ հոսանքով:

Երբ իմ առջև ծնկաչոք
Մորմոքումէ՝ նա լացում,
Եւ ախտալից աչերէն
Տաք արտասուք է բացում:—

Քանի՛ աղքատ յայտնութիւնք,
Որքա՛ն անուշ հրապոյր,
Երբ քաղումէ իմ թըշէն
Մի վարդենի տաք համբոյր . . .

Կեցցէ՛, կեցցէ՛ ուսանող,
Նոր սերունդը մարդկութեան,
Ես իմ անձն և իմ սէր
Նրան կը զոհեմ յաւիտեան:

1870—Թիֆլիս.

ՇՈՒՇԱՆ

„Շուշան, նստէ՛, կարըդ կարէ՛,
Հերի՛ք այդքան ծուլանաս,
Այդ անիծուած լուսամուտէն
Ե՞րբ պիտի դու հեռանաս:“

Ասաց մայրը բարկանալով
Մանկահասակ աղջըկան,
Որ կանգնած լուսամուտէն
Մտիկ կը տար դէպ՝ շուկան:

Իսկ Շուշանը տհաճութեամբ
Եկաւ իւր տեղը նստեցաւ,
Նորա դէմքը խիստ տխուր էր,
Եւ սրտումն ունէր ցաւ:

Յանկարծ գլուխն անցնող կառքը
Սաստիկ ձայնով որոտաց,
Եւ Շուշանը կրկին վազեց,
Փակ լուսամուտն արեց բաց:

„Աղջի՛, նստի՛, կարըդ կարի,
Հերի՛ք նայես դու շուկան.
Այս առաւօտ դու չես գործել,
Օրից անց է երեք ժամ:“

„— Ամա՜ն, մայրի՛կ, հոգուդ մատաղ,
Աղջիկն ասաց քնքշաբար,
Ա՛յս րոպէիս, ա՛յս րոպէիս
Կը վերջացնեմ ես իմ կար:“—

Բայց նա տեսաւ, որ անցնողն
Էր մի ծերուկ չինովնիկ,
Դէմքը խոժոռեց, տեղը դարձաւ,
Ցետքից կնքեց իւր մըճիկ:(*)

Առեց գործը, բայց էր տաղտուկ,
Չէր ախորժում կար կարել,
Նորա սիրտը վրդովուած էր,
Նա չէր կարում համբերել:

(*) Մըճիկ, նշանակումէ բաբաչուխ, կամ բօղմայ, գուցէ հին ձեռնահմայութիւնից մնացած մի սովորութիւն է հայերի մէջ, երբ մինին կամենումեն որ և լիցէ չար նիւթել, ձեռքի հինգ մատը բաց արած, կնքումեն նորա երեսին։

Ծան. հեղ.

Կրկին անգամ կաքւի ձայնը
Հնչեց նորա ականջին,
Վազեց Շուշանը դէպ՝ լուսամուտ—
Ուխտեալ տեղումն առաջին:

„Աղջի՛, ե՞րբ դու գնացիր,
Ա՛խ. աներես, անամօթ,
Ի՛նչու այսօր դու դըժուել ես,
Ջես գործում այս առաւօտ:“—

„—Մայրի՛կ, մայրի՛կ, հոգուդ մատաղ,
Մի՛ բարկացիր իմ վերայ,
Այս բոպէիս, այս բոպէիս,
Ես կը կարեմ իմ կարը:“

Նայեց Շուշան, մի աֆիցեր
Անց էր կենում իւր կաքւով,
Գեղեցիկ էր, մանկահասակ,
Թեքուած կողքին շնորքով:

—„Աղջի՛, արի՛, կարըդ կարի,
Հերի՛ք շուկան մտիկ տաս,
Հիմայ կը գայ վարժապետդ,
Դու չես սերտել դեռ քո դաս:“—

Բայց աղջիկն էլ չը լսեց,
Թէ ինչ խօսեց նորա մայր,
Ջէհիլ տղան կրակ վառեց
Նորա սրտումն անմար:

Երկար այնպէս աչքը ձգած
Մտիկ կանէր մեր Շուշան,
Մինչ պատանին շարժեց ձեռքով՝—
Բազմախորհուրդ մի նշան...
1870—Թիֆլիս.

ՕՍԱՆ

„Ինձի ասումեն“ — Օսա՛ն,
Գոհ չե՛ն մարդիք քո վարքից,
Թէ, դու քարշ ես ընկնում
Ջէհիլ տղորց շըլինքից։

„Էդպէս մ՚արա, — ասումեն,
„Կոտրած ամա՛ն“ կը դառնաս,
Ո՛չ ուրիշը կառնէ քեզ,
Ո՛չ ձեր տանում պէտք կը գաս։

„Հողե՛մ գլուխն ասողին,
Միթէ չե՞ն գիտում, Աստուած
Ջէհիլ տղէն ու աղջիկ
Միմեանց համար է ստեղծած։

„Ման եմ գալիս բուլվարով,
„Օսան, — ասումէ՛ դէդէն,
Ամօ՛թ է, ի՞նչու էդքան
Մտիկ կը տաս դէս ու դէն։

„Ուղիղ գնա քու ճամբան,
Դէմքդ ցոյց տուր ամօթխած,
Որ նայողի աչքերուն
Պարկեշտ աղջիկ ձեւանաս։“

„Ա՛խ․ ի՞նչ անի Օսանը,
Նա ո՞ր ջուրն ընկընի,
Որ իր սրտի դարդերէն
Շուտով մեռնի, պրծնի . . .

„Երբ որ ջէհիլ մի տղայ
Անց է կենում իմ մօտէն,
Վո՞նց համբերի Օսանը,
Մտիկ չը տայ դէս ու դէն։

„Չէ՛, քանի ես կեանք ունեմ,
Ջէհիլ տղայ կը սիրեմ,
Առանց քէֆի վո՞նց ապրեմ,
Վոնց իմ դարդին համբերեմ։

„Թո՛ղ ողջ լինի իմ հէրը,
Նըրա փողի սընդուկը,
Կը կատարէ իմ սրտի
Խիստ ցանկալի փափագը․

„Նա կը տայ իմ օժիտը
Մանէթներ հազար քսան,
Ու կը գնէ ինձ համար
Սրտիս ուզած լաւ փեսան:

„Աչքըդ տրաքի՛ Սօփօին,
Նըրա հէրը փող չունի,
Թող մօր տանումը պառվի,
Առանց սիրուն փեսայի:

„Զէ՛, քանի ես կեանք ունեմ,
Ջէհիլ տղայ կը սիրեմ,
Առանց քէֆի վո՞նց ապրեմ,
Վո՞նց իմ դարդին համբերեմ“:

Ջէհիլ տղայ կը սիրէ,
Ու քէֆ կանէ միշտ Օսան,
Գլո՛ւխ քարին, որ մարդիք
Իւր վերա վատ կը խօսան...

1871—Թիֆլիս.

ՄՕԴԱՅ

„Էս ամսումը մեր քաղաքում
Եկել է մի նոր մօդայ,
Ի՛նչ գեղեցիկ, ի՛նչ սիրուն,
Հրաշք ասեմ, հաւատա՛:

„Քո արևը, է՛յ Նինօ, —
Ասաց նորան մեր Լիզէն,
Էդպէսի սիրուն մօդայ
Ջէր չէ եկած փարիզէն:

„Կէկէն ու Նատաշան,
Էս նոր մօդի նոր շորով,
Երէկ շ ի կ ո վ հագնուած,
Պըլըտումէին փողոցով:

„Բայց ես տխուր, ամօթից
Տանիցը դուրս չեմ գնում,
Զի իմ շորի տեսակը
Հիմայ ո՛չ ով չէ հագնում:

„Ա՛խ. մեռնումեմ նախանձից,
Երբ ուրիշն է հագնուած,
Ես տընումն ընկած եմ,
Որպէս մի խեղճ բանտարկուած:

„—Դարդ մի՛ արա, իմ քուրիկ,
Ասաց Նինօն մեր Լիզին,
Գնա մարդէդ դու փող բե՛ր,
Գիմենք մօդնի մագազին:

„—Ո՞ւմ կնկանիցն ես պակաս,
Որ մօդիցը յետ մնաս,
Գործն այդ է, երբ որ դու
Մսխելու փող չունենաս:“—

„Ա՛խ, անբախտ եմ ես, Նինօ,
Լիզէն տուեց պատասխան,
Թէ և ունեմ ամուսին
Հարուստ, ծերուկ մի իշխան:

„Գրո՛ղը տանէ թո՛ղ նորան,
Գուցէ ես էլ պրծընեմ,
Նա ինձ համար չէ առնում
Մօդնի շորեր, որ հագնեմ:

„Ես էլ նորա ջիգրիցը
Մի ուրիշին կը սիրեմ,
Նա կառնէ ինձի համար
Մօդնի շորեր, որ հագնիմ:“

1871—Թիֆլիս.

ԹԱԳՈՒՑԱԾ ԳԱՆՁ

Ասեմ, „աղջի՛, արմենուհի,
Թէ քո Աստուած կը սիրես,
Ձգէ՛ քօղը ծածկած դէմքէդ,
Գոնեա տեսնեմ քո երես։“

Ասաց — „լռէ՛, դու ո՛վ մանուկ,
Դեռ ես անփորձ տղամարդ,
Մինթէ չե՞ս տեսել ծաղկոցում,
Երբ վառվռումէ կարմիր վարդ։“ —

Ասեմ, „աղջի՛, արմենուհի,
Ցոյց տո՛ւր, տեսնեմ քո աչեր,
Ի սէր Աստծոյ, ինձ շնորհէ
Քաղել քաղցրիկ զոյգ պաչեր։“

Ասաց — „լռէ՛, ո՛վ պատանի,
Ինչ յանդուգն ես դու եղել,
Մինթէ չե՞ս տեսել երկնքում,
Երբ փայլումէն զոյգ աստղեր։“ —

Ասեմ, „աղջի արմենուհի,
Տեսնեմ ի՞նչ է քո ծոցում,
Այնպէս անուշ հոտով բուրում,
Ինձ բերումէ հիացում։“

Ասաց — „լռէ՛, դու ով մանուկ,
Այնտեղ բուրումէ թուրինջ,
Մինթէ պարտիզում չե՞ս քաղել
Նուռն, լիմոն, կամ նարինջ։

. . . .
. . . .
. . . .
. . . .

Ասաց — „լռէ՛, ով անամօթ,
Այդ պահանջէ սէր և գոհ,
Դու նուիրէ անձդ ինձի,
Որ ես լինեմ քեզնից գոհ։“ —

1865 — Սալմաստ.

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՃՐԱԳ

Գիշերային լապտերը
Ամպերի մէջ լողումէր,
Մեղմիկ շնչող զեփիւռից
Ծառի տերևը դողումէր:

Գերեզմանական քնով
Թմրած՝ նիրհումէր ողջ գիւղ,
Այդ գիւղիցը մի աղջիկ
Դէպ՝ դուրս փաղէր աներկիւղ:

Դէպի մերձակայ վանքը
Գերմարդկային այդ ոգին,
Որպէս անմահ հաւերժհարս,
Դիմէր ըշտապաւ, մոլեգին:

Խորհրդական այդ ժամուն
Պայծառ փայլումէր լուսին,
Նա շողումէր թարմ, սիրուն
Դէմքը մատղահաս կուսին:

Նա փախումէր և վազում
Դէպի վանքը սրբանուէր,
Ուր խաչազարդ գմբէթներ
Ձգելէին լայն ստուեր:

Անդ միանձանց կուսակրօն
Անմատչելի է կայարան,
Ուր հնչվումէն ալէլուք,
Սաղմոս, սուրբ Աւետարան:

Ի՞նչ է պտռում այդ աղջիկ
Գիշերային այդ ժամուն,
Իւր գանգրահեր ծամերը
Արձակ տուած է քամուն:

Զի՞նչ մատղաշ այդ կուսան
Սրբարանի անկիւնում՝
Իւր զղջացած մեղքերը
Նա լացելու է գնում:

Զի՞նչ վանքի պարսպում
Հայր—սուրբերից սիրատար՝
Նա ակնկալ մի ունի,
Որ սպասումէ անդադար:

Բայց ի՞նչ պէտք է ի զուր տեղ
Լուծել խորհրդոյն այդ կնիք,
Աստուած միայն է գիտում
Կուսական սրտին գաղտնիք:

Իսկ գեղեցիկն այն աղջիկ
Ըշտապելով շուտ քայլեց,
Երբ աշտարակի գլխից
Աղօտ ճ ր ա գ մի փայլեց:

Դէպ՝ խորհրդական լոյսը
Դիմումէր նա կաթոգին,
Որպէս թիթեռը հրճուելով
Դէպի բոցերը ճրագին:

. . . .
. . . .
. . . .
. . . .

1856 — Վաղարշապատ.

ՈՐԲ ՕՐԻՈՐԴ

„Հայ օրիորդ եմ ես, քոյրեր,
Հայաստանի երկրէն,
Որբ օրիորդ եմ ես, քոյրեր,
Հեռու իմ հօր աշխարհէն:

„Չար թշնամին դարձուց աւեր
իմ տնակը հայրենի,
Գերի վարեց քոյր, եղբայրներ,
Ծնողքս զոհ եղան սրի:

„Այժմ պանդուխտ օտար աշխարհ
Թափառումեմ անտերունչ,
Օտար երկնի կամարի տակ
Ես քաշումեմ դառն շունչ:

„Ոչ ոք ինձի չէ ողորմում,
Որ տայ խեղճիս պատառ հաց,
Ոչ ոքի գութ բնաւ չէ շարժում
Իմ արտասուքն ու իմ լաց:

„Դուք բաշխեցէք ինձ հաց, քոյրեր,
Որ չը մեռնեմ սովէմէն,
Դուք հագցրէք հալաւ, քոյրեր,
Որ չը սառչեմ ցրտէմէն։

„Ես էլ ձեզ պէս աղջիկ էի՝
Գոհարներով պճնուած,
Ես էլ ձեզ պէս սիրուն էի՝
Ոսկիներով զարդարուած։

„Այժմ նայէք իմ երեսին,
Ո՛րքան նիհար, գունատ է,
Եւ իմ հանգչած թուխ աչերս
Ամէն տղայ կը ատէ։

„Բայց էր մի օր . . . երբ իմ ձեռքին
Կարօտ էին իշխանորդիք,
Որ իմ պսակի ճոխ փառքովը
Կատարէին հարսանիք։

„Իսկ այժմ ինձ չ՚արժանացնում
Գոնեա՛ չնչին հայացքի,
Ոչ մի մանուկ հայ տղամարդ,
Ո՛չ ալեւոր հայազգի։

„Մի՞թէ այդչափ սառն սառած է
Ձեր սրտի մէջ հայ արիւն,
Որ տալ ձեր սէր դուք չէք կարող
Հայաստանի որբերուն . . .

„Ճնճղիկն ունի իւր բոյն
Մի կուշտ փորով օթելու,
Բայց ես չունեմ ոչ մի անկիւն
Անբախտ գլուխս դնելու։

„Դուք սրբեցէ՛ք, ազնիւ քոյրեր,
Իմ արտասուք և իմ լաց,
Ինձ բաշխեցէք, Աստծոյ համար,
Ուտելու մի պատառ հաց։

„Հայ օրիորդ եմ ես, քոյրեր,
Հայաստանի երկրէն,
Որբ օրիորդ եմ ես, քոյրեր,
Հեռու իմ հօր աշխարհէն . . .“

1865—Ուրմի.

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՔ

Հեռու՜, հեռու՜, ո՜վ սեւ մտքեր,
Ի՞նչու դուք ինձ տանջումէք,
Մի՛ քրքրէք իմ հին վէրքեր,
Սիրտս հանգիստ թող տուէք:

Հեռու՜, հեռու՜, ո՜վ տխրադէմ
Յիշողութիւնք եւ կրքեր,
Ա՜խ, մի՛ բերէք իմ աչքիս դէմ
Անցեալ աւուրց փայլուն պատկեր:

Անցեալ աւուրց . . . աւուրց ոսկի,
Որք նորա հետ անցուցի,
Որուն իմ սիրտ, իմ կեանք, հոգի
Եւ իմ սուրբ սէր զոհեցի:

Բայց ինձ համար նա չքացաւ
Անյայտութեան մութի մէջ,
Թողեց միայն ինձ դառն ցաւ,
Մարած սրտումս — կայծ անշէջ:

Այդ սուրբ սիրոյ անշէջ կրակ
Պիտ' վառ պահեմ իմ սրտում,
Մինչ մահ նորա սուրբ յիշատակ
Պիտ' երգեմ իմ մտքում:

1856—Ուրմի.

ԿԵԱՆՔԻ ՀՈՍԱՆՔԸ

Ի՜նչ զուարճութեամբ սահումեն ժամեր
Գեղեցկափթիթ իմ կեանքիս գարնան,
Ի՜նչ անուշահոտ ծաղկումեն վարդեր,
Զարդարում եղեմ անհոգ մանկութեան։

Սահումե՛ն ժամեր, փախում ժամանակ,
Բայց կռոնոսի անիրաւ ձեռքեր՝
Ամէն մի րոպէ քաղումեն անյագ՝
Կեանքիս դրախտէն գեղեցիկ վարդեր . . .

Տիրումէ սարսափ՝ զարհուրանք և դող,
Երբ մտածումեմ, ամէն մի վայրկեան՝
Քանի քայլ յառաջ՝ գլորումեմ դէպ՝ հող,
Ուր մարդիք անդարձ իջան յաւիտեան։

Ի՞նչ է իմ կեանք՝—ուրեմն մի ծաղիկ՝
Գարնան ոգիով բացուած գեղեցիկ,
Գալիս է աշուն՝—տերևը թառամում,
Փչումէ հողմը՝—փոշի է դառնում . . .

1860—Սալմաստ.

Ա Ռ Ի Տ Օ – Դ Ա – Ձ Է

Վաղ—առաւօտ զարթեցայ
Ես անհանգիստ իմ քնից,
Աղախինս մօտ եկաւ
Տխուր դէմքով յայտնեց։

—„Աղայ, էսօր մենք չունենք
Ո՛չ վառելու ածխաքար,
Դուք կը մնաք առանց թէյ,
Ո՛չ չայ ունենք, ո՛չ շաքար։"

Այդ բօթաբեր խաբարը
Ինձ պատճառեց վրդովմունք,
Եւ խռոված իմ սրտի
Սաստիկ եղաւ խիստ յուզմունք։

Քանզի այնօր իմ գրպան
Փողից փարատ էր իսպառ,
Եւ չունէի ո՛չ մի բան
Ուղարկելու ես բազառ։

Փայփայելով աղախնուս
Փափկիկ գիսակ շեկահեր,
Ես գրկեցի նորա մէջք,
Համբուրեցի զոյգ թշեր։

„Առանց թէյի, ախ, Մաշայ,
Չէ կարելի, գնա՛ բազար,
Դու ծանօթներ շատ ունես,
Մի տեղից առ անվճար։“

— „Վա՛տ է, աղայ, ժամանակ,
Հիմայ անփող ի՞նչ կը տան,
Այժմ առանց գրաւի
Հազիւ մարդի կը հաւատան։“

Ի՞նչ էր մնացել, էլ ի՞նչ կար,
Որ Մաշան բազար տանի,
Գրաւված էին բոլորը՝
Ժամացոյց, թանգ մատանի։

„Ահա՛, Մաշայ, իմ կայքից
Մնացորդն այդ վերջին,
Տա՛ր փողոցում վաճառէ,
Թէ և գին տան խիստ չնչին։“

Այս ասելով տուեցի
Երգերիս ժողովածուն,
Գնաց շաքար գնելու
Իմ պայմանեալ հարսնացուն։

Բայց մեծ եղաւ իմ զարմանք,
Երբ որ գիրքը թեւքի տակ,
Առանց ոչինչ գնելու՝
Մաշան յետ դարձաւ դատարկ։

— „Ողջ բազարը ման եկայ,
Ասաց նա ինձ վշտագին,
Գիրքդ ամենին ցոյց տուի,
Մարդ չը տուաւ գրօշ գին։

— „Տարայ մանրուք ծախողին,
Ասաց՝ — „Ինձ չէ պէտքական,
„Այդ մրոտած թղթերից
„Ինձ մօտ այժմ խիստ շատ կան։

„Թէ թերթերը լինէին
„Մի փոքր լայն և երկար,
„Լօրի, փըլփիլ փաթթելու
„Մեզի համար պէտք կը գար։“

—„Ասացի, հին դաւթար չէ,
Այլ տաղեր են՝ կոկ, քնքուշ,
Հայոց անբախտ պօետի
Դոքա երգեր են անուշ:

—„Թըլթուեցրուց ռեխը,
Պատասխանեց դուքանչին՝
„Այժմ այդպիսի գրքերը
„Անարգ լաթեր են չնչին:"

Կատաղութեան արիւնը
Բորբոքեցաւ իմ գլխում,
Ես մոռացայ իմ թէյը,
Նախաճաշիկ, կերուխում:

„Ուղիղ է ասել, Մաշայ,
Այն խելացի դուքանչին,
Այժմ մեր գրուածքներն
Այո, լաթեր են չնչին . . .

„Քան թէ չինել նրանց ջնջոց,
Լաւ է վառել մեզ կրակ,
Գիտեմ, փայտը էլ պրծել է,
Թող տաքանայ դէթ սենեակ:—

Ես ձգեցի անխնայ
Բոցերումը կրակին,
Իմ անքուն գիշերների
Ճգանց ծնունդն անգին:

Եւ ես, նստած սառնասիրտ,
Նայումէի խարուկին,
Որտեղ ոսկի կայծերով
Խորովվումէր իմ հոգին . . .

Խե՜ղճ, աուտօ—դա—ֆէ.
Ահա՛ մեր գործը, հայե՛ր,
Օղակ—օղակ ծուխի հետ,
Վերցնդումէն դէպի այեր:

Երկար մարած մոխիրին
Նայումէի տխրադին,
Ցանկարծ ինձ թէյ ներս բերաւ
Սիրուն Մաշան իմ անգին:

„Ուսկի՞ց բերար դու թէյը,
Հարց արի ես, Մաշա—ջան:
Ասաց՝—„Գրաւ դրեցի
Իմ ոսկի ապարանջան:"

1871—Թիֆլիս.

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳԸ

ԶԷՅԹՈՒՆՑԻ ՀԱՑ ՏԻԿՆՈՋ

«Նանի՛կ արա, սիրուն որդեակ,
Դու նանի՛կ, նանի՛կ, նանի՛կ,
Նանի՛կ արա, շուտ մեծացիր,
Քեզ մատաղ է իմ ջանիկ:

«Օրօրոցդ մօր ձեռքով՝
Մեղմիկ, հանդարտ՝ կը շարժեմ,
Քո մեռած հօր յիշատակը
Քեզ երգելով կը պատմեմ.—

«Հայրդ էր հզօր առիւծ,
Այն քաջ—արին Երուանդ,
Նա ունէր դէպ՝ իւր ցեղը՝
Շատ սէր, շատ գութ, շատ եռանդ:

«Մի օր հեծաւ իւր սեւ ձին,
Ելաւ նա դէմ ոսոխին,
Իւր հետ իւր քաջ ծառաներ՝
Գնաց հալածել թշնամին:

«Թշնամին էր քաջն Ռափօ՝
Այն վէթխարի աժդահան՝
Զարկեց հօրդ սրտի մէջ
Իւր նիզակը հոգեհան:

«Զարկեց հօրդ սպանեց,
Հօտերն աւար տարաւ,
Վրանները կողոպտեց,
Նա մեզ ոչինչ չը թողաւ:

«Նանի՛կ արա, աչքի լոյս,
Նանի՛կ, որ շուտ մեծանաս,
Քո անտերունչ քաջ ցեղին
Հօրդ փոխան տիրանաս:

«Մեր ծաղկաւէտ սարերը,
Մեր խոտաւէտ արօտներ,
Արածումէն թշնամեաց
Եւ օտարներու հօտեր:

«Մեր պաղ, յստակ աղբիւրներ
Պղտորումէն պիղծ շրթունք,
Թշնամուհեաց կուրծքերը՝
Զարդարումէն մեր ծաղկունք:

„Հպարտ, ազատ մեր ցեղը,
Ամօթալի՜ յիշատակ . . .
Ծռել է իւր պարանոց
Մեր յաղթողի լծի տակ:

„Իսկ մենք պանդուխտ, անտերունչ,
Թափառումենք սարից սար,
Օտար ձեռքերու կարօտ,
Հողի՛ն եղած հաւասար:

„Անարգ, գերի, անպատիւ,
Որպէս պիղծ ազգ անամօթ,
Թքումեն մեր երեսին
Ապտակ զարկում մեր գլխին:

„Նանի՛կ կասեմ, իմ հրեշտակ,
Նանի՛կ կասեմ երգելով,
Նանի՛կ կասեմ երգելով,
Ողբ երգելով ու լալով . . . .

„Երբ մեծացար Աստուծով,
Առ հօրդ նետ—աղեղը,
Հեծի՛ր նորա նժոյգը,
Կրկի՛ն տիրէ՜ քո ցեղը:

Խնդրէ՜ հօրդ վրէժը
Այն քաջ, անգութ յաղթողէն,
Ա՛ռ նորանից հօտերը,
Արտաքսէ՜ մեր սարերէն:

„Նորա երկաթի կուրծքի մէջ
Դու էլ ցըցէ քո մըզրախ,
Երկու բուռն արիւնից
Դու խմէ ուրա՛խ—ուրա՛խ (*):

„Խմէ՛, և թո՛ղ հովանայ
Քո մօր կրակուած սիրտը,
Խմէ՛, և թո՛ղ հանգարտուին
Հօրդ կարօտ ոսկերքը:

„Նանի՛կ կասեմ, դու քնէ՜,
Ո՛վ իմ հրեշտակ արդար,
Քնէ՜, զի դու միայն ես
Մօրդ սրտին մխիթար . . .

1857—Վան.

(*) Խաշնարած ցեղերի մէջ արեան վրէժխնդրու-
թիւնը մի սրբազան պարտք է համարվում և անց-
նումէ սերունդից սերունդ: Դա կատարվումէ սպա-
նելուց յետոյ ոսոխի արիւնից խմելով, կամ սպանու-
թեան գործիքն, եթէ արիւնոտ էր, լիզելով:

ԻՍՐԱՅԷԼԸ ԲԱԲԵԼՕՆՈՒՄ
(137-րդ Սաղմոս)

„Բաբելացւոց գետերու մօտ
Մենք հայրենեաց կ՚ողբայինք սուգ,
Եւ Սիօնը միտ բերելով,
Կը թափէինք դառն արտասուք:

„Պանդուխտ երկրի ուռիներէն՝
Մեր քնարները՝ տխուր և մունջ՝
Մենք կախեցինք՝ և զեփիւռէն
Հնչէին լարերն դառն մրմունջ:

„Մեր գերիչքը կարեկցաբար
Ասումէին ստիպելով՝—
„Մեզ Սիօնի երգէք երգեր,
„Մի՛ վրդովէք մեզ ձեր լալով:“

„Տիրոջ երգն ի՞նչպէս երգենք
Օտար երկնի կամարի տակ,
Օտար երկրում ի՞նչպէս պատմենք
Մենք Սիօնի սուրբ յիշատակ:

„Երուսաղէմ, Երուսաղէմ,
Եհովայի ո՛վ սուրբ տաճար,
Իմ աջ ձեռքս թող չորանայ,
Երբ մոռանամ քո սէրն անճառ:

„Երբ չը յիշեմ քեզ մի րոպէ,
Թո՛ղ իմ լեզուս փակչի քիմքիս,
Եւ յաւիտեան թո՛ղ մունջ մնամ,
Երբ քեզ համար չը տամ հոգիս:

—

„Երբ Տէ՛ր, Սալիմի կը խնդրես վրէժ,
Յիշէ՛ Եդովմի անգութ զաւակներ,
Որք ասումէին՝—„Փլուցէ՛ք դորան,
„Փլուցէ՛ք դորա հիմն ու յատակներ:“

„Ո՛վ Բաբելօնի դստրիկ թշուառ,
Քանի՛ դառնութեանց մեզ եղար պատճառ…
Երանի՛ նորան, որ պատիժ արդար՝
Քո չարիքներին՝ փոխարէն կը տար:

„Երանի՛ նորան, որ քո զաւակներ՝
Իւր վրէժխնդիր ձեռքովն անխնայ՝
կառնէր մօր գրկէն, լալով, ճչալով,
կառնէր, կը զարկէր քարերու վերա:“

1856—Թաւրիզ

ԳԵՐԻՆ ԱՒԱՐԱՅՐԻ

(Վարդանանց պատերազմի ժամանակ)

„Պարսից գետերի ափերի մօտով,
Գլուխս ծռած և տխուր սրտով,
Իմ բոլորտիքս զինուորներ պատած,
Ես թափառումեմ շղթայած ոտով:

„Ես մի գերի եմ՝ անբախտ և թշուառ,
Ոչ ոք չէ լինում վշտիս մխիթար,
Միայն հնչումը ծանր շղթայի
Ինձ յիշեցնումէ մտքեր չարաչար:

„Ինձ յիշեցնումէ՝ Արաքս, Արարատ,
Եւ Էջմիածին՝—մայր մեր գթառատ,
Ինձ յիշեցնումէ քաղցրիկ Հայաստան,
Եւ սէր հայրենեաց՝ սուրբ և անարատ:

„Սիրտս էրվումէ, լերդս խորովվում,
Աչքերէս առուք գետի պէս հոսվում,
Եւ արտասուքն ինձի խեղդումէ,
Խեղդում, ուշաթափ գետին է ձգում:

„Գերեվարներից մի գթոտ զինուոր
„Մի լար, ասումէ, ով քաջ և հզօր,
Միշտ չես մնալ դու գերի մեր երկրում,
Եւ ազատութեան կը գայ քեզ մի օր:

„Բայց դու մեզ երգէ քո հայրենիքի՝—
Քո Արարատայ կորուսած փառքի՝
Նորա վեհութեան՝ անուշիկ երգը,
Երգէ, կ՚մխիթարվի քո սիրտն ու հոգի:“

—„Ես Արարատայ կորուսած փառքը,
Ես մայր Արաքսի դառն արտասուքը,
Գահէն ողբացած ծերուկ Մասիսի
Ի՞նչպէս ես երգեմ՝ ողբն ու սուգը,

—„Երբ արտասուքը թշուառ պանդխտի
Ցօղումէ հողն օտար աշխարհի,
Խոր սրտէն բխած նորա երգի ձայն
Հնչեցնումէ օդն օտար երկնքի:

—„Բայց Հայաստանի գերին խեղճ, պանդուխտ,
Թո՛ղ ձեզի երգէ իւր սրտի սուրբ ուխտ,
Որ նորա կեանքի է միակ նպատակ,
Քանի ապրումէ օտար երկնի տակ․—

„Ո՛վ իմ Հայաստան, սիրուն Հայրենիք,
„Հայկի և Արամայ երկիր գեղեցիկ,
„Թող քաջքն Արտաւազդայ ինձ կորուսանեն,
„Թէ ես մոռանամ քո սէրը քաղցրիկ։“

„Թո՛ղ իմ բազուկս չորանայ խաղառ,
„Թող լեզուս լռէ, չը խօսի մի բառ,
„Երբ պատերազմում, քո թշնամու դէմ,
„Չը զոհեմ արիւնս քո սիրոյ համար։“

„Թո՛ղ իմ աչքերը կուրանան շուտով,
„Երբ քեզ ես նայեմ վհատակի սրտով,
„Թո՛ղ իմ ականջներ խաղառ խըլանան,
„Երբ չարիքդ լսեմ, մնամ ես անվրդով։

„Երբ Տէ՛ր, կը խնդրես վրէժն անբախտին,
„Դու միտ բե՛ր Հային և Հայի որդին,
„Տե՛ս Աւարայրի լայն դաշտն ահարկու,
Հայի արիւնով ներկուած է գետին։

„Թափի՛ր քո կրակ, քո կայծակ և հուր,
„Լարէ՛ քո աղեղ, նիզակ սայրասուր,
„Սասանայ Պարսկի որդիքն անիրաւ,
„Թո՛ղ խոր դժոխոց լինեն կերակուր։

„Երբ պատերազմի հնչեց ահեղ փող,
„Սիրտս նախանձի կ'զգայ մի սուրբ դող,
„Կը փշրեմ շղթաս, ձեռքումս բաց սուր,
„Կառնեմ իմ վրէժը, յետոյ կ'մտնեմ հող։
1856 — Թաւրիզ.

ԱՐՏԱՒԱԶԴ

(Առասպել)

«Եթէ դու յորս հեծցիս յազատ ի վեր
«ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին
«յազատ ի վեր ի Մասիս, անդ կացցես,
«և զլոյս մի տեսցես:»

Խորենացի

Կախարդուհի վհուկները՝—
Նոր չարիք են հնարում,
—Աժդահակայ կնիկները՝
Վիշապների տաճարում:

Լոյսը շողաց, ծագեց արև
Թուխ—Թուխ ամպերու միջէն,
Մի ձիաւոր անցաւ շուտով
Արտաշատայ կամուրջէն:

Գինայ գետի ափերու մօտ
Սև Նժոյգը վազումէր,
Նա վազումէր որպէս սև ծուխ,
Մտքից արագ՝ Թռչումէր:

Նորա վերա մի պատանի
Նստած էր քաջի նման,
Կապարճը լի էր նետերով,
Ուսին՝—աղեղ, լայն վահան:

Որսորդական իւր շները
Թափառումեն սար ու ձոր,
Հոտ քաշելով՝ պտրումեն
Էրէ, Թռչուն նորանոր:

Թուփի միջէն յանկարծակի
Վազեց կինջը սոսկալի,
Սոսկալի էր ժանիքները,
Աչքերը վառ՝ կրակով լի:

Տեսաւ նորան Արտաւազդը,
Վերա հասաւ ձիընթաց,
Նետեց նետը, վայրի կինջը
Ահեղ ձայնով որոտաց:

Օդը մթնեց, փոշին պատեց,
Բարձրացաւ Թունդ մրրիկ,
Եւ անդունդը խոր յատակից
Գոռաց ձայնով յոյժ սաստիկ:

Նորա առջև բաց է լինում
Լայնաբերան մի վիհ—փոս,
Ուր որսորդն իւր ձիու հետ
Ներս գլորվեցաւ գլուրահոս:

Կորաւ այրին՝—Արտաւազդը,
Կորաւ խորին անդընդում,
Հօր անէծքը նորան պատժեց,
Որին նա շատ էր ատում,

Իսկ քաջքերը մեծ Մասիսի
Դարբնեցին շէկ երկաթը,
Ցափշտակած՝ Արարատի
Տարան նորան՝ գագաթը:

Այնտեղ դրին խոր այրի մէջ
Ձեռքն ու ոտքը շղթայած,
Որ Արտաւազդ մինչ յաւիտեան
Մնայ այնտեղ բանտարկուած:

Չը հեռացան Արտաւազդից
Իւր շները հաւատարիմ,
Զոյգ շներն որսորդական
Մնացին նորան մօտերիմ:

Նոքա այնտեղ ամբողջ տարին
Կրծոտումեն հաստ շղթան,
Կրծոտումեն, որ արքային
Տան հնար ազատութեան:

Եւ մաշվումէ ծանր շղթան,
Նա մաշվումէ օրէցօր,
Փոքր է մնում, որ կորցնի
Զօրութիւնն իւր հզօր:

Հայոց երկրի դարբինները,
Մեծ Զատիկի գիշերին,
Երեք անգամ ծանր մուրճը՝
Զարկումեն իւրեանց սալին:

Նոյն րոպէում ծանրանումեն
Արտաւազդայ շղթայքը,
Որ չ'ազատուի, չը կարենայ
Ջնջել բոլոր աշխարքը:

Մինչև այսօր աքսորուած է
Արտաշէսի քաջ որդին,
Վիշապազանց դառն վրէժը
Մեծ տանջանք է իւր սրտին:

Աժդահակայ կնիկները
Վիշապների տաճարում,
Պար են պարում նուագներով
Եւ մեծ տօն են կատարում։

1869—Խորվիրապ.

ՊԱՆԴՈՐԱՑԻ

ՏՈՒՓԸ

Գայլթագրոսի աստիճան
Ստանումէ նենգ հասուն,
Ջարանախանձ դեւերի
Խառնվումէ նա դասուն։

Երբ հռովմէն դէպ' Պօլիս
Կամէր յորդել ճանապար,
Կրկին անգամ նա գնաց
Պագնել պապի գարշապար։

Անսխալական հովիւը
Տուեց նորան փոքրիկ տուփ,
Նա դրոշմած էր կնիքով,
Ունէր վերան ամուր խուփ։

„Ա՛ռ այս տուփը,—նա ասաց,
Դա կը լինի քեզ պիտանի,
Դորանով դու կ՚որսաս
Որդիքը Հայաստանի։“

„Տո՛ր քեզի հետ այդ տուփը
Այդպէս կնքուած, այդպէս փակ,
Դորա մէջն է ամփոփուած՝
Մեր նպատակը, մեր փափագ։“

„Կախարդական այդ տուփը
Ունի իւր մէջ մեծ խորհուրդ,
Կը յիմարացնէ հայոց
Թեթեւամիտ ժողովուրդ։“

„Ուր որ բացես դու զորան,
Կը ցնորվին հայոց որդիք,
Նոքա կը մոռնան իւրեանց
Ազգ և կրօն, հայրենիք։“

„Նոքա կը մոռնան իւրեանց
Բնական լեզուն մայրենի,
Եւ ազգային ողջ ծէսեր,
Աւանդութիւնք հայրենի։“

„Եւ լատինական ոգւով
Կսկսեն խօսել և դատել,
Լատինական ծէսերով՝
Մեր աստուածները պաշտել։“

„Լատին կը լինեն ազգութեամբ
Հայերն այնուհետև,
Մեր կրօնքը կը պնդուի
Նոցա մէջ երկարատև։“

Ուրախ—ուրախ ընդունեց
Պապից տուփը նենգ Հասուն,
Դիմեց դէպի Բիւզանդիոն
Նեռի որդին մոլասուն։

Ազգավաճառ այդ Վասակ
Բացեց այնտեղ տուփը գոց,
Նորա միջէն դուրս վազեց
Վառուն կրակ, ծուխ և բոց։

Եղբայրն եղբօրից բաժանուեց,
Հայրն ուրացաւ իւր որդին,
Կինը թողեց ամուսին,
Տիրեց ախտը ժանդախտին։

Հայկայ հարազատ որդիք
Սկսան միմեանց ատել,
Խմել միմեանց արիւնը,
Եւ միմեանց միսն ուտել։

Վարկանի գագաթէն՝
Պայը խիստ ուրախ սրտով՝
Այդ արիւնոտ հանդէսին՝
Աչք էր ածում անվրդով:

1872—Թիֆլիս.

ՓՈՂ

Երբ շիշով ազնիւ գինին
Դրած է սեղանիս վերան,
Երբ արծաթով պարարտ է
Իմ փողերի պահարան,

Եւ թանգագին ցիգարը
Իմ բերնումը ծխում է,
Հրաբորբոք իմ սրտէն
Քանի՛ մտքեր բղխում է . . .

Իմ գրիչը թունդ վազում է,
Ոգևորուած այդ պահուն,
Եւ երգերս տողվում են
Կոկ, յանգաւոր և սահուն:

Բայց երբ որ գինի չը կայ,
Երբ դատարկ է իմ գրպան,
Մտածում եմ, մտածում,
Մտքիս չէ գալիս մի բան:

Աշխատումեմ ականջ
Անհամ յանգեր կարկատել,
Իսկ սատանան նոյն ժամուն
Սովոր է միշտ ընդհատել։

Դուռը ճռաց, դուքանչին
Պարտքի հաշիւ ներս բերաւ,
Բոլոր մտքերս ցնդեցան,
Սրտիս աշխոյժը կորաւ։

Տեսանումեմ, իմ մուզան
Նա էլ հեռացաւ իսկոյն,
Երբ որ տեսաւ նա ռեխը՝
Խանութպանին այն տժգոյն։

Հա՛, փախեցաւ խղճալին,
Զիցէ ուզեմ իրմէն պարտք,
Ա՛խ, և քեզ մօտ, էյ Թշուառ,
Կորուսե՞լեմ ես իմ փարկ . . .

1871—Թիֆլիս.

ԲԱԽՏ

„Ճանճերն այնտեղ են հաւաքվում,
„ուր որ մեղր կայ։“
Առած.

Կար ժամանակ, որ ես էլ
Էի ուրախ, երջանիկ,
Շողշողումէր իմ բախտի
Աստղը պայծառ, գեղեցիկ։

Ո՞վ չէր իմ սրտի բարեկամ,
Ո՞ւմ չէի ես սիրելի,
Իմ մոլութիւնքն անգամ
Էին յարգի, գովելի։

Քանզի լի էր իմ քսակ,
Առատ, ճոխ էր և սեղան,
Մինչ հալածող Թշնամիքս
Փնքուշ եղբայր ինձ եղան։

Ամէն մարդ իմ պատուէն
Դնէր բարձր աստիճան,
Որպէս մեղր ճանճերից
Միշտ պատած էր իմ շրջան։

Ամէն բերան ջերմեռանդ
Յօրինումէր ինձ գովեստ,
Իմ հանճարն ու իմ տաղանդ
Էին գերագոյն և համեստ:

Ամէն մի դարտակ խօսքիս
Պատասխանն էր միշտ „այո՛.“
Ձիւնը սև է, ասէի,
„Սև՛ է, պարոն, սև՛, այո՛։“

Ամէն յիմար գրուածքիս,
(Թէև գայլի շարական,)
Գովասանքին չափ չը կար,
Էր վսեմ, անզուգական:

Որքան ես իմ խօսքերում
Էի սխալ, շաղակրատ,
Բայց ոսկեղէն իմ բերնով
Խօսումէր մեծն Սոկրատ:

Կեղծաւորքն այդպիսի
Փաղաքշանաց փոխանորդ՝
Իմ վերջին կօպէկներին
Էին ընկեր, բաժանորդ։

Բայց երբ դարձաւ անիւը
Զարմանախանձ իմ բախտին,
Որպէս օդեղէն ամրոց
Բոլորն անցան դառնագին։

Եւ հեռացան ամէնքը,
Չի դարտակ էր իմ քսակ,
Թառամեցաւ կեղծաւոր
Ձեռքով հիւսած իմ պսակ . . .

Խաւարեցաւ, կարծես թէ,
Ոսկի աւուրց իմ արև,
Եւ ո՛չ ոք այնուհետև
Չէր ուզում տալ ինձ բարև:

Այդպէս է միշտ աշխարհի
Անիծուած կարգն ու կանոն,
Երբ բախտը ծուլից քեզնից,
Ծուռ է դնում միշտ քանոն . . .

Հրեշտակի լեզուով խօսէ,
ինչ կուզես դու մտածէ,
Ո՞վ բանի տեղ կը դնէ,
կասեն՝—խելքը ցնդած է։

Այժմ եղբայր, իմացի՛ր,
Քո հաշիւն և քո սակ,
Ջուննես կեանքի իրաւունք,
Երբ դարտակ է քո քսակ։
1869—Թիֆլիս.

ՈՂԲ
ԶԷՅԹՈՒՆՑԻ ԿՆՈՋ
Տանը մեռած տղամարդի վերայ

„Ափսո՜ս, որ այդպէս անփառք և անշուք,
փափուկ մահճի մէջ՝ փչեցիր քո հոգին,
Ափսո՜ս, որ մահը քեզնից հանդիպեց
Քո խաղաղ տնակի կամարի տակին։

„Դու մի քաջ էիր՝ արի և հզօր,
Քաջերի սուրը թող նիւթէր քեզ մահ,
Կռուի դաշտից քո արիւնոտ մարմին
Ես տուն բերէի՝ սրտով գո՜հ . . . ուրախ . . .

„Ինձ դառն չէր լայնժամ թափել արտասուք
Քո արնով ներկուած դիակի վերան,
Ինձ ցաւ չէր լայնժամ ողբերով երգել
Քո պարծանքներով կանգնած գերեզման։

„Զի հայոց տիկնայք ինձի կասէին՝—
„Փա՜ռք, պատիւ քեզի, երջանիկ այրի,
„Դու բախտաւոր ես կնիկների մէջ,
„Զի կորուսիր այր՝—քաջ, հսկայ, արի։“

„Ինձ քաղցր էր յայնժամ թափել արտասուք
Արնով զարդարուած դիակիդ վերան,
Եւ ծաղիկներով պճնել, զարդարել
Քո միշտ պաշտելի հողադամբարան։

„Թո՛ղ պատերազմում, կռւի դաշտում,
Մեր հայրենիքի փրկութեան համար,
Սուրը քո ձեռին, փառաւոր մահով,
Թո՛ղ դու զոհէիր քո արիւն արդար։

„Ինձ քաղցր էր յայնժամ իմ ձեռով փակել
Քո այդ սև, հպարտ, շիջած աչերը,
Զի հազար աչեր պիտ՝ արտասուէին
Քո հզօր թրից սպանուածները։

„Զի ես գիտէի, որ դու թռցրիր
Հարիւր գլուխներ թշնամու ուսերէն,
Զի ես գիտէի, որ դու զրկեցիր
Հարիւր կնիկներ իւրեանց այրերէն։

„Այդ զարհուրելի խոր խոր սպիներ
Քո արութեանցը՝ — վկայ և նշան,
Չունի մի տղամարդ հայոց քաջերից,
Ոչ Քուրդ, ո՛չ Արաբ և ո՛չ մի Թուրքման։

Բայց ափսոս, քեզ հետ՝ ալ — վարդակարմիր
Դու մի թարմ սպի չը տարար գերեզման,
Դու մեռար, անբախտ, հասարակ մահով՝ —
Փափուկ մահճի մէջ . . . քո բարձի վերան . . .

1857 — Բաղէշ.

ՄԻՈՒԹԻՒՆ

„Ի բիւր ձայնից, լնութեան շքեղ
„Թէ երգք թռչին սիրողաբար,
„Մատուռնք կուսին ամենագեղ
„Թէ որ զարնեն փափուկ քնար,
„Զունին ձայն այնքան մի սիրուն
„Քան զանձկալի եղբայր անուն։“

Մ. Փէշիկթաշլեան

Տո՛ւր ինձ ձեռքդ, մենք եղբայր ենք,
Ե՛կ տանք սիրոյ միմեանց համբոյր,
Այն ի՞նչ ծաղիկ է անուշհոտ,
Քան զսէր եղբարց՝—սուրբ, բարեբոյր։

Եղբայր ենք մենք, մի հօր զաւակ,
Մեր երկուսիս երակներում՝
Մաքուր, պայծառ և անարատ՝
Հայկայ արիւնն է միշտ վազում։

Հա՛յ ենք, եղբայր, հա՛յ երկոքեանս,
Հայը հային է՞ր պիտի ատէ,
Այդ կաթոլիկ, պրօտ անուններ
Ի՞նչու մեզի պիտի զատէ։

Սէր, միութիւն, եղբայրութիւն
Մեր դրօշի վերա գրենք,
Մենք միասին ձեռն ի ձեռին
Մեր գործերը յառաջ վարենք։

Մենք միասին ուրախանամք,
Եւ միասին անենք մեր սուգ,
Յայնժամ մեզ կը քաղցրանայ
Աչքէն հեղած դառն արտասուք։

Եղի՛ր, եղբայր, դաւանմունքով՝
Դու կաթոլիկ և լուտերան,
Հաւատաւոր, կամ անհաւատ,
Գրիգորեան, կամ վօլտերեան։

Այդ քո կամքից, համոզմունքից
Ունի ազատ միայն կախում,
Իսկ կրօնքի լոկ պատճառաւ
Ի՞նչու ես դու ազգդ փոխում։

Հա՛յ ես դու, հա՛յ, Հայկայ զաւակ,
Դու պաշտէ քո ազգայնութիւն,
Սիրէ՛ լեզուն քո հայրենի,
Սիրէ՛ նորա աւանդութիւն։

Սիրէ՛ երկիր քո հայրենի՝—
Դրախտավայր մեր Հայաստան,
Սիրէ՛ նորա հողն ու ջուրը,
Աւերակներն ու անդաստան:

Տո՛ւր ինձ ձեռքդ, հայ ենք, եղբայր,
Ազգայնութեան կնքենք համբոյր,
Ով իւր ազգը չէ ճանաչում,
Մտքով, աչքով՝ խուլ է և կոյր:

1857—Բաղէշ.

ԵՐԱԶ

„Եւ գայլը գառին հետ պիտի բնակի, ու
„ինձը ուլին հետ պիտի պառկի, և որթը ու
„առոյգ առիւծը, և պարարտ զուարակը մէկ
„տեղ պիտի արածեն և նրանց մէկ պստիկ
„տղայ պիտի քշէ:"

Եսայի մարգարէ.

Ես քնած էի հանգիստ և անուշ,
Ինձ երևումէր հրաշալի աշխար,
Այնտեղ թռչունն երգումէր քնքուշ,
Այնտեղ լուսինը շողումէր պայծառ:

Այնտեղ ծաղկունքը խնկէին ամբրոս,
Այնտեղ ծառն իւր չէր թափում տերև,
Եւ բիւրեղի պէս կամարուէր ջրհոս,
Անուշ ջերմութեամբ փայլումէր արև:

Ամէն ինչ այնտեղ խօսումէր անկեղծ
Բարեկամական սէր, եղբայրութիւն,
Եւ մշտադարուն—կեանքով անեղծ
Գեղափայլումէր անմահ բնութիւն:

Այնտեղ մահաւիթ սուր և հրացան
Փշրելով՝ շինէին լուծեր արօրի,
Եւ չը կար զինուոր, այլ իւր վարուցան
Գործումէր ազատ մշակն արի:

Խաղումէր գառը գայլի հետ անվախ,
Սէրտ եղբայրութեան ուխտելով դաշը,
Եւ միամիտ ցուլն՝ աներկիւղ, ուրախ՝
Լիզէր ամեհի առիւծի բաշը:

Եւ բազէի մօտ անհոգ ճնճղուկ
Իւր ուրախալի երգումէր երգը,
Նա չէր վնասում մրգաբեր ծաղիկ,
Ո՛չ երկրագործի ցորենի բերքը:

Այնտեղ զինուորի դուժկան մուզիկան
Վառօդի ծխում մահ չէր պատճառում,
Այլ սրբանուէր սաղմոս, շարական
Հնչվումէր անուշ՝ Աստծոյ տաճարում:

Եւ ժողովուրդը բնաւ չէր կռւում.
Դառն հոգսերի ցաւալի շղթան,
Հայրենի հողում՝ հունձքի և կալի
Էին պարապուած, վարէին գութան:

Հրաշալի՜ աշխարհ... : Հինաւուրց Գուշակ (*)
Մարդկային կեանքին ձևեց այդ տարազ,
Բայց ես զարթեցայ իմ քնէն անուշակ,
Ափսոս, որ տեսածս՝ — էր մի լոկ երազ...

1858 — Թիֆլիս.

(*) Եսայի մարգարէ.
Ծան. հեղ.

ՈՒՐ Է ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

„Հայրենիքին, քո սիրելի հայրենիքին
եղիր դու կից.
„Այնտեղ են քո զօրութեան բուն արմատները:"

Շիլլեր

Ա.

Կարծես կայէնի անէծքով նախկին
Թափառում եմ ես քաղաքից քաղաք,
Եւ անգութ բախտն ուժգին և ուժգին
Հալածում է ինձ ընդ ծով և ցամաք:

Իսկ այժմ դէպ' ո՞ւր: — գնամ Պարսկաստան,
Օդն է քաղցրաշունչ, երկինք՝ — պարզ և ջինջ,
Ուր անուշահոտ շնչէ բուրաստան,
Եւ մշտադարուն ծաղկում է նարինջ:

Ուր մարմարիոն շատրուանի մօտ,
Սիրուն հարեմը չոքած առաջին,
Արբուած ղէյլանի ծխովն ամբարհոտ,
Անուշ բերկրութեամբ ապրում է հաջին:

Ո՛չ, չարժէ բնակվել այնպիսի երկրում.
Ուր չը կայ օրէնք, — չը կայ և Աստուած,
Ուր բռնակալը միշտ թուր է կրում
Անմեղ զոհերի արիւնով ներկուած:

Քրիստոնեայ հային խորթ է Պարսկաստան,
Ուր ձայն զանգակի չէ հնչում ականջիս,
Որպէս հնդկական պարիայ՝ — պիղծ, խոտան,
Պարսիկը զզուանօք ինձ կոչէ ն ա ջ ի ս . . .

Բ.

Ուրեմն լաւ է դիմել Տաճկաստան,
Դէպի տէրութիւնն հզօր սուլթանի,
Կիսալուսնի տակ խնդրել ապաստան,
Անդ ապրել կարէ ամեն կենդանի:

Հարուստ է երկիրն և դաշտ փարթենի
Ոռոգեն ջրով Տիգրիս և Եփրատ,
Անդ մշտականաչ ծաղկէ ձիթենի,
Հացն և գինին՝ էժան են առատ:

Անդ ճոխ հարեմում օսմանցի խաթուն
Սէր է զրգռում ամեն մի րոպէ,
Իսկ լերկ — սեւամորթ ներքինին արթուն
Հսկէ հարեմին, որպէս քրովբէ:

Եւ զուարճասէր Օսմանի որդին
Իւր օձապտոյտ ծխէ նարգիլէն,
Սէրիցը սառած հեշտասէր սրտին
Բորբոք է տալիս՝ միշտ դառն ղահվէն։

Ո՛չ, Տաճկաստանում չունեմ ես դադար,
Ուր հալածասէր ոգին զօրանի
Ճնշումէ հայի իրաւունքն արդար,
Կոչումէ գ ե օ վ ու ր, խ ն զ ը ր ե ա բ ա ն ի . . .

Գ.

Դէպի Գաղիա ուրեմն դիմել,
Յեղափոխութեան բնիկ օրօրան,
Արթուն կեանքի ճոխ վարդեր քաղել,
Ազատ իրաւանց է անդ կայարան,

Անդ չը կայ հարեմ, չը կան ներքինիք,
Այնտեղ է ճէննաթ, ժպտումէն հուրիք,
Անդ մուզիկայի ձայնը չէ լռում,
Եւ անուշահոտ փրփրումէն գինիք։

Ուր կախարդական Պարիզ գեղասէր՝—
Համաշխարհական մօդայի օջախ,
Գեղեցիկ սեռին վառումէ միշտ սէր,
Պչրանք, պաճուճանք դարբնելով յաճախ

Դէպի Գաղիա, Պարիզ, սիրելիք,
Դէպ՝ մուզաների նուրբ հայրենիք,
Սիրել գեղարուեստ, պաշտել կնանիք,
Մանուկ զօրութեան քաղել թարմ դափնիք։

Իսկ այդ բերկրութիւնք չեն, չեն ինձ համար,
Նոքա հրճուանք չեն բերում սրտիս,
Երբ կաթոլիկը կոչէ ինձ քիմար,
Հ ե ր ե տ ի կ բառը կպչէ ճակատիս . . .

Դ.

Դէպի Գերմանիա էլ լաւ է դիմել,
Արհեստ, գիտութեան է անդ կենդրոն,
Պրուսակների հետ գարեջուր քամել,
Անաղօտ լուսով փայլէ անդ կրօն։

Անդ ակօսի մէջ երկրին արգաւանդ
Հատու արօրի խոփն է փայլում,
Ազատ մշակի երգէն ջերմեռանդ
Միշտ անցաւորի հոգին է զմայլում։

Եւ հազարաւոր գործատներում
Զօրաւոր շոգին դարձնումէ չարխեր,
Օտար աշխարհից արծաթ է բերում
Արհեստով մշակած երկրին բերքեր։

Ուր պատուի պաշտպան՝ անհեղ հրացան
Ազգասիրական վառուեց կրակով,
Աստղերից վերև, վերև բարձրացան
Դրօշի փառքն ազգին քաջագով:

Բայց ի՞նչ շահ ինձի փառքն օտարի,
Եւ գերմանացու միշտ թթուած ռեխ,
Երբ նա ինձ չի տալ, անվարձ կամ ձրի
Իւր հոտած կալբաս՝—չորացած տրեխ:

Ե.

Ռուսաստանում լաւ է ինձ համար,
Հնարաւոր է հանգիստ ապրուստ,
Կեանքն այնտեղ անհոգ է, յարմար,
Իսկ պետութիւնն՝—իւր փառքով հարուստ:

Այնտեղ միմեանց հետ գռեհիկ—մուժիկ
Ապրումեն որպէս սանահէր—սանիկ,
Եւ լիքը բաժակ թթուած կըվասով
Ուրախ է մշակ և շատ երջանիկ:

Այնտեղ ոխ, նախանձ՝ ծանօթ չէ մարդկան,
Յանկարծ հայհոյանք, ապտակ և կռիւ,
Իսկ երբ որ մէկը դէմ արեց վօդկան,
Հաշտվումեն կրկին սիրոյ համբուրիւ:

Եւ ջինջ—կապուտակ աչերը ռուսակի
Թովումեն մարդի և սիրտ և հոգի,
Ա՛խ, որպէս նոքա հնազանդվումեն,
Երբ գրկումես նոցա մէջք սիրամարգի:

. . . .
. . . .
. . . .
. . . .

Զ.

Գնամ Հայաստան՝—իմ բնիկ հայրենիք,
Մեր քաջ նախահարց արիւնով սրբուած,
Ուր ստեղծագործութեան առաջին կնիք
Արարիչ ձեռքով դրոշմեց Աստուած:

Այնդ առաւօտեան երգը սոխակին
Յիշեցնումէ միշտ կորուսեալ Եդեմ,
Եւ տղամարդի կախարդէ հոգին
Սևորակ աչերն կուսին լուսադէմ:

Այնդ վտակաց մէջ ուեր դրախտին
Դեռ. անմահների հնչվումէ քնար,
Կանաչ, ծաղկազարդ վառվումէ գետին,
Վաղորդեան ցողը սփռումէ գոհար:

Հարուստ բնութիւն, ջուրը՝—մեղրահամ,
Օդը՝—քաղցրաշունչ, մարդիքը՝—բարի,
կանայքը՝—սիրուն, իսկ ժողովուրդը՝—
ժիր և գործունեայ է ամբողջ տարի . . .

Տիրում է խաւար և աղքատութիւն,
Մշակը թշուառ գործում է՛, գործում,
Ագահ խլում է դառն աշխատանքը,
Նորա արիւնը՝ քամում է, ծծում . . .

Է.

Սիրուն Հայաստան, ուր Ադամ, Եւան,
Ադինեան Եդեմ՝ տնկեց Եհովան,
Ուսկից բխելով Փիսոն և Գեհոն
Ջրեր սառնորակ գլորեն անհուն։

Ուր ծաղիկների միջով Արաքսին,
կուրի հետ գրկուած, հոսեն միասին,
Ուր բարձրագագաթ հսկէ Արարատ
կանաչ դաշտերին՝ պտղատու, առատ։

Ուր չկայ խորշակ, չկայ բորէաս,
Բիւր ծաղիկներով փայլում է Արագած.
Եւ Փշփշալով դժուած Հրազդան
Ջրում է անհուն արտեր, անդաստան։

Այնտեղ ծերունի Նոյը՝—մեր նախնին՝
Իջուց իւր տապան Մասիսի գլխին,
Հիմնեց Ակոռին, բաշխեց մեզ գինի,
Որ Հայաստանցին միշտ ուրախ լինի։

Այնտեղ Հայկ դիւցազն՝—հսկան մեր արի,
Սատակեց զոռող Բէլին վիթխարի
Եւ արիւնոտն որդւոյն Տիրանի
կնքեց ղաբաղան սուրբ Հայաստանի։

Ը.

Այնտեղ քաջն Արամ մեխեց Նիւքարին՝
Հպարտ մետացուն՝ պարսպի քարին,
Անդ Արշակունին՝ միշտ—հանապազօր՝
Ջարդէր լեգէոն Պոմպէին հզօր։

Անդ սկզբաննէ սերմունք սրբազան
Աւետարանի բուսնիլ սկսան,
Երբ արքայն Աբգար ինքն առաջին
Ի ճշմարտութիւն հաւատաց փրկչին։

Եւ ջարդեց Տրդատ՝—հզօր թագաւոր,
Մեր աստուածների արձաններ շատուոր,
Եւ Արմաւիրի սօսիներիցը
Մեր դիցուհիքը գնացին աքսոր։

Էլ ծաղիկներով հայոց աղջիկներ
Չը զարդարեցին Անահտայ տաճար,
Եւ աստղկական պարերգ և տօներ,
Ուրախ ցնծութիւնք՝ լռեցին խայտառ:

Թողին վահունիք Վահագնի պաշտօն,
Մեր քաջ դիւցազն ողջակէզ և տօն,
Եւ հերոսական մրցութիւններից՝
Իւր խաղերի մէջ՝ զրկուեցաւ Տարօն:

Թ.

Մայրե՛կ Հայաստան, սիրուն հայրենիք,
Ընդունի՛ր ծոցումդ տարագիր որդիդ,
Բա՛ց արա նորան քո հին վէրքերը,
Պատմի՛ր թաղուցած դարդերը սրտիդ:

Բայց ի՞նչ խաժամուժ է աստ ժողովուրդ,
Ինձ ճանաչելու չը կայ մի անկիւն,
Թուրք, Պարսիկ և Ռուս, Ղզլբաշ և Քուրդ՝
Տիրած են երկրի ամէն մի կանգուն:

Զլանումք այստեղ հայի բաժակին
Իւր ազնիւ բերքը գինեւէտ Գողթան,
Եւ օրհասական նորա վիճակին
Սպառնումք մահ աղայի շղթան:

. . . .
. . . .
. . . .
. . . .

1871—Թավրիզ.

ՎԱՍԱԿ

„Միհրներսեհը . . . խոստացաւ նորան տալ
„աւելի մեծ իշխանութիւն, քան ինչքան ու-
„նէր ինքը . . . : Նա ասումէր՝ իբր թէ Վա-
„սակը կարող է հասնել մինչև թագաւորական
„աստիճանի, եթէ մի հնար գտնի հայոց ուխտի
„միաբանութիւնը քանդելու և թագաւորի հրա-
„մանը նորանց կատարել տալու:"

Եղիշէ.

Ասաց պարսիկն՝ „Ահա՛ քեզ, Վասակ,
Ստացի՛ր մեզնից լի ոսկով քսակ,
Եթէ ուրանաս քո ազգութիւնը,
Կստանաս այլև՝ փառք, պատիւ, պսակ:"

Վասակը նորան տուեց պատասխան՝
—„Յօժար եմ կամքիդ, վեհափառ իշխան,
Ես ուրանումեմ իմ ազգութիւնը,
Այդ մեծ շնորհաց թո՛ղ լինի փոխան:"

Ասաց պարսիկն՝ „Արի՛ դու, պարո՛ն,
Քո հայրենական ուրացի՛ր կրօն,
Այլև աշխատի՛ր, քո համազգիքը
Մեր օրէնքների կատարեն պաշտօն:"

—„Այո՛, կ'աշխատեմ, իմ տէր, անդադար
Եւ այդ հրամանն ածել ի կատար,
Թէ ձեր վեհութիւնն ինձ Հայաստանի
Թագն ու գահը փոխարէն կը տար:"

„Կստանաս բոլորը, վկա՛յ է երկինք,
Միայն աշխատի՛ր, որ քո ազգայինք
Մեր լեզուով խօսեն, մեր գրով գրեն,
Թողնեն հայրաւանդ դպրութիւն, օրէնք:"

—„Այդ ինձ կատարել է խիստ դիւրին,
Թէև չափազանց գործ է դժուարին,
Բայց ես կը ջնջեմ, միամիտ կացէք,
Ողջ սրբութիւնքը յամառ հայերին:"

„Մենք ճանաչել ենք քեզ այր գործունեայ,
Մեր նպատակին մտերիմ պաշտօնեայ,
Եւ քո փառք, պատիւ՝ կ'աւելնան կրկին,
Վերջին իմ հրաման կատարէ, գնա՛:

„Ցանի՛ր ազգիդ մէջ խռովութեան սերմեր,
Բաժան—բաժնութիւնք՝—ընդ ամեն կողմեր,
Մանի՛ր դու մեզ քո երկիրը հայրենի,
Տարածի՛ր այնտեղ իշխանութիւն մեր:"

Եւ այդ հրամանին հաճեցաւ Վասակ,
Առեց նա իւր վարձ՝ լի ոսկով քսակ,
Վազեց դիւաբար դէպ' սուրբ Հայաստան՝
Իւր հետ մոգերի ամբողջ հրոսակ:

Հեռ, խաւարութիւն սփռեց ընդհանուր,
Ջնջեց բաժանմունք, յարուց հուր և սուր,
Ու եդեմատիպ՝ խաղաղ Հայաստան
Աւերեց, շինեց անապատ տխուր...

1873—Թիֆլիս.

ՄՈԳՊԵՏ

Սև մոգպետին դիմեցի
Հետս առայ ես իմ „փունջ,“
Եղանակը շատ վատ էր
Հով էր փչում դառնաշունչ:

Ես ունէի նպատակ...
Ուղիղն ասած, խիստ սխալ,
Ս ա տ ա ն ա յ ի ց ի՞նչ բարիք
Կարելի է մեզ յուսալ:

Պատահումէ, երբեմն
Մարդ այնպէս է մեղանչում,
Խոստովանելն անգամ
Կարմրումէ, ամաչում:

Ի՞նչ օգուտ... Ո՞վ իւր կեանքում
Չէ գործել յիմարութիւն,
Մոլորութեանց ենթակայ
Է տկար մեր բնութիւն:

Ըշտապ—ըշտապ վազելով՝
Հասայ նորա կացարան,
Սաստիկ ցրտից սառչելով՝
Եւ չէր բացվում իմ բերան:

Ես քաշեցի զանգակը,
Յայտնուեցաւ մի ծառայ,
Իմ սխալման առաջին
Արդէն լաղալթն առայ...

Կերբերոսից աւելի
Գժնէատեսիլ այդ կիմար՝
Ինձ ստիպեց քառորդ ժամ
Դրսում սպասել չարաչար:

„Պարո՛ն, ասացի նորան,
Դուք յայտնեցէք իմ մասին,
Թէ ներկայանալ կամիմ
Ես մոգպետի սպասին:“

—„Որպէ՞ս է ձեր ազգ, անուն“
Հարցրուց ինձանից ծառան,
Պաշտօնական իւր ոճով.
Ես յայտնեցի շուտ նորան:

Նա չքացաւ: Ես երկար,
Երկար սպասումէի դրսում,
Անիծելով իմ խելքը,
Զի շատ սաստիկ էի մրսում:

Վերջապէս հրաւիրեցին
Ինձ մոգպետի կացարան:
Շուտ „անուն հօր“ ասեցի,
Տեսնելով նորա կերպարան:

Բուականնին զարդարուն
Էր դահլիճն այն շքեղ,
Նորա կահն ու կարասին՝
Էր թանգագին, բարեդեղ:

Բազկաթոռի մի վերա
Նստած էր քուրմն այն սուրբ,
Մետաքսեղէն հագուստը
Էր փառաւոր և շատ նուրբ:

Աստղի նման փայլումէր
Ալմաստի մեծ մատանին,
Ականակուռ մանեակը
Լոյս էր բաշխում խաւարին:

Երբ որ տեսայ ես նորա
Վերարկուն լայնաքղանց,
Կարմիր մախմուռ հողաթափ,
Փնքշութիւնքը չափազանց՝ —

Կարծումէի, թէ արդէն
Դա չէ՞ սեւլիկ մի մոգպետ,
Այլ ես շնորհ ունէի
Մի պճնասէր կնոջ հետ:

Ինձ այդ իսկ սխալմունքէն
Ազատեց նորա մօրուք,
Մտածելով, թէ այդ ազդ
Զարդարվումէ, որպէս կուռք:

Յակամայից տխրուած,
Ես մերժեցայ դէպ՝ յառաջ,
(Եւ ինչ իմ մեղքը գաղեմ)
Համբուրեցի նորա աջ…

Խօսակցութիւնը սկզբից
Էր տաղտկալի, կցկտուր,
Զի անհամ, անդոյն խօսքերին՝
Միշտ անհամն է տխուր:

Գանգատվումէր մոգպետը
Մերթ կլիմայ ժողովրդից,
Թէ նորա չը գիտէն յարգել
Փառքն ու պատիւն անմահ գլից:

Մերթ գանգատվումէր տարուայ
Անպիտան եղանակէն,
Զի բանդարկեալի նման
Դուրս չէր գալիս սենեակէն:

Մերթ անիծէր խոհարար,
Ճաշը վատ էր պատրաստում,
Մինչ պղուանօք ամէն օր
Նա խմումէր և ուտում:

Նկատեցի, վերջ չունէն
Այդ գանգատները տրտում,
Զի բացատրումէ լեզուն
Ինչ որ ամբարուած է սրտում:

Յակամայից ես նորա
Ընդհատեցի այդ տրտունջ,
„Ահա՛, հայրիկ, ասացի,
„Ձեզ բերել եմ ես իմ „փունջ“

Իսկ մողպետն էլ չեղաւ
իմ աստծին ուշադիր,
խիստ ծանր յօրանջելով՝
Ծուռը մեկնեց իմ խնդիր՝—

„Ե՛հ, այդ անիծուած փունջն
ինձ խիստ շատ է վնասում,
Ես նորանից մի օգուտ
ինձ բնաւ չեմ սպասում:

„Լաւ է ըմպել կոնեակ,
Ռօմ, խերես և շամպան,
Դոքա փոքր ի շատէ
Օրինաւոր են մի բան:“

—„Ա՛խ, ես ձեզ սխալեցրիմ,
Ասացի, հայր պատուական,
„Փունջ“ և պունշ են դոքա
Որոշ բառեր զանազան։

—„Փունջ“ ասածս նուաստիս
է յօրինած երգարան:“
Այս ասելով ես գիրքը
Տուեցի ձեռքը նորան։

Առեց, թերթեց նա գիրքը,
Նայեց թւին և ամսին,
Որպէս թուրքը զգուանքով
Նայում է խոզի մսին։

Նա յետ տուեց ինձ գիրքը,
„Կարդացէք, ասաց, մի բան.“
(Երբ որ արջն է քո տեսուչ,
Վա՛յ քո հալին, պարտիզպան . . .)

Մինչ մոգպետը քնքշաբար
Յարդարումէր իւր մօրուք,
Սկսեցի ես կարդալ
„Դժոխքի կապալառուք։“

Ուշադրութեամբ հայրիկը
Լսումէր իմ ընթերցում,
Որ բորբոքեց նորա մէջ
Սրտի սաստիկ զայրացում:

Գրգռուեցան, վառուեցան
Նորա ողջ չար կրքերը,
Քանզի տեսաւ այն ձիւաղ
Հայելումն իւր պատկերը։

Նա ընդհատեց ընթերցում,
Գոռաց ամպի որոտով,
Ես կատաղի նրա դէմքը
Զննումքի անվրդով։

«Այդ ի՞նչեր ես դու գրել,
Լի՛րբ, անամօթ, անիծուած,
Ես քեզնի ըմպել կը տամ
Այդ թունաւոր յօրինուած:

«Հեռու՛, հեռու՛, դուրս կորի՛,
Էլ չը տեսնեմ քո երես,
Դու կստանաս քո վարձը,
Դու իմ ուժը լսի՞լ ես . . .

«Ես քեզ այնտեղ կորցնեմ
Լոյս չը տեսնես էլ բնաւ,
Ուր չէ ծաղկում նշենին,
Բոյն չէ դրել ագռաւ . . .

— «Այո՛, գիտեմ այդ բոլոր,
Ասացի ես սառնաբար,
Միայն եկայ ես քեզ մօտ,
Լաւ զննել քո տիպար։

Զի լուացնէ պօետը
Քո կեանքի նկարագիր,
Նորան փոյթ չէ լինելը
Օտար աշխարհ տարագիր . . .»
1873—Թիֆլիս.

Խ Ր Ա Տ

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

Քո ազատախօս տաղերն անաչառ
Կը զրկեն հայից քե՛զ, խե՛ղճ բանաստեղծ,
Կը լինես աղքատ, կը մնաս թշուառ,
Քանի քո քնար հնչումէ անկեղծ։

Կեղծաւորաբար դու երգէ գովեստ՝—
Թէ կամիս դու հաց՝—անգութ հարստին,
Շողոքորթութեան լա՛ւ ուսիր արհեստ,
Եւ մի՛ ափսոսիր պատուիդ կորստին։

Կռերի առջևը դու խնկէ կնդրուկ,
Ապրուստ շահելու թէ ունես փափագ,
Որպէս գետնաքարշ գերի, կամ ստրուկ,
Կուռքին մամոնի եղի՛ր երկրպագ։

Յայնժամ կը գտնես դու քեզ մեկենաս,
Որ աշխատութեանցդ կը յարգէ տաղանդ,
Մինչև գերեզման դու խեղճ կը մնաս,
Թէ ճշմարտութիւն երգես ջերմեռանդ։

1873—Թիֆլիս.

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ե Ց Ո Ւ

ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

„Վատ ազաթնիր նորս բերաւ
Մեր քաղկումը Եւրոպէն,
Քէֆն ու սաֆէն գլխի կորաւ,
Փըչացաւ էշղանցօրէն . . .

„Ո՞վ էր տեհի մէ մանէթ
Կախեթու գինու թունգին,
Մէ աբասով էր առաջ,—
Էն էլ շատ—շատ խիստ թանգ գին։

„Դէ՛, արի դուն, իմ պարուն,
Կուշտ փուրով լաւ գինի,
Ո՞վ կու գիմնայ էդ մասին,
Շուտով կուզր չի նընգնի։

„Ու ճնպէտ էլէ լօքօն,
Ցօցխալ, փիչխուն ու զուլթխին,
Արնի գնով ծախում էին,
Ի՞նչ ձեռք կու տայ մէր խալխին։

„Թէ առնումիս,—էղքան փուղ
Դուն ի՞նչ սրտով պիտի տաս,
Թէ չես առնում,—ուփրօ վատ,
Ձուկիցը պաս կու մնաս։

„Միտս է գալիս վաղօրօք,
Ճիպինի—տղայ Պօխրօն,
Ես, Ջանղակինց Թաթուլը,
Ի՛նչ մարդ էր էն օխերօն . . .

„Մէկն էլ պածօ—Սօսիկօն,
Թուշինի—տղայ Ճանճուրը,
Ու կօճօ—Արտեմը՝—
Մախօխի տղի պուճուրը,—

„Դիփի էլ ագնիւ քաղկըցիք,
Օջախի փուրթիք պատուաւոր,
Չը կէր միր մէջ շան—ծրաք,
Կռօ, կամ ջօկ մօթրեփուլ։

„Օրթաճալումը դիփունանքս
Նստիլ ինք Քռի ափին,
Ո՞վ կանայ պատմել հիմայ
Ձուկըն ու սափէն միր քէփին . . .

„Սազանդարնիր ունէինք՝—
Ամէնքը՝ լաւ լաւ տղայ,
Նրանց հատն էս ըժուկում
Ո՞վ է տըվի, իմ աղայ։

„Քէչալ—Դառչօն էր մէկը,
Ամէնքը լաւ կը ճանաչին,
Ո՞վ կարայ ածել հիմայ
Նրա թառն ու քամանչէն։

„Ու էնպէսդ էլ Գիգօլին,
Երբ կ'ածէր իւր դայիրան,
Սաղ աշխարքն արմըցած՝
Մտիկ կ'օնէր իր վրան։

„Ա՛խ, քօռ—Գաբօի զուռնի
Գիտե՞ս ձէնն ուր էր էրթում,
Սօլօլակում կը լսէր,
Երբ նա կ'ածէր Թէլէթում։

„Խօսրօենց Բաղդասարի
Ո՞վ կ'ածէ դիպլըպիտօն,
Հէստի ղօչաղ, մասխարայ,
Օյինբազ էր էն կինտօն . . .

„Զօփուրի—տղայ Ծատուրի
ճիանուրն ու սազը . . .
Հիմայ ի՞նչ աշըղ կօսէ
Էն Թուրքի մուխամբազը :

„Մազրամ հիմայ վուչ մէկը
չէն մնացել էս աշխարքում . . .
Աստուած օղորմի նրանց
Ամէնքի էլ լիս հոգուն։

„Նստել ենք Քրի ափին,
Լօթու տղայ Եագուլը
Դամբ է գցում, նաւէմէն
Դուրս է տալիս փիշխուրը . . .

„Ափին կրակ ունենք վառած,
Վրէն պղինձն է դրած,
Մէ կողմից չալաղաջին
Շամփրով անում խորոված,

„Մէկ կողմից էլ պղնձի մէջ
Ածումէնք սաղ ցօցխալը,
Դուն տես հիմայ մեր տղորց
Քէփի, զօվղի գիփ հալը . . .

„Տկճուրներով լաւ գինին
Շարած ունենք չուրս կողմով,
Ամպո՛ր ասա, ի՞նչ գինի,—
Լաւ ռանգով, լաւ համով։

„Հազար—փէշէն ձեռից ձեռ
Պտուտ է գալիս պլպլուն,
Խմէ՛ ու խմէ՛ գինին,
Վուրքան կուզես, իմ պալուն։

„Ծափ ենք տալիս, դէ՛ ծափ տուր,
Հարա՛յ, հրո՛յ, զիժլնա՛յ . . .
Ո՞վ չի ուզի էղպէս քէֆ,
Գինի խմէ, զըժանայ։

„Սազանդարնիրը զօռ են տալի
Իրանց սազին, չօնգուրին,
Թուշինի տղէն խաղումէ
Հէստի զօչաղ լէկուրին։

„Ի՞նչ գլուխդ ցաւեցնեմ,
Կարճըն ասիմ, իմ պարուն,
Էնհենց մինք սաղ մէ շաբաթ
Քէփ արինք Օրթաճալում։

„Ինչու էղնէն քաղկումը
Միր մասը հէսաբ արինք,
Մէ մինալթուն կէս շայի
Ամէն մէկս փըսօն տուինք:

„Հիմայ ո՞ւր է էն մուխար,
գնա՜ց . . . մէկ էլ ձեռ չի գայ,
Վուր էլ էնպէստ քէփ անենք,
Ո՞ւր է էն գինին . . . էն ձուկը . . .

„Վա՜յ ադաթնիր նէրս բէրաւ
Միր քաղկումը Եւրոպէն,
Քէփին ու սաֆէն դիփի կորաւ,
Փըչացաւ էտղանցօրէն . . .

1871—Թիֆլիս.

Շ Ռ Ա Յ Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

(Թիֆլիսեցու գանգատներ)

Ա.

Վա՜տ ըժուկի ռաստ էկայ
Ծեր հասակումս, իմ պարուն,
Կօսեմ, Նեռը ծնվել է,
Մօտ է աշխարք քանդվելուն:

Էդ ի՞նչ բաներ չեն տեհնում
Իմ միղաւուր աչքերը,
Միղքն ու մահը միր մէջում
Երեւնումին աշքարայ:

Վուշ ամօթ կայ, վուշ նամուս,
Մարդն իր քէփումն է գնում,
Սատանի նընկրութենից
Նա խալի չի՛ հեռանում:

Էնպէս կի՛ չէր վաղօրօք
Քրիստոնի ադաթը,
Աստծու ահն իր սրտում
Ունէր կնիկն ու մարթը:

Ուշունցնիր էինք տալի,
Ծեծում էինք մենք կնկան,
Նրա լեզուն միշտ մունջ էր,
Նա չէր խօսում ձուչ մի բան։

Հիմի կնանիքը մարդու
Գլխին դրիլ են նօխտան,
Իշի նման էտևից
Վուրթէնը կուզէն, քաշ կու տան։

Աղջկերքը խօ ուրիշ բան
Իսկի փիքր չեն անում,
Ջհէլ տղերանց սէրէմէն
Նրանց խիլքն է միշտ գնում։

Էլ չեն մնտղում տղամարդի
Էլած, չէլածն ու հալը,
Իրէնց քէփին մնսումէն
Խեղճի դօվլաթն ու մալը։

Ձէն փիքր անում թէ մարթը
Ի՛նչ օրօվ է փուղ դաղում,
Նա զրկումէ իր կեանքը
Վուչ խմումէ, վուչ ուտում։

Գաղումը կարճ է նա չափում,
Քարումը — թեթև քշում,
Կեխտոտ սաերն ու օյթում
Բօլ է մնսում բաղարում։

Ստանէքին ծախումէ,
Նա իր հօքին փողոցում,
Ինչկլի քանի մէ շայի
Ձլիվ իր ձեռքն է գցում։

Մազլամ, նրա էդ ամէն
Արնի, քրտինքի գինը՝
Մաղազինում, խաղերում՝
Գիփի մնսումէ իր կինը։

Մէկէլ տեհար, սաումին՝
Ծղալօրը կուտր նընգաւ,
Էլ չեն սսում՝ կնիկը
Էն խեղճի տունը քանդաւ։

Բ.

Էդ անիծուած չար մօդան
Էլ չէ տեւում մէ տարի,
Գէլաքնուրի ծախօղն
Էնքան չունի մուշտարի։

Մէկը, տեհնումիս, պոչը
Թրև է տալի ղայրաթով,
Կօսես, քուչէքի աւելը
Վիր է կալի փօղրաթով:

Մէկէլը՝ օխչարի նման
Էշնէն կապիլ է դըմակ,
Կօսես, դարբնի մինձ փուքսով
Փըչած ըլին իր քամակ:

Մէկը՝ ձկնորսի դամբի պէս՝
Լէն բացիլ է խաբարդօն,
Ճամփայ տվէք, անցկէնայ
Միր քաղքի աղջիկ—պարօն:

Մէկն՝ էլ իւփկէքն էնքան
Հագած ունի իր վրան,
Կօսես, դաշտումը սայլթի
Դու տեհնումիս մինձ վրան:

Վո՞ւր մէկն ասիմ, ախպրտիք,
Անունիրն էլ չիմ գիտում,
Սատանա՛ն ինքն է խաբար,
Ինչ վուր նրա՛նք ին հաքնում...

Ա՛խ, էն հաւի կուզիով
Գլխին դրած շլապկէն,
Թարաքամի մօթլի պէս
Մուֆթն հաքիլ ին ձեռքէն,

Ա՛խ, էն դամբի պէս զործած
Էրեսների էն քուղը,
Սապօկների ճռճռոցը՝
Քանդումե՛ն իմ ըղուղը...

Ու բերնումը ծխելով
Սատանայի փուրվարը,
Մէջք կոտրած կատուի պէս,
Երբ չափումեն բուլվարը՝—

Չիմ կանացի, հա՛մ Աստուած,
Բարկութինն իմ սանձել,
Սկսումեմ վա՜յ տալով՝
Միր կնանիքն անիծել...

Երբ որ սիրտս էրվում է,
Ասումեմ, թէ էդ թավուր
Ադամթնիրը խիստ վատ ին,
Ինձ չինումին միդաւուր:

Տեհար, մէկը՝—շլեապով,
Քաշած ձեռին շան կաշին,
Շուշի կտորն աչքերին՝—
Լուս նընկաւ քո առաջին:

Պետըրբուրգում միթօմ
Աւարտել է իր ուսում,
Փիլիսոփայ է, կօսես,
Խուրը տըկէմէն է խօսում:

Մէ ձեռը նա փըքվելով
Ունի շալվարի ջիբում,
Կոտրատվելով՝ միւս ձեռով
Իւղած մազերն է քօքում:

Աստուծ վուչ գլխի նրա
Գլուխն ու արեր,
Շառըշուռ է, մէ խօսքով,
Ընդուր տուած բարեր:

Չիս հասկանում՝ ինչ լեզւով
Էդ մօթրեվուլ սարսաղը՝
Կոտրատվելով՝ փըքվելով՝
Սկսում է իր խաղը՝—

„Ծերուկ, կօսէ, դու լուռ կաց,
Անցաւ արդէն ձեր դարը,
Մարդկութիւնն որոշեց
Կեանքի պատշաճն, արդարը:

„Այժմ ազատ իրաւունք
Վայելում է ամէն կին,
Չէ նա այլ ևս ամուսնի
Գերի, ստրուկը նախկին:

„Նա ընկեր է հաւասար
Այժմ իւր տղամարդին,
Նա ազատ է կատարել
Բաղձանքներն իւր սրտին:

„Նորա շքեղ պաճուճանք,
Նորա գեղն և զարդը՝
Մեր բոլոր վայելչութեան՝
Է հօտաւէտ թարմ վարդը:

„Նորա թըշի մի համբոյր,
Քաղցր ժպիտը դէմքին,
Են մեր բոլոր վշտերի
Եւ հոգսերի միակ գին:

„Երբ տղամարդը նորա
Գրկում է մէջքը սիրուն,
Մոռանում է՝ սրտամաշ
Դառնութիւնքը ցաւերուն . . .

„Ա՛խ, արժէ նոցա սիրուն
Աշխարհ և երկինք զոհել,
Նորանց քնքուշ վարդի պէս
Միշտ փայփայել ու պահել:

„Ա՛խ, կանայք, կանայք, կանայք,
Հայոց սիրուն աղջիկներ,
Ձեզ մատաղ է իմ կեանքը,
Ձե՛զ, դրախտի հրեշտակներ:

„Դուք էք սրտիս առարկան,
Դուք էք մտքիս ցնորքը,
Ես սիրում եմ ձեր բոլոր
Ճոխ, պճնազարդ շնորքը:

„Ես սիրում եմ օղային
Ձեր հագուստը թափանցիկ,
Ես պաշտում եմ մօղային,
Տարազների գեղեցիկ:

„Ես սիրում եմ խշխշուն
Ձեր խուփկայ և կրինօլին,
Տարի լալէ . . . լայ լալէ . . .
Տարի լալէ . . . տայ լալին . . .“

Գ.

Մէկ էլ տեհնիմ էն գըժի
Իծանիրը մօտ էլան,
Նա երգումէր, պարումէր,—
Ծռե՛ց էլի իր փալան . . .

Տոտինկն էր տալիս, թռչկոտում,
Ջռնչումէր ու զռնչում . . .
Ոտնամն էլ մէ կողմից
Կապումէր խաղի պոչում:

Պարտական եմ, թէ մէ խօսք
Ես կարացի հասկանալ,
Ո՞վ կարող է էն տուտուց
Փրանտի խօսքերն իմանալ:

Մագրամ, էդքանը լուս ընկայ,
Որ նա ասիլ էր ուզում՝—
Կնիկտիքն այլ տեղ ազատ են,
Ի՞նչու գերուսին Թիֆլիզում:

Ես էլ նրա խօսքերին
Էդպէս տըւի պատասխան,
Բալքամ, կուլի պրծացնիմ
Էն սարսաղէն իմ եախան։

—„Լաւ, էս իմ աչքիս վրան,
Խօսքդ շաքրով, իմ պարուն,
Մեզի համար պէտքը չէն
Ադաթներն էս դարուն։

Թող կնիկերքն ըլին
Մեզնից մէ բանով աւել,
Բայց մեզ դերի շինելու
Իրաւունքն ո՞վ է տուել։

Թէ վուր միզ հետ նըննկիր ին,
Ինչպէս կասեն՝ հ ա ւ ա ս ա ր,
Մեր գործերում թո՛ղ ըլին
Մարդի հետը բարէբար։

Մենք բարէբար փայ անենք
Մեր սև օրուայ դարդերը,
Ու բարէբար մենք քաղենք
Ուրախութեան վարդերը։

Թո՛ղ նա նաւի իր տանը,
Երեխերքին շոր կարէ,
Նրանց լուացքը լուանայ,
Բանելու միշտ գործ ճարէ։

Կուխնից ըլի մուղայէթ,
Բան չը գողնան բըջերքը,
Ճաքրի ղութին փակ պահէ,
Վուր չուտին երեխերքը։

Իմ գուլբէքը կարկտնէ,
Շուտ շուտ նրանց չը փոխեմ,
Մի քանիսն էլ թո՛ղ գործի,
Իրա համա ես ծախեմ։

Առաւօտը զարթնելիս,
Երբ որ գնումիմ ես ժամ,
Ինձ միշտ տաք ջուր պատրաստէ,"
Վուր երեսս լուանամ։

Յետոյ զլթնէ, ինձի տայ
Սանդրն իմ մօրուքին,
Վուր չար կօշէն գողնալով՝
Ջգրեցնումէ իմ հոգին։

Երբ որ էշէնց կնիկը
կուլի ղօչաղ տանտիկին,
փուղի ղադրը կիմանայ,
Տունը կու պահէ կարգին,

Ի՞նչու պէտք է նրանից
Անենք ի զուր մենք գանգատ,
Էն վախտ մարդն էլ կուննենայ
Իր խէրն ու բարաքաթ:

Ե.

Պետերբուրգի փրանտը
Էլ չը տըվեց ժամանակ,
Նա կտրեց իմ խօսքը
Իր խաղերովն ռանակ`

„Фу! старичекъ какой!
Յետոյ կցեց`—Господа,
Вы отсталый ужъ народъ,
Ваша пѣсня спѣта . . .

„Տիկնայց զանգուր գլխաէներ,
Նոցա ժպիտն անուշիկ,
Այդ հրա՛շք է, Боже мой!
Նոցա հագուստը`—Просто шикъ!

Ես հեռացայ էն գըժէն,
Թող չը տալի վուր խօսէ,
Վախտումէլ, չը լի թէ
Տարի լալէն սկսէ . . .

1872—Թիֆլի.

ՊՕԵՏ

Թո՛ղ կոյր ամբոխը ծաղրէ քեզ, պօէտ,
Թէ երազամոլ քո հոգւոյ ցնորք՝
Դարուս իրական պահանջմանցը հետ՝
Էլ չէ համաձայն, զո՛ւր է քո շնորք:

Եւ խաժամուժի պէտք չէ քեզ գովեստ,
Թո՛ղ ամեն՝ մարդու կեանքը գործնական
Պահանջումէ հաց, ապրուստ և արհեստ,
Եւ ոչ սնոտիք բանաստեղծական:

Դու, մուզաների որդի սիրելի,
Անվեհեր սրտով հնչեցո՛ւր քնար,
Երգ քո ոգելից, վերին ազդմամբ լի
Մինչև յաւիտեան կը սիրէ աշխար:

Թո՛ղ արհեստասէր չոր փիլիսոփան
Քարոզէ կեանքի մարմնաւոր յօդուած,
Բայց դու, հոգեկան խորհրդոց թարգման,
Քո սուրբ շրթունքով խօսումէ Աստուած:

Երգէ՛ դու, պօէտ, երգէ՛ երգ անուշ,
Հնչեցո՛ւր քնարիդ լարերն ուժգին,
Եւ ոգևորուած քո տաղեր քնքուշ
Գուցէ զարթեցնեն հայի քնած հոգին...

1873—Թիֆլիս.

ՍԷՐ

Փափկիկ կուսին շիկահեր
Գունատուեցան վարդ թշեր,
Նա հալւում՛ էր, մաշւում՛ էր,
Նա քուն չունէր ողջ գիշեր:

Նորա դէմքը չէր ժպտում,
Նա տխուր էր և տրտում,
Կարծես, սիրոյ բոցերը
Բորբոքւում էին սրտում:

Դադարեցաւ այն անուշ
Երգի ձայնը միշտ քնքուշ,
Խաղն ու պարը թւում էր
Նորա աչքին ծակող փուշ:

Մի օր խիստ վաղ—առաւօտ
Մական եկաւ նորա մօտ,
Ընկերուհու տեսութեանը
Նա շատ օրով էր կարօտ:

Զարհուրելով այն աղջիկ
Տեսաւ ընկերը գեղեցիկ,
Բայց թառամած և տխուր
Էր նորա դէմք քնքշիկ:

„Ի՞նչու այդպէս, էլ ի՞նչ կայ,
Մաշւում ես դու, Անիչկայ,
Ի՞նչու այդպէս դու լուռ ես,
Քո երեսին գոյն չը կայ:

„Ասա՛, ի՞նչ է քո դարդը,
Չըլի՞ սիրոյ կախարդը՝
Տուեց քեզնի հոտ քաշել
Ձեռքի դիւթական վարդը . . .

„Ասա՛, ասա՛, սիրական,
Ի՞նչ է սրտիդ առարկան.“ —
Կարեկցաբար հարց արեց
Նորանից սիրուն Մական:

Քաղցր ժպտելով Անիչկայ՝
(Այնպէս քա՛ղցր էլ ի՞նչ կայ . . .)
Ասաց իւր ընկերուհուն՝
— „Սիրահարուած եմ, Մակայ . . .“

Ուրախացաւ օրիորդ,
Երբ գաղտնիքին եղաւ հաղորդ,
Եւ գրկելով նրան կոչեց՝
„Սիրահարուած ես, ղո՞րդ։“

— „Ուղիղ է, քո ասելը . . .“ —
„Այո՛, խնդրեմ, ո՞ւմ վերա,
Այո՛, քո հոգուն մատաղ,
Այո՛, այո՛, ո՞վ է նա։“ —

— „Չէ՛ կարելի, Մակայ ջան,
Բացուիլ մինչ այդ աստիճան,
Ես ինքս էլ չը գիտեմ
Սիրոյս սկիզբն ու վախճան . . .“

Չը կարացաւ խեղճ Մական
Համբերութիւնը սանձել,
Սկսեց նոր հարցերով
Ընկերուհուն թախանձել՝

„Դու բաց արա, իմ ջանիկ,
Փակած սրտիդ խորը կնիք.
Ի՞նչու ես քեզ համարձակ
Ասումեմ միշտ իմ գաղտնիք։

— „Ի՞նչպէս ասեմ, Մակա ջան,
Նա չէ սիրուն սիրեկան.
Կը ծիծաղես ինձ վերա.“
Պատասխանեց Անիչկան։

„Մի՛ ամաչի, պարզն ասա,
Թէ սիրել եմ մի փեսայ.
Մի՞թէ փեսայ ընտրելը
Աղջկայ համա միշտ պա՞ս ա։„ —

Անիչկան եղաւ խոստովան,
Մի ծերուկի էր հաւան,
Նա հարուստ էր, չին ունէր,
Ունէր գիւղեր և աւան։

Թուլացաւ ծիծաղելուց,
Երբ նա լսեց այդ զրոյց,
Երգիծական խօսքերով
Մական նորան դարձրուց՝

„Լա՛ւ է, լա՛ւ է, Անիչկայ,
Թո՛ղ լոյս լինի քո աչքը,
Ես նախանձվումեմ բախտիդ,
Դու սիրել ես . . . հնար չը կայ . . .“ —

Իսկ Անիչկան սառնութեամբ,
Այդ սուր կատակի փոխան,
Իւր անկեղծ ընկերուհուն՝
Այսպէս տուեց պատասխան՝

—„Մինը սիրում է մանիշակ,
Միւսը՝ վարդը անուշակ,
Բայց ես փուշն եմ սիրում,
Այսպէս է իմ կոշտ ճաշակ...“

Բայց Մաքան, ընդունելով
Աւելի ծանր կերպարան,
Ցաւակցական խօսքերով
Խրատում էր նա նորան՝

„Այդ ցնորք է, խե՛նդ աղջիկ,
Կը փոշմանես իմ ջանիկ,
Դու այն փթած ծերուկով
Չես լինի գոհ, երջանիկ։

„Այդ ի՞նչ խելք է, ի՞նչ ճաշակ,
Մեռլի հետ ի՞նչ ախորժակ
Կապել կեանքդ դեռահաս,
Քամել դարդի դառը բաժակ։

„Այդ պսակ չէ՛, այդ բանտ է,
Չէ՞ որ նա միշտ հիւանդ է,
Էսօր, էգուց՝ ո՞վ գիտէ,
Նա իւր հոգին կ՚աւանդէ։

„Բերանումը չունի ատամ,
Լուծուած են՝ ձեռք, ոտք անդամ...
Թէ որ նա շուտ կը մեռնի,
Բոլորն Աստծուն փառք կը տան։

„Ի՞նչ է քեզի հրապուրում,
Զոհուելու ես համբերում,
Չէ՞ այն հրէշ կմախքէն
Մահուան հոտ է միշտ բուրում։

„Ափսոս չէ՞ սիրուն մեխակ
Փնջել փուշի հետը խակ,
Ընտրէ՛ քեզ ջէհիլ ազապ,
Դու վարդ լինես, նա՝ — սոխակ։“ —

Ուշադրութեամբ լսում էր
Այդ խօսքերն Անիչկան,
Նա ժպտելով ընկերին
Ասաց՝ — „Մաքոյ, սիրական,

—„Ճշմարիտ է քո խրատ,
Այո՛, քոյրիկ հարազատ,
Լաւ է սիրել ջէհիլին,
Վարել կեանք՝ թարմ, ազատ։

„Բայց ես ունեմ նպատակ . . .
(Խոր գաղտնիք կայ նորա տակ)
Գիտեմ, խիստ դժուար բան է
Կեանքի հետ խաղալ կատակ։

„Պսակվումեմ ես նորա
Միայն փ ո ղ ե ր ո ւ վերա,
Գիտեմ, սիրել չեմ կարող
Այլանդակուած այն ծերը։

„Շա՛տ եմ սիրում ես, Մակայ,
Նորա ոսկու քսակը,
Այն ինձ համար բաց կանէ
Ամուսնական պսակը . . .

„Շա՛տ եմ սիրում, Մակայ ջան,„
Նորա օրդէն, աստիճան,
Իշխանուհի կոչուելուն՝
Զո՛հ լինելն է միշտ արժան։

„Նորա փողով, իմ քոյրիկ,
Կը լինեմ գո՛հ, երջանիկ,
Մի՛ նախատիր ինձ, Մակայ,
Արժէ՞ սիրել այդ ծերիկ . . .

„Արժէ՞ լինել սիրահար,
Կրել թաւիշ և գոհար,
Եւ ձեռքումը միշտ բռնել
Ճոխ, թանգագին հովահար։

„Այդ խորհրդից, Մակայ ջան,
Ես չեմ լինի փոշիման,
Ցանկալի՛ է բազմաթիւ
Աղախինի տալ հրաման։

„Ունենալ՝ տան կարգուսարք,
Սիրուն ծառայք, շքեղ կառք,
Եւ շռայլաբար վայելել՝
Քաղցրիկ կեանք և ճոխ փառք . . .

„Դիմել կրուժոկ, թատրոն,
Ուրախութեանց կենտրոն,
Ամեն կողմից քեզ նայեն
Սիրուն տղերք և պարոն . . .

Լինել Թագուհի Թիֆլիսին,
Դիմել մօդնի—մագազին,
Ամեն օր մի նոր շ ի կ տալ
Նոր մօդայով փարիզին . . .

„Դէ՛, ինձ ասա՛, ի՞նչն է վատ,
Բալ—մասկարադ, տանցօվատ,
Ով որ դրքա չէ՛ սիրում
Վայրենի է, անհաւատ:“

Նորա խօսքը կտրելով
Մական ասաց՝—„Անիչկայ,
Աշխարհումս առանց փող
Իրաւ, վայելչութիւն չը կայ։

„Բայց քեզ պէտք է ամուսին,
Լա՛ւ մտածիր այդ մասին,
Ջէհիլ, առողջ մի տղայ,
Սէր վայելէք միասին . . .“—

Պատասխանեց Անիչկան՝
—„Ազնիւ քոյր իմ սիրական,
Միթէ դու չե՞ս իմանում
Գաղտնիքն աղջկան . . .

„Միթէ դու չե՞ս իմանում
Աշխարհի չարն ու բարին,
Միթէ դու չե՞ս ճաշակել
Պտուղն արգելուած ծառին . . .

„Ես կունենամ, իմ հրեշտակ,
Իմ ժառանգն և զաւակ,
Որպէս անբախտ մի խեղճ մայր,
Չեմ մնայ ազգիս նշաւակ։

„Եւ իմ այրը ծերուկ
Կառնէ որդիս իւր գրկուկ,
Եւ աչքերն ճնշելով,
Կասէ՝ „Սիրելիդ իմ ձագուկ . . .“

„Կը գայ մի օր բարի հիւր՝ —
Մա՛հ . . . ։ կը պահանջէ աւանդ իւր,
Եւ իմ այրիկն անզուման
Շնորհ կը տանէ խոր գերեզման։

„Անթուելի հարստութիւն,
Կահ—կարասիք և մեծ տուն,
Ինձ և իմ զաւակներին՝
Կը մնան ժառանգութիւն։

„Հասկացա՞ր դու, իմ հրեշտակ,
Սրտիս խորին նպատակ.
Քանի՛ մեծ արտօնութիւն
Տալիս է ինձ այդ պսակ...“

—„Հասկացայ... ասաց Մական,
Յիմար սիրոյդ առարկան,
Որին, անխիղճ, զոհումես
Մի այդպիսի զոհ պատուական...“

1873—Թիֆլիս.

ՀԱՅԻ
ԿԱՂԱՆԴԸ

Համաշխարհական ժամացոյց
Զարկեց վայրկեան իւր վերջին,
Հին տարին տեղի տուեց
Կաղանդին օր առաջին:

Դղեակների գագաթէն
Գոռացին թնդանօթներ,
Եւ բիւրաւոր հրացայտ
Որոտացին անօթներ:

Հարա՛յ—հրո՛ց, աղաղակ,
Երգ և աղօթք խառնաձայն,
Խառնիճաղանճ ամբոխից
Դէպի երկինք բարձրացան:

Շուկայ, փողոց, հրապարակ,
Լի են մարդկանց բազմութիւն.
Նոքա ուրախ, խնդամիտ,
Խումբ—խումբ շրջեն տընից տուն:

„Շնորհաւոր նոր կաղանդ
„Շնորհաւոր նոր տարի.“
Բարեմաղթումեն շատ բախտ,
Եւ ապագայ կեանք բարի։

Դու մի՛ ժպտա, դժբախտ հայ,
Մի՛ նախանձիր օտարին,
Քեզ համար չէ՛ բերկրութիւն,
Քեզ համար չէ՛ նոր տարին։

Նա քեզ համար չէ՛ բերել
Ո՛չ նոր կեանք, ո՛չ նոր օր,
Քեզ երեկն և այսօր՝—
Նոյն վիճակ է դարևոր . . .

Ի՞նչ գործեցիր դու հերուան
Իզուր վատնած քո տարում,
Ո՞ր թերութեանց, ո՞ր կարեաց
Տուեցիր դու կատարում։

Պանդխտութեան փարանքից՝
Քո որդիքը ցիրուցան՝
Դէպ՝ բնիկ իւրեանց երկիր՝—
Դարձա՞ն դէպի Հայաստան։

Թէ նոքա դեռ թափառեն
Ամէն գոտի աշխարհաց,
Բոբիկ սովով, կիսամերկ,
Մուրանալու պատառ հաց։

Հայրենական իւր երկրում
Վաստակաւոր մշակը
Բանեցնումէ՞ արօրը,
Բարւո՞ք է իւր վիճակը։

Թէ նորա հողն աղայի
Ժառանգական է կալուածք,
Իւր որդիքը սովատանջ
Ջունեն տանում պատառ հաց։

Վտարեցա՞ն մեր միջէն
Վասակների սև ոհմակ,
Թէ դեռ տիրեն՝ Բրքլիշյ,
Գալ, Մերուժան և Սուրմակ

Երօնական մրրիկով
Եղբայրք զատուած մեզանից,
Ազգայնութեան սուրբ ուխտով՝
Մեզ հետ եղա՞ն կապակից։

Թէ դեռ ևս պրօտներ
Եւ եզուխտը տաժան՝
Մեր մէջ ձգեն հերձուած,
Ազգն առնեն բաժան բաժան։

Եւ ազա՞տ է մեր կրօնք
Մահմեդի հալածանքէն.
Թուրքն ու Պարսիկ չե՞ն զրկում
Հային իւր սուրբ բաղձանքէն:

Թէ մեր դստերք գեղեցիկ,
Նշնուած հայի տղային,
Քարշ են տալիս դէպ՝ հարեմ,
Տանեն Թուրքի աղային։

Հալածեցի՞նք մեր միջէն
Այն դարևոր սև խաւար,
Մտցրի՞նք՝ արհեստ, գիտութիւն
Եւ լուսաւոր գաղափար։

Եւ մեր մանուկ սերունդին
Տուի՞նք մտաւոր զարգացում,
Թէ դեռ սաղմոս, ժամագիրք
Տիրումեն մեր դպրոցում։

Ո՛չ. հային չէ՛ նոր տարի,
Դեռ դժբախտ է մեր վիճակ,
Հայը դեռ հին ախտերի
Վայելումէ դառն բաժակ . . .

Յայնժամ է մեր նոր տարի
Երբ կը նորոգվի մեր դրութիւն,
Մանկահասակ նոր կեանքով
Կստանանք նոր գոյութիւն։
1865.

ԳԵՐԵԶՄԱՆՔ

Անապատ դաշտում, խուլ, լայնատարած,
Սփռած են անթիւ յիշատակարանք,
Այստեղ մարդերի, հինաւուրց մեռած,
Պահվումեն խնամքով մարմնի փշրանք։

Ահա նոր աշխարհ, ուր որ տիրումէ
Աստուծոյ հանգիստ միաբանութիւն,
Այստեղ ճշտօրէն հանդիսանումէ՝
Սէր, եղբայրութիւն, հաւասարութիւն։

Արքայ և կայսր, — երկրի տիրապետ,
Բուսականացած քանի գազ հողով,
Իւրեանց ստրուկ հպատակաց հետ,
Են պառկած միասին՝ հաշտութեամբ, սիրով։

Եւ բռնակալն, — արեան ծարաւին,
Թափելով սրտէն թոյն և չար նախանձ,
Վրէժխնդիր սիրտն էլ չէ բնաւին
Խորհում իւր զոհերն առնել գիշախանձ։

Եւ հարստականն, — արծաթոյ մոլին,
(փողից կշտացած է սիրտն անյագ)
Էլ չէ աշխատում խաբել ընկերին,
Որսալ նորանից շահաւէտ վաստակ։

Եւ աւազակը՝ թողլով կողոպուտ,
Նա էլ աչք չունի հարստի կայքին,
Չէ յափշտակում նա այլոց օգուտ,
Կարծես, զղջացել է նորա հոգին։

Եւ մուրացկանը, — օտարի կարօտ,
Ձեռքը չէ ձգում խնդրելու դրամ,
Անգութ ագահի դէմքը կնճռոտ
Չէ՛ զարհուրեցնում խեղճին անխնամ։

Եւ ախտաբորբոք, մոլի տարփածուն,
Հուպ գեղագանգուր, մատղահաս կուսին,
Նորա սիրտն որսալ էլ չէ մտածում,
Հանգած է սէրը նոցա երկուսին։

Ահա մարգարէի (*) գուշակած աշխար,
Ուր բնակվումեն գայլն և գառնուկ,
Ուր են հաւասար, միմեանց եղբայր՝
Իշխան, թագաւոր, գերի և ստրուկ . . .

(*) Եսայի մարգարէի։

ԳԱՐՈՒՆ

(Հինգերրորդ դարու հայոց տիկինների երգը)

„Բազում ձմերոց հալեցան սառնամանիք,
„Եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունք,
„Տեսին և խնդացին կենցաղասէր մարդիք,
„Եւ նոքա ոչ երբէք կարացին տեսանել
զանձկալի խրախանս . . .“

Եղիշէ.

„Անցան, անցան տարիներ,
Եկան, գնացին շատ ձմեռ,
Նորեկ ծիծառը ճռվռուն
Աւետում է նոր գարուն:

„Լռէ, լռէ, ով ծիծառ,
Դու մեր սիրելեաց դարձէն
Չես բերած ոչ մի խաբար
Պարսից հեռու աշխարհէն:

„Ուր շղթայած բանտերում
Տանջվում են չարաչար,
Նոցա կարօտ աչերուն
Ոչ քուն կայ և ոչ դադար:

„Դու չես, դու չես նոր գարուն,
Գարունը Հայաստանի,
Դու հայոց տիկիններուն
Ողբը, լացը չես տանի . . .

„Չի քո փառաւոր դարձի
Այդ գեղեցիկ տեսարան
Յիշատակում է նոցա
կորած սէրն աննման:

„Ձիւնը հալուեց, դաշտերը
կանաչ խոտով ծածկուեցան,
Խնձորենին ու նշենին
Ծաղիկներով ծաղկեցան:

„Թռչունք, սարեակ և սոխակ՝
Տօնեն նոցա յիշատակ,
Վարդ ու շուշան և մեխակ
Խնկեն բուրումն անուշակ:

„Արարատայ դաշտերում՝
Ժիր նժուգի խրխինջը
Շփոթում է վաղորդեան՝
Օդի հանգիստ, խոր նինջը:

„Կարծես, նա էլ զգում է,
Որ էլ ինքը տէր չունի.
Սամիկոնեան քաջերը
Ընկա՛ն, ընկան վշտալի . . .

„Անտառներում եղջերուն
Թռչկոտում է համարձակ,
Լորն ու կաքաւ երգումեն,
Էլ վախ չունի նապաստակ:

„Կարծես, նորանք էլ գիտեն,
Որսորդներից ազատ են,
Իշխաններն էլ չը կան,
Որ նոցա սիրտը շփոթեն:

„Հայաստանի երկինքը
Թուխ ամպերով է պատած,
Սուգ է մտել Մասիսը
Տխրադէմ է Արագած:

„Ժողովուրդը տօնասէր
Չէ խմբում եկեղեցին,
Աղջիկները չեն պարում,
Թմբուկ, երգեր լռեցին . . .

„Դու չե՛ս, դու չե՛ս նոր գարուն,
Գարունը Հայոց տիկնայց,
Դու մեզի չե՛ս աւետում
Մեր քաջերի վերադարձ:

„Այն օրն է նոր գարուն
Երբ կը նորոգվի Հայաստան,
Եւ մենք ազատ կը շնչենք,
Ջգելով լուծը պարսկական:
1857—Մագու:

Ք Է Ֆ

Երկու արհեստաւոր մարդ,
Մէկը՝ կօշկակար, միւսը՝ դերձակ,
Ման էին գալիս տօն օրում
Ուրախ սրտով, համարձակ:

„Գնանք, եղբայր, գինետուն,
Լաւ քէֆ անենք միասին,
Ի՞նչ կայ, թէ որ մսխուի
Մեր քանի մի աբասին:“

—„Գնանք, ասաց դերձակը,
Էլ չենք տեսնի էգպէս տօն,
Կը դուրս բերէ իմ ծախսը
Երեկ կարած մէկ պալտօն:“

„Գնանք, կրկնեց կօշկակար,
Ես ծախել եմ մի կօշիկ,
Նորա շնորհիւ կը խմեմ
Այսօր գինի անուշիկ:“

„—Ես էլ ընկեր ձեզի հետ,
Ասաց տէրտէրը բազմագէտ,
Ես թաղեցի մի մեռել,
Տասը մանէթ եմ առել:

1867.

ՈՍԿՈՒ ՄԱԴԱՆ

Աղքատութիւնից յանկարծ մի պարոն
Եղաւ բախտաւոր, արծաթով հարուստ,
Տալիս էր խնձոյք, գնումէր թատրոն,
Ունէր ձոխ սեղան և հանգիստ ապրուստ։

Նա շինեց մի տուն՝ — մեծ և փառաւոր,
Մուտքն էր պատած պարտէզ, բուրաստան.
Եւ մարդիք ամեն՝ աղքատ, մեծաւոր՝
Նորան յարգութեամբ միշտ գլուխ կը տան։

Եւ զարմանալու չը կայ մի առիթ,
Միշտ յեղաշրջիկ անիւը կոյր բախտին,
Յանկարծ բարձրացնէ մէկին մինչ զենիթ,
Միւսին գլորէ դէպ՝ խորն անդնդին։

Բայց մարդկանց զարմացքը չափից անցաւ,
Որտեղից արդեօք այդ նոր Կրեսոս
Առանց քրտինքի ոսկու տէր դարձաւ,
Այդ հարցի լուծումն՝ էր դժուար, ափսոս։

Թէ ինձնից հարցնեն, այս է պատասխան՝ —
Գանձարանումը նա մի ժամատան
Ամբողջ տաս տարի էր երեսփոխան,
Ուր գտաւ առատ նա ոսկու մադան . . .

Թիֆլիս — 1870.

ԽՐԱՏ

Մեռանումե՛մ ես, սիրելի որդեակ,
Ա՛խ, շատ օրերի եմ արդէն հիւանդ,
Եւ քեզ, աչքի լոյս, իմ վերջին կտակ՝—
Հայրական խրատը թողնումեմ աւանդ:

Թէ կամենումես լինել բախտաւոր,
Հետեւի՛ր ծեր հօրդ դու օրինակին,
Եւ այս րոպէից եղի՛ր ուխտաւոր,
Կատարել իմ խրատ իւր ժամանակին:

Ուղիղ, անմոլոր քո հայրենական՝
Ընտրէ՛ քեզ համար՝ կեանքի ճանապար,
Չը լինես հպարտ, երբէք, սիրական,
Ծռէ՛ գլուխդ, եղի՛ր միշտ խոնար:

Հեռու պահի՛ր քեզ աղքատ մարդերից,
Քսուի՛ր բոլորտիքը դու միշտ հարստին,
Եւ միշտ խնայէ քո բարեկամներից
Դու մէկ սեւ փողըդ իզուր կորստին:

Խելացի մեղուէն առ դու օրինակ,
Դիմել դէպ՝ ծաղկունք եւ կազմել խորիսխ,
Այդ մեղրն է ա ր ծ ա թ, լսի՛ր, իմ որդեակ,
Մարդկային կեանքի հաստատուն խարիսխ:

Թէ որ շահերիդ կը բերէ օգուտ,
Ներելի է միշտ ասել թեթեւ սուտ,
Կեղծել փոքր ինչ, մրոտել պատիւ,
Դոցանով երբէք չես վնասի հոգուդ:

Թէ լինես ներքոյ դու ծառայութեան
Խոնարհի՛ր սրտով քո մեծաւորին,
(Բայց զանց մի՛ արա իւղալի ընծան...
Մի՛ խնայէ եղբօր, քո մերձաւորին:)

Թէ որ դու լինես մի օր սովդաքար,
Թո՛ղ կարճ լինի քո արշին եւ կանգուն,
Թո՛ղ թեթեւ լինի քո կշիռքի քար,
Թող փոքր լինի սոմարիդ մեծութիւն:

Իսկ երբ պարապուիլ պէտք էր կապալով,
Օրինակ, զօրքի տալ գինի, արաղ,
Երբեմն լաւ է խառնելը ջրով...
Ի՜նչ կը հասկանայ սալդաթը սարսաղ:

Թէ վնասուեցար դու առեւտուրում
Էլ մի՛ վճարէ քո պարտատէրին,
(Այդպիսի դէպքում չեն մեղադրում...)
Պահի՛ր ունեցածդ ապրուստ սեւ օրին։

Ուսման, կրթութեան, այդպիսի դատարկ
Բաներին չը տաս քո սիրտը, որդեակ,
Հեռու պահի՛ր քեզ ազգասէրներից,
Չը բացես նոցա առջեւ քո քսակ։

Հարուստ աղջկայ հետ դու կապէ պսակ,
Փոյթ չէ, թէ լինէր տգեղ, կամ ախտաւոր,
Կը լցնի ոսկով քո դատարկ քսակ,
Կը լինես երջանիկ, գոհ եւ բախտաւոր։

Դու կատարէ այդ խրատները անգին,
Դոցանով շատերն երջանիկ եղան.
Հետեւի՛ր ծեր հօրդ դու օրինակին,
Կունենաս առատ, լի հացով սեղան։
1872—Թիֆլիս.

Ա Զ Գ Ո Ւ Ր Ա Ց

Դառն մահուան օրհասով
Մի մարդ թողեց լոյս աշխարհ,
Դէպ Պլուտոնի պետութիւնն
Ուղեւորեց ճանապարհ։

Նա, անցնելով Ստիքսէն,
Դիմեց դէպի տարտարոս,
Առաջը կտրեց դռնապան—
Հրէշաւորն Կերբերոս։

„Ի՞նչ ազգից ես, „հարցրուց
Երեքգլխեան ամեհին։
(Իսկ խղճալի այն ոգուն
Սահման չը կար մեծ ահին։)

—„Ես հռովմի սուրբ պապի
Եմ ուղղափառ կաթօլիկ."
Ասաց ոգին, սարսափէն
Հատաւ ձայնն իւր վախլէկ։

„Ես ազգդ եմ հարցնում,
Ցո՞ւն ես, թո՞ւրք ես, թէ պարսի՞կ:“
Դողդողալով ուրուականն՝
Դալւձեալ կրկնեց՝ — „կաթօլիկ“

„Կաթօլիկն է կրօնքի
Եւ ոչ ազգի մի անուն,
Դու պատասխանէ ինձ այն՝
Ինչ քեզնից են հարցնում:“

— „Ես չը գիտեմ ի՛նչ է ազգ,
Նոր եմ լսում ես այդ բառ,
Մեր հայրերի ուսմունքով՝
Կաթօլիկ եմ ուղղափառ:“

Սարսափելի մի ծիծաղ
Ցընցեց շրթունք կերբերին,
Տժգոհ սրտի իւր թունդը
Բերնից լորձունք վէր բերին:

„Ով չը գիտէ ինչ ազգի
Է հարազատ նա ծնունդ,
Նա անօրէն, անկանոն
Ամուսնութեան է սերունդ:

„Տարտարոսից հեռու,
Այդ խուժանն աննշան,
Առանձին կայարանում՝
Բնակվումեն անդ բաժան:

Ուր թունդ է հուրը բորբոքվում,
Եւ դժնի են կատաղիք,
Ուր օձ, կարիճ դըհերի
Քըքրումեն լերդ, աղիք:

„Ահա՛ դուռը,“ ցոյց տուեց
Կերբերոսը վիթխարի:
Ոգին դիմեց դէպ՝ այն կողմ
Թոյլ ոտքերով, անարի:

Դրան գլխին նկարած էր
Լօոլայի կերպարան,
Եւ վերնագիր այդպիսի՝—
Ազգուրացների կացարան:

Զարհուրելով ներս մտաւ,
Եռանդամոլ մեր ոգին,
Տեսաւ ազգուրացների
Նա բազմութիւն ահագին:

„Հասօ, ախպար, քե՞զ էլ հոս
Չարքերը վռնդեցին․․․։“
Կրակի միջից հարցրուց
Ծերունի Սեբաստացին։

„Էկո՛ր, էկո՛ր, քեզ պագնեմ,
Մեր աշխըքէն ի՞նչ խաբրիկ,
Ո՞ղջ, առո՞ղջ է մեր պապը
Մեր սրբազան ծեր հայրիկ։

„Մեր վենետիկու, վեննայի
Ընդո՞ր են մեր փարախներ,
Հայի ճրժեր որսալու
Կը բանի՞ն անոնց եղախներ։“

Չը կարաց պատասխանել
Դեռ ազդուրաց այն ոգին,
Զգեց վզեն հաստ շղթան
Սոսկալի դև մի ահագին։

Եւ քարշ տուեց դէպ՝ ներսը
Ծծումբի վառ բոցերին,
Զարհուրելի դառնութեամբ
Սկսեց տանջել իւր գերին։

Հուրը բորբոքեց, նա կոչեց՝—
„Ի՞նչու չլսիմ, թէ եմ հայ․․․
Ի՞նչու ուրացամ ազգս․․․
Վա՜յ իմ գլխուս․․վա՜յ․․վա՜յ․․վա՜յ…“
1870.

Դ Ժ Ո Խ Ք Ի

ԿԱՊԱԼԱՌՈՒՔ

(Դիցաբանական առասպել)

„Վայ ձեզ՝ օրինականացդ, զի թագուցանէք
„զփականս գիտութեան, դուք ոչ մտանէք,
„և որ մտանենն՝ արգելուք:“
Ղուկաս.

Ա.

Գեղեցկատեսիլ մեծ դաշտ էր սիրուն,
Կանաչ, ծաղկազարդ փառփռումէր հեռուն,
Հովիտի միջով՝ լայն և անսահման,
Մի արծաթափայլ վիշապի նման,
Ոլոր ու մոլոր սողար Արաքսին.
Ալևոր գագաթ ծերուկ Մասիսին
Նայումէր բարձր, բարձր ամպերէն,
Ցայտումէր կրակ հպարտ աչերէն:
Այնտեղ վաղեմի կանգնած էր մեհեան,
Ուր Արամազդայ դրած էր արձան.
Դարերի հոսանքն և թշնամին չար

Զըլ կործանեցին այդ սիրուն տաճար,
Դեռ ողջակէզը ծխար անդադար,
Սևուկ քուրմերի բազմաթիւ դասը.
Վարեն կուռքերի պաշտօնն, սպասը:
Այնտեղ դրած էր աթոռ սրբազան,
(Մեծ քրմապետի իշխէր դաւազան.)
Ուր կրօնասէր Հայկայ որդիքը
Թափումեն իւրեանց արծաթն, արդիւնքը:
Այնտեղ Արարատայ փշրուած դահին
Մնումեն բեկորք, յիշատակներ հին . . .

Բ.

Փոքրիկ խուցի մէջ կային երկու մարդ.
Աղքատ էր խուցը՝ նեղ, խոնաւ, անզարդ,
Կարծես թէ, վաղուց տխրութեան ոգին
Թափել էր այնտեղ մաղձը դառնագին:
Որպէս հարազատ մի զոյգ սատանայ,
Օթոցի վերա, նստած են նոքա,
Սև սև հագուստով, սև բաշլիկ գլխին,
Եւ „տէրողորմեան“ ձգումեն ձեռին:
Նոցանից մինն՝ — էր մաշուած ծերուկ,
Ալևոր գլխով, սպիտակ մօրուք,
Գունատուած դէմքը՝ խոժոռ էր, տխուր,
Նեղ աչքերումը փառփռումէր չար հուր,
Նորա խորշոմած, ճաղատ ճակատին

Դրած էր կնիքը խորամանգ Նեռին:
Իսկ այն միւսը՝ — միջակ տարիքով,
Թխագոյն երես, սև էր մօրուքով,
Սարսափելի էր դէմքը նենգաւոր,
Փայլուն աչերը՝ կրակոտ, անսովոր,
Եւ դժոխային բոլոր կերպարանք
Բացատրում էր մահ և զարհուրանք:

Գ.

„Ուրեմն այդպէս . . . Հայրիկ սրբազան,
Անցաւ մեր դարը . . . փշրուեց գաւազան . . .“
Ասաց, որ ունէր խճըճուած սև մօրուք
Թուխ աչքերից գլորեց արտասուք:
— „Անցաւ . . . կրկնեց մաշուած ծերունին,
Բայց յուսահատուիլ պէտք չէ բնաւին:
Գիտե՞ս, թէ ի՞նչ է գլխաւոր պատճառ
Մեր դժբախտութեան, դէպքերին այդ չար. —
Երբ որ վարժատուն՝ — այդ պիղծ, անպիտան
Շինուածքը՝ — մտաւ մեր սուրբ Հայաստան,
Մեհեանը կորցրուց իւր յարգ սրբազան:
Ընկաւ կրօնքը: Իսկ աշխարհական
Ուսում, գիտութիւն, լուսաւորութիւն՝
Քանդեցին մեր տուն, բոլոր զօրութիւն:
Ամբոխի աչքերն երբ որ բացուեցան,
Հոգևոր հայրերն ատուիլ սկսան:

Հայր գերուած էր մեզ, որպէս ստրուկ,
Երբ յիմար էր նա, ինչպէս մի մանուկ,
Մեր կանոններին էր միշտ հնազանդ,
Մեզ որպէս դիւցազն պաշտէր ջերմեռանդ:
Իսկ երբ ուսման հետ նա եղաւ ծանօթ,
Մեզի համարեց անպիտան անօթ,
Եւ մեր ծէսերին տուեց նա անուն՝
Չեթանոսական կռապաշտութիւն:“ —

Դ.

„Մի՞թէ սառնասիրտ նախատինք այդքան
Մենք պէտք է տանենք մինչև գերեզման.“
Կոչեց միւսն, աչքերը վառուեց
Եւ սրտի թունդէն դէմքը փոփոխուեց:
„Ամեն հնարներ պէտք է դնել գործ,
Խ ա ւ ա ր ի տիրելուն անել կրկին փորձ,
Կրկին վերածել կոյր յիմարութիւն,
Ջնջել ուսումն և լուսաւորութիւն:
Եւ կրօնական ուռկանով նախկին
Որսալ Հայերի խելքն ու հոգին,
Մինչ մեհենական խորհրդոց վաճառ
Կրկին սկսէ իւր հին տուրևառ:
Եւ Հայը յօժար իւր լօման վերջին
Կը քըցէ յայնժամ մեր թասի միջին,
Երբ նա աչքի դէմ կառնէ հաստատուն,

Թէ առանց մեզի չունի փրկութիւն . . . ։
Մեհեանիցը դուրս՝—չը կայ մեզ ապրուստ,
Մենք այլ գործերով չենք լինի հարուստ։
Եթէ հեռանանք մենք այդ կեանքէն,
Նոյն է, որպէս ձուկն զրկվումէ ջրէն։
Աշխարհի գործերն են մեզ անծանօթ,
Պարապմունքն անգամ՝—ստո՛ր է, ամօ՛թ,
Թէ և արհեստներ շատ կան օգտաւէտ,
Մենք բոլորիցն էլ զրկուած ենք յաւէտ,
Զի այդ անիծուած խուցերի խորշում,
Տօնացոյց, ախտարք եղան մեր ուսում։»

Ե.

Այդպէս նա խօսեց, իսկ այն ժամանակ
Նորա աչքերում վառվումէր կրակ.
Բայց ալևորը հանգիստ, անվրդով,
Լսումէր նորան խիստ սառն սրտով.
Հինաւուրց հաստ խորամանգ ծերին
Ծանօթ էր կեանքի բոլոր փորձերին։
—„Քեզ հետ համաձայն եմ, ազնիւ եղբայր,
Պատասխանեց նա քաղցր, մեղմաբար.
Լսի՛ր, այժմ քեզ կը լինեմ խոստովան
Սրտիս գաղտնիքն, եթէ դու հաւան
Լինես խորհրդիս և հաշտուես ինձ հետ,
Կը յայտնեմ ես քեզ գործ մի օգտաւէտ։“—

„Ասա՛, ինձ հայրի՛կ։
—„Լսի՛ր, իմ ջանի՛կ։
Խոր տարտարոսի արքայն Պլուտօն
Ինձ Աքերոնի յանձնեց պաշտօն.
Եւ ես Ստիքսի նաւակը կապալաւ
Արդէն վարձեցի. դորանից էլ լաւ
Գործ մի փառաւոր, բարձր, անսահման՝
Մահկանացու մի չունի ինձ նման . . .
„Եւ ի՞նչ օգուտ կայ այդ գործի միջէն.“
—„Լսի՛ր, քեզ պատմեմ մի ըստ միօջէն.—
Քեզ շատ ծանօթ է գիրք Տարտարոսին
Եօթն անգամ պատած գետովն Ստիքսին,
Ուր իւր նաւակով անխոնջ Աքերօն
Կրումէ հոգիքը դէպի Պլուտօն։
Մի մի հատ լումայ ամէն մի հոգին
Տալիս է նաւորդին իւր անցնելու գին (*)։
Եթէ պէտք լինէր հաշուել ողջ օգուտ,

(*) Հին հեթանոսները սովորութիւն ունէին իւրեանց մեռելների բերնումը դնել փող Աքերոնին վճարելու համար. երևի այդ սովորութիւնն եղել է և հայերի մէջ, որ մինչև այսօր կռապաշտական ժամանակներից մնացած գերեզմաններում գտնվումեն հին դրամներ։

Ծան. հեղ.

Թէ ամբողջ տարին ի՞նչ է եկամուտ,
Մենք չունենք մի թիւ պարզելու համար
Այդ մեծաքանակ ահագին գումար.
Բաւական է միայն հասկանալ այսքան
Որքա՛ն հոգիներ դժոխքը կ'երթան . . .
Բայց այստեղում կայ մի հարց գլխաւոր,
Որ քեզ պարզելու է շատ հարկաւոր՝—
Աքիրեան նաւի մուտքը տարեկան
Կը բազմապատկուի չորիցս անգամ,
Միայն պիտոյ էր գործ դնել հնար
Մեղաւորների թիւն աւելնար.
Յայնժամ մի նաւակ էլ չէ բաւական
Կրել հոգիների ամբոխ կարաւան:
Զի որքան աւելի լինեն մեղաւորք,
Այնքան աւելի դժոխքը կ'երթան,
Այնքան աւելի մեզ օգուտ կը տան . . .
„Ի՞նչ հնարներով մեղքը տարածել,
„Մեղաւորների թիւը բազմացնել:
—„Տարածել մեղքն է խիստ դիւրին,
Զի մենք կունենանք խումբը դևերին,
Սատանաների անհամար դասը
Մեր հրամանին կ'առնէ սպասը:
Չարութեան սերմեր կը ցանենք աշխար,
Սէր, եղբայրութիւն կը ջնջենք իսպառ,

Կը խափանենք բոլոր՝ դպրոց, վարժատուն,
Կ'արգելենք ուսում, լուսաւորութիւն:
Եւ դու կը տեսնես բիւր բիւրուք
Յայնժամ գեհենի կը գան այցելուք:“—
Աւարտեց խօսքը դժոխքի ոգին,
Նա հրճուանք ազդեց ընկերի սրտին,
Որ գրկեց նորան, ձեռքը համբուրեց,
„Գեղեցի՛կ խորհուրդ . . .“ մեկէն նա կոչեց,
„Ես քեզ օգնելու եմ միշտ պատրաստ,
Ոչ իբրև ընկեր, այլ ծառայ նուաստ,
Տարածենք խաւար . . . կեցցէ՛ Պլուտոն,
Սիրով յանձն կ'առնեմ ես նորա պաշտօն . . .“
Մի քանի րոպէ հազիւ էր անցել,
Յանկարծ ներս մտաւ սևուկ Սադայէլ,
Բերեց երկու թուղթ, մէկը՝ վարձու պայման,
Միւսն էր դժոխքի արքայի հրաման:
Եւ երկու պսակ այն ծառի ոստէն,
Որ խեղճ Ադամին քշեց դրախտէն,
Որոյ պատճառաւ մեղքն ու մահը
Տիրեցին թշուառ մեր այդ աշխարհը . . .
Նա պսակները կապեց իւր ձեռքով
Նոցա դաւաճան, խաւար ճակատին,
Երկուքն էլ իսկոյն փառաւոր կառքով՝
Նստան՝ սլացան խորքն անդնդին . . .

1856. Խոր-Վիրապ.

Րաֆֆիի ֆոնդ

ԿՈՅՐ ՀՈՎԻՒՆԵՐ

(Եսայի մարգարէութիւններից)

„Ուտելու եկէ՛ք, դաշտի գազաններ,
„Գիշատէ՛ք հօտը, անտառի գայլեր,
„Զի հովիւները՝ — յիմար են և կոյր,
„Նոցա շները՝ — համր են և լուռ:

„Նոքա թմրութեան քնումն են քնած,
„Անհոգ շներուն հօտերը յանձնած,
„Ա՛խ, կոյր հովիւներ, տխմար հովիւներ,
„Անիրաւ վարձուց՝ — մոլի ծառաներ:
„Նոքա երգումեն
„Այդ միակ երգը՝ —
„Եկէ՛ք, բերենք մենք գինի
„Եւ ցքիով արբենանք,
„Վաղն էլ այդպէս կը լինի,
„Ամենն առատ կունենանք:«

ՆՈՒԷՐ

N...ի ՅԻՇԱՏԱԿԻՆ

Միթէ արիւնո՞վ երկնային դպիր
Գրեց դժնդակ քո ճակատագիր, —
Երկաթի կապանք, բանտ և աքսորանք,
Եւ հայրենիքից լինել տարագիր:

Այո՛, երբ կոյր բախտ բաժանէր վիճակ,
Ընտրեցիր բաժին քեզ փշեայ պսակ,
Անվեհեր սրտով, յօժար, համարձակ
Խմեցիր կեանքի դառնութեան բաժակ:

Այդ քո սրբազան զոհաբերութիւն
Բաշխեց դիցական քեզ անմահութիւն,
Եւ քո անմոռաց վսեմ յիշատակը
կաւանդէ հայը ապագայ որդուն:

Դեռ մանկութիւնից այդ անգութ աշխար
Ուղղեց քո առջև փշոտ ճանապար,
Երբ դու չքաւոր, անտէր, անխնամ,
Քո ծնողքներից որբացար իսպառ:

Ցաւալի հոգսը դառն աղքատութեան
Չը թուլացրուց թափը քո բնութեան,
Ուսում, գիտութիւն էր քո խնդրածը,
Քո սիրտը չը կապեց արծաթի շղթան։

Ն... քաղաքի կեղտոտ փողոցում
Փակուած էիր դու խոնաւ մի խցում,
Ուր թոքախտական բարակացաւը
Բօթաբեր հազը դրեց քո ծոցում։

Բայց չէր քեզնի փոյթ ցաւը մարմնաւոր,
Կամ աշխարհային վշտերն անսովոր,
Քո հոգին լի էր առողջ կեանքով,
Սիրով՝—ուժերի նոր, թարմ հոսանքով։

Եւ մոլորողի հրապոյրը փառքի
Չը գերեցին քո՝ ոչ սիրտը, ոչ հոգի,
Դու նուիրեցիր բոլոր քո ջանքը
Յօգուտ հայրենեաց, յօգուտ քո ազգի։

Ազգն ի՞նչ փոխարէն շնորհեց քեզ, անբախտ,
Եւ եկան կրքեր, բորբոքվեց չար ախտ,
Եւ մոլեռնախանձ կղերի խրատով,
Հայհոյեց քո գործը խուժանն ապերախտ...
1870—

ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻ

ՊԵՏՕՆ

Տե՛ս, տե՛ս, եղբայր, ահա հեռուից
Սեւին տուեց մի հրէշ,
Որ ծանրաքայլ, դանդաղ կերպով
Շարժվումէ որպէս գոմէշ։

Նա մօտ եկաւ։ Նշմարումեմ
Մարդու ձեւ և կերպարանք։
Բայց ի՞նչու է սիրտս զգում
Այսքան զզուանք, զարհուրանք։

Հա՛, տեսնումեմ՝ կարճլիկ շլինք,
Նա հաստ է որպէս գերան,
Նորա վերա կայ մեծ գլուխ,
Ուռած թշեր, լայն բերան։

Եւ երեսի խորշոմներից
Պլպլումեն նեղ ծակեր,
Դոքա անշուշտ պէտք է լինեն
Կարճատես նորա աչքեր։

Հնդկահաւի գլխի նման
Դէմքի գոյնն է լըջացած,
Իսկ արծըւի իւր մեծ քիթը
Կեռ կտուցով կը նայի ցած:

Ժպիտ և կեանք դէմքի վրա
Միշտ չեն եղել . . . չը կային . . .
Իսկ վայրենի բացատրութիւնքն
Չունեն ոչինչ մարդկային:

Բայց ի՞նչու է նորա փորը
Այնքան լայնացել սաստիկ,
Կարծես, է նա փուքսով փչած
Մի ահագին գոմշի տիկ·

Մի՛ զարմացիր, ազնիւ եղբայր,
Ի՛նչ բան չ՚արեց նախանձը,
Երբեմն վատնեց, երբեմն դիզեց
Աշխարհի կայքն ու գանձը:

Երբեմն արնով նա ողողեց
Պատերազմի դաշտերը,
Երբեմն սիրոյ, խաղաղութեան
Ցանեց անուշ վարդերը:

Իսկ նախանձը նորա փորի
Չունէր չար ինչ նպատակ,
Ընդհակառակն, նա բարի էր,
Իրաւացի և շիտակ:

Երբ նա տեսաւ Շ ի ր ա խ ա ն ո ւ մ ը
Թիֆլիսու մեծ բ ա ո ւ մ բ ի ն,
Հարիւրներով իւր մէջ կ՚առնէր
Կախեթու գինու թունգին,

Շարժուեցաւ իւր ցանկութիւնն,
(Այդ ձգտումն էր բնական)
Մի՞թէ տանել փորն չէր կարող
Այնքան գինի պատուական:

Այնուհետև այդ բարեբախտ
Գոմշի տիկն ահագին
Լիակատար տանէր պաշտօն
Հայր Բաքոսի հեղուկին:

Բայց ի՞նչու է գիրցած այնքան,
Հաստացրել է իւր անձը,
Չիցէ լողի՞ օրինակը
Շարժեց նորա նախանձը:

Այդ չէ պատճառ նորա այդքան
Գիրնալուն, իմ բարեկամ,
Այստեղ արդէն մի գաղտնիք կայ,
Ունի խորհուրդ բնական.--

Գիտե՞ս ինչն է մեռցնում մարդի
Մարմինն, ոսկրն ու հոգին,
Չէ՞ արդեօք նա մեր սրտամաշ
Ցաւն ու վիշտը դառնագին:

Բայց մեր պարոն քաղաքացին
Զերծ է կեանքի վշտերէն,
Կարծես, մեռած անզգայ սիրտ
Ժառանգեց նա իւր Տէրէն:

Որտեղ պէտք էր լինել խոնարհ,
Նա թեքվումէ, սողումէ,
Եւ գետնաքարշ որդնի նման
Ցեխի միջով լողումէ:

Իւր ցածութեան և կեղտերի
Ծանրութիւնը չէ զգում,
Ազնուութեան, ազատ կեանքի
Բաղձանք չունի իւր հոգում:

Որտեղ պէտք էր լինել հպարտ —
Բռնակալ է և դաժան,
Մանաւանդ, երբ ակար լինէր
Անզգութեան առարկան:

Անմեղ զոհի լացն ու սուգը,
Նորա հառաչանք տրտում —
Մեռած խղճին, խաւար հոգուն,
Սառած սրտին՝ — չեն ազդում:

Նա գիտութեան և արհեստի
Թշնամի է դժնդակ,
Զի ուսման լոյսը մերկացրուց
Նորա պատկերն այլանդակ:

Բայց իւր քէֆին և իւր փողին
Նա երբէք չէ խնայում,
Նորա աչքն այդոց վերա
Միայն կոյր է միշտ նայում:

Ապա ի՞նչը նրան կը մաշէ,
Որ չը գիրնայ խոզի նման,
Երբ նորա սիրտ, հոգին և միտք՝
Է սառն, մթին գերեզման:

Երբ մարդկային ո՛չ մի զգացմունք
Չը կայ բնաւ իւր միջին,
Ազգ, հայրենիք, սէր և նախանձ՝—
Նորա աչքումը՝—զրօ չնչին:

Դէ՛ հաստացի՛ր, քաղաքացի՛,
Թող քո կաշին լայնանայ,
Մարմնիդ միջումն անպէտք մթերք
Օր ըստ օրէ աւելնայ:

Քո հաստ լէշը, դատարկ գլուխդ
Թէ և ազգիդ պէտք չ'եղան,
Գոնեա՛, ճըճիքը գերեզմանումդ
Կունենան միշտ ճոխ սեղան:

1872—Թիֆլիս.

ՄԵՐ ՀԵՐՈՍԸ

Ցնծա՛, ցնծա՛, Հայաստան,
Ահա՛ դարձաւ քո որդին,
Քո մեծ յուսոյ առարկան,
Եւ անձկալին քո սրտին:

Մայրաքաղաքից իւր հետ
Բերել է մեր պատանին,
Նոր սիրտ, նոր միտք, գիտութիւն,
Լուսաւորել հայրենին:

Մայրաքաղաքից, գիտե՞ս,
Այդ չէ՛ թեթև ինչ կատակ,
Ուր իւր փառքին գերագոյն
Թողեց անմահ յիշատակ:

„Որբիկներու տանումը“
(Մեր մէջ մնայ այդ զրոյց)
Բարոյական իւր կեանքին՝
Ունի մի ճիշտ ապացոյց...

Գուցէ կ՚անցնին շատ տարիք,
Դառնրք Նեվեան պրօսպեկտի,
Թատրօնական դերուհիք,
Բաքսուհիք՝ Թոյլ—լիտի,

Պանդոկապետ, վարսավէր,
Հարճ—աղախնեայք, սիրուհի՝
Կը յիշեն առատաձեռն
Որդին հայոց աշխարհի . . .

Իսկ ճշմարիտն եթէ
Պէտք էր լինել խոստովան,
Թէև վատնեց նա իւր հօր
Մինչ հազար կարմիր թուման.

Բայց չէր իզուր այդ կորուստ,
Շահեց նա մեծ հատուցում՝—
Ս տ ո ւ դ ե ն տ ի դ ի պ լ օ մ ը
Ունէ արդէն իւր ծոցում:

Թողեալ այդ, և ձև արտաքին
Ապացոյց է բաւական,
Թէ չէ նա հասարակ մարդ,
Այլ խելացի գիտնական:

Տեսէ՛ք, արդեօք ո՞վ ունի
Մեր քաղաքում այդպէս բան՝—
Այնպէս փրակ և բրիւկ,
Բայց հրաշք է շլեապան:

Ձեռնոցների րանգը
Ջունէ որոշ մի անուն,
Ծիածանի մէջ միայն
Կը գտնուի այնպէս գոյն:

Տե՛ս, նորա գանգուր մազեր
Դէմքին ի՛նչ գեղ են բերում,
Ամբողջ անձը վարդի պէս
Անուշ հոտով է բուրում:

Աչքը զինուորած է ակնոցով,
(Բայց չէ՛ զրկուած նա լուսէն)
Այդ նշան է յատկապէս,
Որ ուսեալ է նա արդէն:

Նա արհեստից չէ՛ խօսում,
Դուք կարծում էք, չէ՛ գիտում,
Նա հերքում է բնաւին
Ամեն հեղինակութիւն:

Ներկայ դարուս գիտնականք
Համարումէ խենթ—խելառ,
Մտածումէ նոր գիւտով
Զարմացնել բոլոր աշխար:

Դէպի լուսինը ճանապար
Կամի յորդել օդային,
Թէ զբաղմունք իւր բազում
Նորան միջոց կը տային:

Բայց ի՞նչ էր նա մտածում
Արդեօք խեղճ հայի համար,
Նորա սիրտը շարժումէ՞ր
Ազգի վիճակը թշուառ:

Նորա համար ազգութիւն
Չունի ինչ նշանակութիւն.
Կօսմօպօլիտ է սրտով
Սիրումէ ողջ մարդկութիւն (??)

Նա սիրումէ կեանքի
Ճոխութիւնքը փառաւոր,
Հօր դաղած ոսկիներն
Են նորան նպաստաւոր:

Լուսաճաճանչ բալերի
Նա հերոսն է գեղեցիկ,
Եւ աղջկերանց ցնորքը,
Նոցա երազը քաղցրիկ:

Նա է զարդը թատրոնի,
Եւ դերուհեաց բարեկամ,
Որոնց ընծայք թանգագին
Պարգևումէր շատ անգամ:

Նա է պաշտպան Ֆերոսի
Մուզիկական ակումբում,
Ուր բաժակը մի բուբլով
Նա լիմօնատ է ըմպում:

Ազնուականաց կլուբում
Թղթախաղն է առաջին,
Հազարները նորա մօտ՝—
Այդ գումար է խիստ չնչին:

Նա առիւծն է տարփաւոր
Քնքուշ, գեղեցիկ սեռի,
Աստղկական հեշտութիւնք
Երբէք նրանից չեն հեռի:

Երբ նստում է նա կառքը
Սան—Սուսի գնայ ճաշել,—
(Նա երդուել է խիստ վաղուց
Հետեւակ ոտք չը մաշել,)

—Նա գնում է, իւր յետքից
Աղջկերանց խումբը սիրուն
Ըշտապում են, որպէս հունդ
Ձգում է սիրտը հաւերուն:

Երեկոյեան թողնում է
Կախարդական Սան—Սուսին,
Դէպ' Մուշտայիդ տանում է,
Իւր գեղեցիկ սիրուհին:

Անցանում է աննըկատ
Կէս գիշերից երկու ժամ,
Վայելում է նա այնտեղ
Իւր ընթրիքը համադամ:

Լուսաբացին հազիւ թէ
Յոգնած, դառնում է նա տուն,
Մինչ երկուքը ցերեկին
Վայելում են անուշ քուն:

Էլ ի՞նչ է գործում մեր հերոս,
Չունի՞ ուրիշ պարապմունք,
Իւր ճակատի քրտինքով
Ունի՞ արդեօք մի շահմունք:

Հը՛մ... ճակատի քրտինքը...
Այդ էր պակաս մեր ծոյլին,
Նա իւր անձը չ'ենթարկում
Ադամական անէծքին:

Իւր հօր նման բազարում
Կանգնել փոշի և քրտինք,
Ուսումնական դ ի պ լ օ մ ի ն
Համարէր մեծ նախատինք:

Եւ ազգային գործերը
Նորան չէին հետաքրքրում,
(Նա հայերէն չը գիտէր)
Նա ազգը չէր համակրում:

Նա ունէր իւր սրտումը
Միակ և նեղ նպատակ,
Թէ երբ մահն իւր հօրը
Կը տանէր մի օր հողի տակ:

Այնուհետև փառաւոր
Նա կ՚ապրէ, կեանք կը վարէ,
Ջի հօր դաղդած փողերու
Մխսելըն լաւ սովոր է։

Ցնծա՛, ցնծա՛, Հայաստան,
Ահա՛ կրթեալ քո որդին,
Թէև դեռ հին էշն է նա,
Բայց ներկուած է իւր մորթին . . .

Ոչինչ նրանից մի՛ յուսա,
Իմ նազելի Հայաստան,
Նա քո կեանքի դահիճն է,
Օտարացած, անպիտան . . .

ԱՆՀԱՄԲՈՅՐ ԳԱԶԱՆ

(Հայնէից)

Գազանները զսպողին
Տարաւ այրն իւր ամուսին,
Ասաց՝ „Կրէյցբերգ, բարեկամ,
„Օգնի՛ր ինձի այդ մասին,

„Դու զսպումես ամէհի
„Առիւծ, վագր, բորենի,
„Կոկորդիլոսը քո ձեռքում
„Հեզ է, որպէս աղաւնի։

„Խոնարհեցրու դու իմ կին
„Շնորհիւն ահեղ քո մտրակին,
„Ցոյց տուր, որ ես դու կախարդ,
„Իշխող գազանաց մոլեգին։“

Դիտեց Կրէյցբերգ անսասան
Կնոջ աչերը բազմազան,
Ձգեց մտրակն՝ ասելով՝
— „Անհամբոյր է այդ գազան։“

ԱՆՑԱԳԻՐ

Ոգիներու՛ աշխարհը
Շնորհ տարաւ մի պարոն,
Ստիքսէն անցնելու համար
Դիմեց դէպի Աքերոն,

„Ցոյց տո՛ւր, տեսնեմ անցագիրդ,“
Ասաց նաւապետ աստուած:
Պարոնը տուեց մի լայն թերթ,
Պապի կնքով դրոշմուած:

Ձգելով թերթի վերա
Իւր աչերը բոցավառ,
Սարսափելի Աքերոնն
Այդպէս արձակեց բարբառ՝—

„Նորոգութիւնից յետոյ
„Աստուածային Լուտերի
„Մենք էլ չենք հաւատում
„Այդպիսի կեղծ թղթերի:“

ՍԿԶԲՈՒՆՔ

ԿՐԹՈՒԹԵԱՆ

Արմենուհի, ազնիւ տիկին,
Քեզ մատաղ լինի իմ հոգին,
Երբ ստինքէն քո մայրական
Կը ծորես կաթն քո մանկիկին՝—
Դու ներշնչէ՛ նորա սրտում
Սէր հայրենեաց, սէրն իւր ազգին:

Երբ օրօրոց քո մանկիկին
Կը օրօրես, ազնիւ տիկին,
Երբ աչերուն նորա պարզ—ջինջ
Կը հրաւիրես քաղցրիկ նինջ՝—
Դու անուշիկ՝ այդ երգ քնքշիկ՝
Երգէ՛ նորան՝ ուշիկ ուշիկ—

„Նանի՛կ, նանի՛կ, իմ աչաց լոյս,
„Խեղճ հայրենեաց դու միակ յոյս,
„Նանի՛կ և շուտ մեծացի՛ր դու,
„Ընկած ազգիդ եղի՛ր ձեռնտու:
„Սիրէ՛ Հայաստան, սիրէ՛ հայ ազգը,
„Սիրէ՛ դու նորա ժպիտն, արտասուքը:“

Արմենուհի՛, ազնիւ տիկին,
Երբ նստած մօտ տաք օջախին,
Ընտանեկան քո շրջանում
Հէքաթ կասես քո երեխին,
Առասպելներ պառաւախօս
Մի՛ սերմանիր նորա գլխին:

Դու պատմի՛ր, տիկին, վէպը Հայ ազգին,
Նորա քաջերի՝ արութիւնք նախկին,
Նորա վատերի՝ գործն ամօթալի,
Բիւր չարիքներով և արիւնով լի:

ՀՈՎՈՒԻ ԵՐԳ

Ես Արարատայ սուրբ սարի վերա
Արածեցնումեմ, Տէր, իմ հօտերը,
Գիշեր ու ցերեկ քո տեսոյն կարօտ
Քեզ աղասումեն՝ իմ ոչխար, իմ հօտ:

Արդեօք կը լինի՞, որ քեզնի մի օր
Տեսնեմ ու սիրեմ, որպէս գթոտ հօր,
Արդեօք Դու մի օր կը լինի՞ որ գաս,
Իմ վրանումը բարի հիւր դառնաս:

Երբ Տէր, Դու մի օր ինձ մօտ հիւր կը գաս,
Եւ բարի ողջոյն սիրով ինձ կը տաս,
Ոտքերդ կը լուանամ ջրով պաղ, յստակ,
Քեզ հանգիստ կը տամ իմ վրանիս տակ:

Որպէս Աբրահամ ծերունի հայրիկ,
Կը հիւրասիրեմ քեզ, Տէր իմ քաղցրիկ,
Քեզ համար կը զոհեմ գառն անարատ,
Կը խնկեմ բուրումն ամբողջ Արարատ:

Կաթ, սեր, կարագով՝ կը կազմեմ սեղան,
Եւ ծաղիկներով կը զարդարեմ նորան,
Քեզ կը խմեցնեմ մեղրից օշարակ,
Կածեմ իմ սրինգով երգ քաղցրանուագ։

Թարմ շուշաններից—կարմիր, սպիտակ,
Քո գլխի համար կը հիւսեմ պսակ,
Ասրից իմ գործած փափուկ պատմուճան
Տէր, քեզ կընծայեմ—մեր սիրոյ նշան։

Ինձնից կը հեռանաս, Տէր, Դու զոհ սրտի,
„Դու բարեաւ մնաս, կասես, հեզ հովիւ.“
Քեզ կ'առաջնորդեմ մինչ լերան կատար,
Եւ համբուրելով կը դնեմ ճանապար։

Այց արա՛ մի օր քո սուրբ Արարատ,
Այց արա, ով Տէր, Տէ՛ր իմ գթառատ,
Ցի սկըսանէ դու հովիւներին
Նոր բարեկամ և պաշտպան վերին։

Միթէ Արարատայ հովիւը նոյնպէս
Չունի՞ այնքան շնորհ, որպէս քո Մովսէս
Մի՞թէ Աբրահամ, Իսահակ և Յակոբ,
Միայն սիրելի եղան քեզի մօտ։

ԻՄ ՎԱՐԴԸ

Այն մի պարտէզ էր, ճեմելիքներով՝
Լուռ և միայնակ՝ զբօսնումէի,
Թարմ ծաղիկների նախշուն զուներով
Խաղաղ հիացած, զմայլումէի։

Ուր Թռչունները մին մինից սիրուն
Հնչեցնումէին գեղեցիկ երգեր,
Կարծես, քերովբէք անթիւ և անհուն
Ընթերցումէին սրբազան գրքեր։

Այդ մի երազ էր . . . բայց կախարդական . . .
Թողէց իմ սրտում ցաւեր անհամար,
Կամ չար վհուկի թիլիսմ դիւթական,
Որ կրակ վառեց հոգոյս մէջ անմար . . .

Ինձ այն ժամանակ քանի՛ գեղեցիկ
Երևեցաւ նա այն ծառերի տակ,
Տխո՛ւր էր դէմքը, շրթունքը՝—մնջիկ,
Որպէս բախտազուրկ, սգաւոր հրեշտակ։

Գլխի ծամերն արձակած անփոյթ
Տատանվում էին թեթև զեփիւռէն.
Եւ կերպարանքի ամբողջ երևոյթ
Էր խորհրդական և աստուածեղէն:

Նա մօտեցաւ ինձ դանդաղ քայլերով:
Ո՛րքան վշտահար էին աչքերը . . .
Մի սիրտ դրաւող, ցաւալի ժպիտ
Արտափայլում էր երեսի վերա:

Նա գրկեց ինձի իւր թևիկներով,
Քանի՛ բերկրութիւն կար այն գրկի մէջ . . .
Ուր սէրը բոլոր իւր ցնորքներով
Բոցավառվում էր սուրբ հրով՝ անշէջ:

„Ահա այդ վարդը“ — Նա ինձ ցոյց տուեց. —
Է մեր վիճակի ստոյգ օրինակ . . .“
Նա այդպէս խօսեց, ինձ մենակ թողեց,
Ինքը չքացաւ այն ծառերի տակ:

Ես տեսայ վարդն, ի՜նչ քնքշիկ վարդ,
Դեռ նոր էր բացուել կոկոն ու սաղարթ,
Դեռ նոր էր օդը նորանից ծծում
Իւր եթերական անուշհոտութիւն:

Ես տեսայ վարդը . . . մի բու զզուելի
Դեղին ճանկերով էր նորան գրկել,
Եւ իւր պիղծ կուրծքին՝ — սև նախանձով լի,
Այն ճոխ ծաղիկն էր նա պինդ ճնշել . . .

Աչքերիս առջև մթնեց, սևացաւ,
Այն տեսարանը խռովեց իմ հոգին.
Սիրտս պաշարեց հազար ու մէկ ցաւ,
Գլուխս բորբոքեց մի կրակ ուժգին:

Երեսս շուռ տուի, շուտով անց կացայ,
Որ էլ չը տեսնեմ այնպիսի եղեռ,
Ոչ այնքան հեռու, այլ խիստ մերձակայ
Տեսայ ես մի այլ ցաւալի պատկեր. —

Մի անբախտ սոխակ — վարդի ջերմ երգակ,
Նորա թուփի մօտ թռչում էր մենակ,
Թռչոտում էր նա, լուռ մրմնջելով,
Ցօղնած թևիկները մեղմիկ շարժելով:

Նա աշխատում էր մօտենալ վարդին,
Բայց արգելում էր աւերակաց որդին, —
Այն բռնակալն, այն զզուելի բուն,
Այն գիշակերը, դժոխքով ահարկուն:

Սոխակը թռուվռաց, ճչաց, ճլվլաց,
Թափեց աչերէն շատ արտասուք, լաց,
Թոյլ թեւիկները կախեց, վայր ընկաւ,
Վշտալի կուրծքը փուշերուն զարկաւ . . .

Նոր ցցուեցաւ սրտումը անզօր,
„Վարդն“ էր սոխակի հառաչանք վերջին,—
Այդ իմ սիրածն էր, որ մինչեւ այսօր
Կրումէ իւր մէջ այն վէրքը խորին . . .
1865—

ԴԱՅԵԱԿ

„Մեր մէջ, հայրենի ծածքի տակ,
„Դեռ չէ ընկել եւ ոչ մի
„Մարդկային թարմ կեանքի
„Պտղաբեր սերմը յատակ։“
Նեկրասով.

Ժամն էր կէսօրուայ։ Շնչաւորքն արդէն
Կը հանգստանային արեւի տօթէն։
Խրճթի դրանը ճապուկ ուռենին
Թեւ թեւ տարերով սփռումէր հովանին։

Այնտեղ նստած էր պառաւ դայեակը,
Եւ օրօրումէր քնած զաւակը,
Մերթ յօրանջելով եւ մերթ նիրհելով
Եղանակումէր երգը՝ երգելով. —

„Քնի՛, քնի՛, սիրուն թռչնեակ,
Քնի՛ անուշ դու քնով,
Սրօրոցդ հանդարտ կը շարժեմ
Ես մայրական ջերմ սիրով։

„Քնի՛ր, քնի՛ր, անմեղ հրեշտակ,
Քնի՛ր անուշ դու քնով,
Քեզ ո՛ր կ'ասեմ, քաղցրի՛կ օր... օր...
Քեզ օր կ'երգեմ մեղմ ձայնով:

„Աչքդ փակի՛ր, իմ աղաւնեակ,
Այդ աչերդ վառվռուն,
Հանգիստ քունը վերադ կը փռէ
Իւր թեւիկները նախշուն:

„Աչքդ փակի՛ր, իմ սիրական,
Քնի՛ր, որ շուտ մեծանաս,
Քո վատաբախտ ծնողաց համար
Խելօք տղայ դու դառնաս:

„Երբ մեծացար, իմ նազելի,
Մանուկ եղար դու քնքուշ,
Տէրտէրի մօտ կ'ուղարկենք քեզ,
Սերտել տաղեր, երգ անուշ:

„Քեզ կը սորվեցնէ տէր հայրիկը՝
Սաղմոս, Ժամագիրք, Նարեկ,
Փառաբանել Աստծոյ անուն,
Ամբողջ գիշեր ու ցերեկ:

„Երբ որ ծաղկեն սեւ մորուքով
Այդ լուսափայլ քո թշեր,
Անապատը կ'ուղարկենք քեզ,
Ճգնիլ անդ օր ու գիշեր:

„Քնի՛ր, քնի՛ր, սիրուն որդեակ,
Քո մօր սրտին մխիթար,
Քնի՛ր և շուտ մեծացի՛ր դու,
Ինձ քո ձեռքով հողը տար:

„Այդ հրեշտակի սուրբ լեզուովդ
Աղօթք կարդայ ինձ վերա,
Տէրը շուտով կը լսէ քեզ
Իմ մեղքերու ճարն արա...

„Երբ որ դու մտնելու լինես
Կեանքի մէջ աշխարհային,
Պատուէ՛ ծերի դու ալեքը
Լսէ՛ նորա խրատին

„Պահպանի՛ր դու մեր պապերի
Օրէնքն ու աւանդութիւն,
Գլուխդ ծռէ քեզնից մեծին,
Զունենաս հպարտութիւն:

„Դոցանով դու կը փայլես
Օրեր հանգիստ և պայծառ,
Քնի՛, քնի՛, սիրուն Թռչնակ,
Քո մօր սրտին մխիթար:"

Եւ դայեակը օրօրելով
Քաղցրիկ երգը երգումէր,
Փոքրիկ աղան աչերը փակած
Անուշ քնով նիրհումէր:

Նոցա մօտէն դանդաղ քայլով
Անցաւ յոգնած ուղևոր,
Երիտասարդ էր հասակով,
Դէմքն՝—ազնիւ, փառաւոր:

Բայց պառաւի երգի ձայնը
Նորա սիրտը գրաւեց,
Նա ուռենու շուքի տակին
Հովանալու ըշտապեց:

—„Թո՛ղ ինձ, դայեակ, ես օրօրեմ,
Դու յոգնել ես, դու քնի՛:"—
„Բայց դու տղին նանիկ ասա՛,
Որ քնիցը չը զարթնի:"

—„Նանիկ կասեմ, դու հանգիստ կաց,
Բայց ոչ քո երգի նման:"
Պառաւը նիրհեց: Ուղևորը
Սկսեց օրօրել տղան.

„—Մի՛ հետևիր դու փթած, հնացած՝
Յիմար պապերիդ ծուռ օրինակին,
Մի՛ յարմարիր քո մանուկ ուժերը
Դու եռանդամբդ նոցա ճաշակին:

„—Զի նոցա անշարժ մտքի ծնունդը
Խաւար կեանքի է արտադրութիւն,
Ծաղկի՛ր նոր կեանքով, նոր հոգով, սրտով,
Տո՛ւր նորանց նոր ձև և նոր զօրութիւն:

„—Մի՛ խեղդիր քո մէջ ձգտողութիւնքը
Մարդկային ազատ յառաջդիմութեան,
Տո՛ւր նորանց աճել, ազատ զարգանալ,
Պահանջմունքի հետ ազատ բնութեան:

„—Առանց երկիւղի, համարձակ, վստահ,
Սորվէ՛ իրական կեանքի պէտքերին,
Գ ի տ ո ւ թ ի ւ ն, ա ր հ ե ս տ կոչվումեն նոքա,
Մի՛ զոհիր նորանց ախմար կրքերին.

„—Եւ հերոսական դառն առնլութեամբ
Նախապաշարմանց դու փշրէ շղթան,
Հեռու վաղեմի սուտ ցնորքներէն,
Պաշտպան կանգնի՛ր միշտ ճշմարտութեան։

„—Կը լինես, այո՛, մի նոր երեւոյթ
Քո անբախտացած, խեղճ հայրենիքին,
Կը տաս մի նոր զարկ, զա՛րկ դէպի յառաջ
Թոյլ—անշարժական նորա կեանքին։

„—Եւ այն ժամանակ . . . „—Ուղեւորն իւր
Չ՛աւարտեց խօսքը։ Յանկարծ երեխան
Ծըւաց ճչալով, զարթեցաւ քնէն։
Դայեակը կրկին օրօրեց նորան,
Կրկին հին երգը սկսաւ երգել,
Եւ իւր գոգի մէջ փափայել, գրկել։
1872.

ԱՆԿԵՂԾ
ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Սրբարանի անկիւնում
Նստած էր քաւողը մեղքի
Եւ միջնորդը մարդկութեան
Հետ աթոռոյն երկնքի։

Նա էր արդէն ալեւոր
Վարդապետ մի վանական,
Որ զոհել էր չար աշխարհ
Երկնքի արքայութեան։

Նորա առջեւ չոքած էր
Մանկահասակ մի տիկին
Եւ տալիս էր համարը
Դեռ նոր գործած իւր մեղքին՝—

„Մի քանի օրով առաջ՝
Մեր դրացի Բարբարան
Բերաւ իմ բարկութիւնը,
Հայհոյեցի ես նորան։ .

„Երբ որ անցաւ բարկութիւնս
Ես շատ ու շատ զղջացի,
Եւ գնացի նորա մօտ,
Ներողութիւն խնդրեցի։“

—„Օրհնեալ լինես, իմ դուստր,
Բաբբին տուեց պատասխան,
Այդպէս պէտք էր կատարել
Քեզ Աստուծոյ հրաման։

—„Միայն ասա՛, թէ էլ ի՞նչ
Մեղքեր գործել ես, տիկին,
Որ քեզ ես տամ թողութիւն,
Աղտից սրբուի քո հոգին։“

Քաջալերուած այդ յուսով,
Սրբախնդիր մեր տիկին,
Ցառաջ տարաւ խոստովանք,
Ունկն դնէր բաբբին՝ —

„Յախճապակեայ մի դաւաթ
Գնել էր իմ ամուսին,
Չինէական գեղեցիկ
Գործ էր այն թանգ կարասին։

„Մի օր անզգոյշ կերպով
Նորան գլխայ, կոտրեցի,
Երբ այրիկս հարց արաւ,
Կատուն կոտրեց, ասացի։

„Նա բարկացաւ խիստ սաստիկ
Եւ պատժեց խղճիկ կատուն,
Չի նորա մէջ իւր սուրճը
Խմում էր ամէն առաւօտուն։

„Բայց ինձ խիղճս տանջում է,
Որ կատուն իմ պատճառաւ,
Թէև ոչինչ մեղ չունէր,
Այնպէս սաստիկ ծեծ կերաւ։“

Տիկինը շատ այդպիսի
Մեղքեր ծանր և թեթև,
Անկեղծօրէն, պարզաբար
Թափում էր սուրբ հօր առջև։

Բայց գործել էր մի այլ մեղք,
Խոստովանելն էր դժուարին,
Չի պատկառանք և ամօթ
Կապ էին դրած լեզուին։

—„Ահա՛, դուստր, թէ այլեւս
փորձել է քեզ սատանան,
Զի ձեր բոլոր գաղտնիքը
Պէտք է գիտնայ քահանան:“

Իսկ մեր տիկնոջ ամօթխած
Դէմքը փոխուեցաւ իսկոյն,
Նորա ճերմակ թշերը
կարմիր ներկեց վարդի գոյն:

Բայց ուժգին էր նորա մէջ
կրօնքի եռանդը մոլի,
Քան թէ ամօթխածութեան
Պատկառանքը գովելի:

Այդ պատճառաւ նա թափեց
Գաղտնիքն իւր հոգուն,
Որոյ հետ խիստ կապակից
Էր յիշատակն անցելոյն:

Երբ որ սիրոյ կախարդը
Դեռ նոր թովել էր նորան,
Վրդովելով կուսական
Անմեղ սրտիկն աղջկան . . .

„Դեռ ես աղայ, նորահաս,
Աղջիկ էի իմ հօր տընում,
Մեր դրացի Իվանէն
Խելքս, միտքս էր իմ տանում:

„Նա սիրում էր ինձ, հայր սուրբ,
Ալատաբորբոք, ջերմ սիրով,
Մեր երկուսիս սրտերը
կապուած էր պինդ կապերով:

„Ուղիղն ասեմ ձեզ, հայր սուրբ,
(Զի Աստուծից չէ թաքուն)
Մինչեւ այսօր նորա սէր
Միշտ վառվում է իմ հոգում:

„Նա է մի սիրուն տղայ,
Սիրո՛ւն, որպէս հրեշտակ,
Թէեւ աղքատ ծնողաց
Է չքաւոր խեղճ զաւակ:

„Եւ մենք Աստուծոյ առջեւ
Ուխտ էինք դրած երկուքով,
Մեր սէրն անմահութեան
Կապել ոսկի պսակով:

„Բայց իմ լացն ու արտասուք.
Անցան իզուր, անօգուտ,
Չը կարացին մեղմացնել
Ծնողացս սիրտն անգութ:

„Նոքա սրտիս սիրական
Խլանէից զրկեցին
Եւ ինձ հարուստ, ծերունի,
Քոռ—Գէվօին տուեցին:

„Մինչև այսօր Քոռ—Գէվօն
Ինձ թւումէ որպէս դև,
Խլանէի սէրը քաղցր,
Պաշտելի է իմ առջև:

„Քանի այդ բռնակալն
Եղաւ խեղճիս ամուսին,
Էլ չը տեսայ ես նորան—
Իմ ցանկալի հին փեսին:

„Այդ նախանձոտ ծերուկն
Ինձ պահումէ վանդակում,
Նա դահիճ է, գութ չունի,
Ինձ այրումէ և մրկում:

„Ես էլ նորան գինու մէջ
Թմրեցուցիչ տուի դեղ,
Նա թուլացաւ և մնաց,
Որպէս մեռեալ տեղն ու տեղ:

„Գիշերային խոր պահուն
Ես դուրս եկայ մեր այգին,
Այնտեղ ինձ սպասումէր
Իմ սիրելին թանգագին:

„Աւելորդ է մանրամասն
Պատմել ձեզ, հայր պատուական,
Դուք ինքներդ լաւ գիտէք,
Թուլութիւնքն ամէն կնկան...

„Ես ձեզ բոլորը ճիշտ, անկեղծ
Խոստովան եղայ պարզաբար,
Ինչ ապաշխարանք ինձ վերա
Որ դնէք, դուք էք խաբար,

Միայն խնդրումեմ, հայր սուրբ,
Այդ ինձ համար չէ թեթև...
Մի՛ պատուիրէք Խլանէին
Չը սիրել այսուհետև:
1858.

ՆԱ ԻՆՁ ԽԱԲԵ՜Ց

Էլ չեմ հաւատայ ես քո խօսքերին,
Խաբեբա՛յ ես դու, սիրուն օրիորդ,
Դու ինձ խոստացար յաւիտեան սիրել,
Ուրիշին չառնել քո սիրոյն հաղորդ:

Քանի՞ երդումներ ինձ դու երդուեցիր,
Երկինքն ու գետինք կոչեցիր վկայ,
Մինչեւ մեր մահը . . . դու ուխտ կնքեցիր,
Բայց խօսքերիդ մէջ ճշտութիւն չը կայ:

Էլ չեմ հաւատայ ես քո խօսքերին,
Իզուր մի՛ թափիր աչքիդ արտասուք,
Ցնո՛րք է ձեր սէրը՝ միշտ փոփոխական,
Յիմար կրքերի խաղալիկ էք դուք:

Ա՞յդ էր քո խոստմունք… անխի՛ղճ ուխտազանց,
Սո՛ւտ է քո երդում, սո՛ւտ են քո խօսքեր,
Ու ես սխալուած էի չափազանց,
Որ զոհեցի քեզ իմ ազնիւ կրքեր:

Ես զոհեցի քեզ բոցեր սրբազան
Սիրոյ կրակով խնկուած իմ սրտին,
Իսկ դու քո սիրտը տուիր, ով Նազան,
Ինձանից գաղտնի այլ տղամարդին:

1865.

ԳԱՌԱԻ ՕՐԻՈՐԴ

„Անցանումե՛ն միշտ սև օրեր,
Անդառնալի . . . սրնթաց . . .
Իմ աչքերի արտասուքը
Չէ՛ չորանում, է միշտ թաց:

„Ժամանակը ձայն է տալիս՝—
Դէ՛, շուտ արա՛, հնացա՛ր . . .
Աննկատելի քո քայլերով
Գերեզմանին մօտեցար:

„Վա՜յ իմ գլխին . . . անցան օրերս . . .
Դեռ չեմ գտել ոչ մի սէր,
Մինչև այսօր իմ կեանքին
Չեմ լծորդել մի ընկեր:

„Այլ որպէս մի խեղճ տատրակ,
Որ չունէր իւր փարուժան,
Մնաց ինձի միշտ լաց լինել
Իմ ողբալի բախտ տաժան . . .
1857.

ԱՆԻ

(Տեսիլք)

Ա.

Ես քնած էի անհանգիստ քնով,
Երբ երազների գողտրիկ դիցուհին՝
Իւր կախարդական, օդեղէն կառքով՝
Տարաւ անծանօթ ինձ կողմն աշխարհին:

Այնտեղ արևն այնպէս անաւոր
Ճառագայթումէր թոյլ թոյլ ամպերէն,
Աղօտ էր լոյսը, ջերմութիւնն՝—անզօր,
Կարծես, տխրութիւն թափումէր վերէն:

Ուր ծաղիկներն էլ չէին ժպտում,
Եւ մանիշակն՝ այնպէս լուռ, տրտում,
Իւր մարգարտացօղ, կապուտ աչերէն՝
Վշտալի կերպով արտասուք էր ցայտում:

Գերեզմաններով պատած էր դաշտը,
Ուր ողբանուէր, ճապուկ ուռենին,
Գլուխը ծռած, (խոցին էր վիշտը . . .)
Տարածումէր իւր սառը հովանին

Ուռենու ոստին նստած սոխակը,
Որպէս սգաւոր ոգի գերբնական,
Մրմնջումէր իւր՝ թոյլ, մեղմիկ երգը,
Երգը ցաւալի և դամբանական:

Այնտեղ մարդկային տեսայ էակներ,—
Գունաթափ դէմքով, որպէս գիակներ,
—Մէջքները ծռած, գլուխները թեքած,
կարծես, սև բախտի էին զաւակներ:

Գիշերաշրջիկ ուրուականի պէս
Դանդաղ քայլերով շարժվումէին նոքա,
(Այդ մեռելային էր մի ճիշտ հանդէս)
Նոցա երեսին բնաւ կեանք չը կայ:

Իսկ բռնակալի մահացու ձեռքը
Դրոշմել էր նոցա դժբախտ ճակատին՝
Դառն ստրկութեան խորին կնիքը,
Քամե՛լ էր արիւնը վշտահար սրտին . . .

Բ.

Գիշեր էր լռին: Ցանջեան լապտերը
Վաղուց ծածկուած էր թուխ ամպերու տակ,
Իսկ կիսալուսնի գունատ պատկերը
Մինակ լողումէր երկնքում յստակ:

Կախարդուած քաղաք . . . մեծ, լայնատարած,
Աւերակ էր նա և անմարդաբնակ.
կարծես, վրէժխնդիր բարկացաւ Աստուած
Եւ թափեց այնտեղ կայծակ և կրակ:

Փլատակների մէջ՝ սփռուած անհուն՝
Թափառումէի՝ տխուր, միայնակ,
Խոր գիշերային լռութեան պահուն,
Հին հին դարերի յիշէի ժամանակ:

Մի ընկած ազգի հզօր գաւազան
Իշխումէր այնտեղ: Բայց ո՞ւր է այժմ:
—Փըշրե՜ց նորան թշնամին գազան,
Մնացին բեկորքն այն հին փառքերի . . .

Իւր բնակիչները գնացին գերի,
Դէպի հեռաւոր երկրներ անցան,
Կորցրին ազգային բոլոր սրբութիւնք,
Օտարներու մէջ եղան ցիրուցան:

Ուր որ Աստուծոյ կանգնած էր սրբարան,
Ուր բնակվումէին երկնքի որդիք,
Ուր կարդացվումէր սուրբ Աւետարան,
Վերհնչումէին քաղցրիկ մեղեդիք՝—

Այժմ չէր լսւում էլ շունչ մարդկային,
Ուր խռպոտ ձայնով կանչումէր բուն,
կամ մանչելով՝ սոված բորենին
Քարշումէր որսը, բերում դէպ' իւր բոյն:

Ուր որ հոյակապ էին արքունիք,
Երգումէր գուսան, փրփրէին գինիք,
Ուր ասպետները քաղէին համբոյր,
Եւ պարումէին սիրուն կանայք՝—

Այժմ օձերը, կրիան, մողէս,
փորել էին այնտեղ իւրեանց խոր որջեր,
կամ թաչկոտելով կայտառումէ աղուէս,
կամ մանչումէին գայլեր և արջեր:

Ուր որ կանգնած էր տաճար սրբազան,
Նորա սիւները, շինուած գեղեցիկ,
Միշտ տօն օրերին ծաղկովք զանազան
Զարդարումէին հարսն ու աղջիկ.—

Այժմ մամռապատ ընկած են գետին,
փուշն ու տատասկը նորանց խեղդեցին,
Վայրի բաղեղը գերութեան շղթան
փաթըլթել է նոցա վեհ պարանոցին:

Դ.

Տխուր, մռայլոտ՝ թիկն էր տուած
Մի ընկած սիւնի թեքուած խոյակին,
Ա՜խ, որքան ցաւեր տանջէին, Աստուած,
Այն րոպէում իմ սիրտն ու հոգին . . .

Եւ արտասուքը հեղեղի նման
Տաք կաթիլներով՝ թափւումէ՛ր գետին,
Հինաւուրց փառքի թրջումէր փոշին,
Մարումէր բոցը բորբոքած սրտին:

Մութ, կիսակործան տաճարի յետքից
Շարժուեց մի ստուեր, որպէս ուրուական,
Սարսափի նման ինձ սոսկում ազդեց.
Այն երեւոյթն էր խիստ գերբնական:

Նա մօտեցաւ ինձ մեղմիկ քայլերով,
Ձեռքին բռնած էր փոքրիկ մի լապտեր,
Եւ լապտերիկի մայլոտ լուսով
Փայլումէր նորա գունաթափ պատկեր:

Տխուր էր դէմքը՝—նիհար, վշտահար,
Շիջած էր բոցը պայծառ աչերուն,
Բայց դարձեալ քանի՛ վսեմ գեղեցկութիւն
Կար այն դէմքի մէջ՝—այնպէս մեղմ, գերուն

Աւերակների էր նա միակ Ոգին,
Եւ սգազգեստն, որ ունէր հագին՝
Իւր ալիքաւոր թուխ—թուխ ծալքերով,
Թափվումէր շիտակ՝ բարձր հասակին:

„Հերի՛ք, այցելու, ասաց այն Ոգին,
Ի՞նչու լացումես այդպէս վշտագին,
Իմ էլ արտասուաց առատ կաթիլներ
Ծծեցին բեկորքն այդ մեծ քաղաքին:

„Բայց հանգստացի՛ր, իմ խօսքը լսէ՛,
Կորուստը մի՞թէ լացով յետ կը գայ,
Շէնքը կը քանդուի, կարգն այդպէս է,
Աշխարհս աւերման է միշտ ենթակայ:

„Տե՛ս, այդ քաղաքն է՝ գեղեցիկն Անի,
Թագն ու պսակը սուրբ Հայաստանի.
Դորանով մի օր կը պարծենար Շիրակ,
Բայց այժմ նա լացումէ նորա աւերակ:

„Կար մի ժամանակ հզօր Բագրատունիք
Ունէին այստեղ շքեղ արքունիք,
Ուր Աշոտ, Սմբատ, արքայն Շահնշահ
Տարածումէին միշտ սարսափ և ահ:

„Եւ իւր կենսատու ակունքէն Ախուրեան
Ոռոգումէր դաշտեր անհուն, անսահման,
Գո՛հ էր միշտն Աստծոյ բարիքներով,
Առատ ու լի էր նորա ճոխ սեղան:

„Զուարճանումէր Անին, որպէս թագուհի,
Իւր հարիւրաւոր հարուստ գիւղերով,
Որպէս լուսինը՝—զարդն աշխարհի
Վառվումէ, պատած փայլուն աստղերով:

„Երբ Բագրատունեան վեհ թագի լոյսը
Սակաւ առ սակաւ մարեց, նսեմացաւ,
Յայնժամ և Անին՝—ողջախոհ կոյսը՝
Բիւր գազանների նախատինք դարձաւ . . .

„Երկպառակութիւնքը՝ մի կողմից ներքին,
Բարբարոսութիւնքը՝ թշնամեաց արտաքին՝
Թունդ, մրրկածուփ փոթորկի նման՝
Ցրուեցին շէնքը սիրուն քաղաքին:

„Էլ չը կար Վահրամ՝ քաջ Պահլաւունին,
Որ պաշտպանէր իւր սիրելի Անին.
Եւ հզօր Արծիւը՝ մէջ Յունաց վանդակին
Մաշվումէր, լսելով փառանց հայրենիքին (*):

(*) Գագիկ, վերջին թագաւորը տանն Բագրատունի, որ Վեստ Սարգսի դաւաճանութեամբ մատնուեցաւ

„Եւ ամէն կողմից անգութ թշնամիք՝
Թուրք, Պարսիկ, Թաթար և Արաբացիք,
Մինը միւսի յետքից, միշտ յաջորդաբար
Յարձակվում էին նորա անդադար:

„Եւ հազարաւոր նորահաս տղամարդ,
Առոյգ պատանի, քաջ երիտասարդ,
Անմեղ—մատղերամ խումբը կոյսերին՝
Զոհ եղան նոցա անողորմ սրին:

„Նորա չը խնայեցին ծերի ալիքին,
Ոչ որդեկորոյս մօրը լալիքին,
Մորթեցին տղան դայեակի գրկում,
Չը խղճացին նորա դառն արտասուքին:

„Դեռ չէր կշտացել այն անգութ դաղան,
Նա շինել տուեց մի մեծ աւաղան,
Հայ մանուկների լեցրուց արիւնով,
Մտաւ նորա մէջ, լողցաւ նորանով . . . (**)

Յունաց կայսեր՝ և մինչև 30 տարի աքսորուած մնաց Յունաստանում: (**) Այդ սարսափելի, դեռ պատմութեան մէջ օրինակը չը տեսնուած, բարբարոսութիւնը գործեց պարսից Ալփասլան թագաւորը, որպէս պատմում է Վարդան:

„Ա՛խ, քանի՛ անգամ անողորմ ձեռքը
Արնով ողողեց այդ անբախտ քաղաքը,
Նորա հարստութիւնքն եղան կողոպուտ,
Թալանեց բոլորը թշնամին անգութ:

„Նորա բնակիչքն՝ եղան ցիրուցան,
Կորան աղգովին և ոչնչացան,
Ոմանք գերի գնացին դէպի Խուժաստան,
Ոմանք գաղթեցին դէպի Լեհաստան:

„Նորա ժողովուրդն, արտորայք և գիւղ
Անգթութեան զոհ եղան, փչացան,
Եւ ճարտարութեան, արհեստի պտուղ՝—
Տաճարք, արքունիք՝ ողջ մնկիր դարձան:

„Ի՞նչ էր պատճառը:—Թող պատմաբանը՝
Կրօնքի մոլեռանդ և կոյր պաշտպանը,
Թո՛ղ կարծի բնակչաց մեղքի պատճառաւ
Բարկացաւ Աստուած, վրէժխնդիր եղաւ:

„Եւ թո՛ղ ռամիկն ասէ տակաւին՝
„Թէ մենք ատեցինք սուրբերն ազգովին,
Չը յարգեցինք մեր՝ մայր եկեղեցին,
Մեղքի անիծեց սուրբ Երզնկացին:“ (*)

(*) Անիի վերջին կործանման և ամայանալու պատճառը յայտնի չէ պատմագրութիւնից, բայց Ղազար

„Յնո՜րք են դոքա։ Հայը բարեպաշտ
Միշտ եղել է՝ և է՝ երկնքի հետ հաշտ։
Նա պատուել է իւր՝ տէրտէր, տիրացուն,
Հաւատարիմ էր իւր եկեղեցուն։

„Անին հազար ու մէկ ունէր ժամատուն,
Եթէ ունենար՝ քանի մի վարժատուն,
Նա չէր կործանվի, նորա հին փառքը
Գուցէ կը մնար մինչ այժմ հաստատուն։

„Պակաս էր նորան՝ ուսում, գիտութիւն,
Իւր ժողովուրդը չունէր ազատութիւն,
Ճնշումէր նորանց արքայի շղթան,
Չը կար իրաւունք, օրէնք արդարութեան։

„Զո՜ւր ես լաց լինում, վերջացրուց Ոգին,
Դու այդ հողաբլուր և տխուր աւերակը,
Գնա, լաց եղիր, աւերակն ազգին,
Եւ նորոգեցէք նորա վիճակը,

Զահկեցին համարումէ մեծ երկրաշարժը Յովհան Երզնկացու անէծքից, որոյ առիթով ժողովուրդը ցրուեցաւ։ Զարմանալին այն է, որ այդ մնահաւատութիւնը տիրումէ մինչև այսօր, ամէն հայ համարումէ Անին մի անիծուած քաղաք։

„Մարդկային ազատ զարգացման վերա
Հաստատուն հիմքը դրեցէք նորա,
Տուէք նոր կեանք նորա գոյութեան,
Թօթափեցէք խեղդող փոշին հնութեան։“

Լուսինը մտաւ թուխ ամպերի տակ,
Խաւարը պատեց երկինքը լռակ.
Եւ Ոգին դարձեալ ուշիկ քայլերով
Գնաց, հեռացաւ, արտասուքը ծածկելով․․․

1869—Անի։

ՎԵՐՋԻՆ ԵՐԳ

Զո՜ւր թղթեր մի՛ մրոտէ,
Հայոց անբախտ հեղինակ,
Թէ չը կամիս քաղցած մեռնել,
Կեանք վարէ այլ եղանակ:

Զո՜ւր ես մաշում աչքիդ լոյս,
Զո՜ւր է, դու ինձ հաւատա,
Այդ սրբազան քո ճգանց
Ո՞վ մի սեւ փող գին կը տայ:

Թող տո՜ւր, եղբայր, քեզ ի՞նչ փոյթ,
Հոգսը հոգալ ողջ ազգին,
Նորա օգտին զոհ բերել
Կեանքիդ բոպէքն անգին:

Թող նա գնայ իւր ճամբով,
Եւ ի՞նչ պէտք է քո խրատ,
Թէ այդ ուղին տանումէ
Դէպի կորստեան խորխորատ:

Թո՛ղ կղերի փառասէր,
Արծաթամոլ, սեւ խուժան՝
Ազգի ծուծը ծծելով՝
Կեանք վայելեն անարժան:

Թո՛ղ տուր մարդիք անպիտան,
Անգործ, տգէտ, անվաստակ՝
Հանգիստ ապրուստ որսալու՝
Պատսպարուին փիլոնի տակ:

Թո՛ղ սրբապիղծ իւր ձեռքով
Ոսկերիչ Իսրայէլացին
Մեր վանքերի անօթները
Թո՛ղ զոհէ իւր հալոցին:

Թո՛ղ տուր պրօտ, կաթօլիկ
Մեր մէջ հերձուած սերմանեն,
Ազգի կապերը խզելով,
Եղբայր եղբօրից բաժանեն:

Եւ մեր անհոգ հովիւներ՝ —
Սուրբ պաշտօնին անպիտան՝ —
Գայլի դաւը գողնալուն
Միշտ սառնասիրտ մտիկ տան:

Թո՛ղ ամբոխը կուրօրէն
Խաւարի մէջ խարխափէ,
Մոլորցնողի կեղծ լոյսը
Նորան շլացնէ ու խաբէ:

Թո՛ղ Թաւալվի ցեխի մէջ
Նա մինչև վերջն իւր վըզին,
Այդ միայն է ցանկալի
Աղտեղասէր, գարշ խոզին:

Թող ազգը միջին դարու
Մահահրաւէր քնի մէջ,
Իւր հին երազն երազէ,
Դեռ քըքրէ կրօնքի վէճ:

Թո՛ղ նա քնէն չը զարթնի,
Մի՛ վրդովիր դու նորան,
Թէև այդ քունը տանումէ
Դէպի անշարժ գերեզման:

Թո՛ղ մեր կանայք, օրիորդք,
Սրտով զոհուին մօդային,
Զուրկ ճիշտ կրթութիւնից
Կեանք վարեն օդային:

Եւ ամուսնին պարտքի մէջ
Թաղեն մինչ վերջ բօղազին,
Նորա ձեռքի վաստակը
Թափեն մ օ դ ն ի մ ա գ ա զ ի ն:

Թո՛ղ տուր մեր նոր սերունդը,
Թողեալ մայրենի ստինք,
Օտար կաթնով սնանին,
Ազգը համարեն նախատինք:

Օտար հոգւով կրթուին
Եւ սիրեն օտարուհիք,
Օտար ազգերի համար
Բազմացնեն շատ որդիք:

Թո՛ղ տուր խղճուկ գիւղացին՝—
Այդ ստրուկը, այդ գերին,
Կարօտ օրական հացին՝—
Մշակէ հողն իւր աղային

Նորա որդիքը կիսամերկ,
Բախտախնդիր, սովատանջ,
Պանդուխտ աշխարհ յածելով,
Թող կրեն չարիք աննահանջ:

Թո՛ղ հարուստները մամոնի
Կուռքի ոտքերը լիզեն,
Ազգը թողնեն անխնամ,
Ոսկու ամբարներ դիզեն:

Թո՛ղ դաւաճան վասալներ
Վայելեն ճոխ ապրուստ,
Պատուի և փառքի համար
Ազգը մատնեն ի կորուստ:

Թո՛ղ հոգևոր հայրիկը
Եւ ագահ հոգաբարձուն՝
Իրեանց շահերին մատնեն՝
Մեր դպրոցներ, վարժատուն:

Թո՛ղ Այսմաւուրք և ճաշոց
Տրվէ մանկան մեր յիմար,
Ոչ արհեստի գրքերը
Բազմացնէ ազգի համար:

Ո՛չ օրագիրք, լրագիրք
Նորա աչքը բաց անեն,
Եւ գիտութեան սերմերը
Նորա սրտումը ցանեն.

Թո՛ղ տուր, եղբայր, քո խրատ,
Հայը կամակոր, յամառ է,
Քո գրուածքներն ու քարոզ
Անապատի բարբառ է:

Հայը սիրում է գովեստ—
Փաղաքշական, կեղծաւոր,
Մոլութիւնքը մերկացնողին
Է թշնամի վտանգաւոր:

Ճշմարտութիւնն՝—որպէս լոյս՝
Հիւանդոտ աչքը կը ծակէ,
Ճշմարտութիւն քարոզողի
Վարձը՝—փ շ ե ա յ պ ս ա կ է…
1873—Թիֆլիս.

ՑԱՆԿ

Նուէր.

Ընթերցողներին.

Սօֆի 1

Մշակ 27

Ե—րդ դարու հայոց աշխարհի տիկինները
և Եղիշէ 37

Նինօ. 51

Արայի պատերազմի դաշտում 75

Կտակ 91

Հայ օրիորդ 105

Կիրթ ճաշակ 108

Շուշան 112

Օսան 116

Մօդայ 119

Թաղուցած գանձ 122

Խորհրդական ճրագ 124

Որբ օրիորդ 127

Յիշողութիւնք 130

Կեանքի հոսանք 132

Աուտօ—դա—ֆէ. 133

Օրօրոցի երգը զէյթունցի հայ տիկնոջ ... 138

Իսրայէլը Բաբելոնում.. 142

Գերին Աւարայրի.. 144

Արտաւազդ 148

Պանդորայի տուփը 153

Փող 157

Բախտ 159

Ողբը զէյթունցի կնոջ 163

Միութիւն 166

Երազ 169

Ո՞ւր է իմ հայրենիքը 172

Վտակ 182

Մոգպետ 185

Խրատ հայ բանաստեղծին 194

Թիֆլիսեցու յիշողութիւններից 195

Շռայլութիւն (թիֆլիսեցու գանգատներ)... 201

Պօետ 214

Սէր 216

Հայի կաղանդը 227

Գերեզմանք 232

Գարուն 234

Քէֆ 238

Ոսկու մաջան 240

Խրատ 242

Ազգուրայ 245
Դժոխքի կապալառուք 250
Կոյր հովիւներ 258
Նուէր N . . . ի յիշատակին 259
Մեր քաղաքացի Պետօն 261
Մեր հերոսը 267
Անհամբոյր գազան 275
Անցագիր 276
Սկզբունք կրթութեան 277
Հովուի երգ 279
Իմ վարդը 281
Դայեակ 285
Անկեղծ խոստովանութիւն 291
Նա ինձ խաբեց... 298
Պառաւ օրիորդ 300
Անի. 301
Վերջին երգ 312

Վրիպակների համար մենք առանձին ցուցակ չը գրեցինք, եթէ մնացած լինեն սխալներ, թող ների ընթերցողը մեր աչքերի տկար տեսութեանը:

Ծան. հեղ.